ԶԵԿՈՒՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2019-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ

2022 թվականին իրականացման ենթակա գործողությունների մշտադիտարկման արդյունքների

* Առաջին նախագծի մշակման աշխատանքները ավարտվել են 2023 թվականի մայիսի 10-ին, շրջանառության մեջ է դրվել մայիսի 11-ից
* Վերջնական տարբերակը մշակվել է 2023 թվականի հունիսի 28-ին, հրապարակվել է հուլիսի 3-ին

ԵՐԵՎԱՆ-2023 ©

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հապավումների ցանկ 6

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 7

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 9

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2019-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ 15

ՈԼՈՐՏ 1. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ 16

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ձևավորում և բնականոն գործունեության ապահովում 16

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2. Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման, քննության գործառույթներով օժտված և անկախության բավարար երաշխիքներ ունեցող հակակոռուպցիոն իրավապահ մարմնի՝ Հակակոռուպցիոն կոմիտեի ձևավորում և բնականոն գործունեության ապահովում 18

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3. Հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանի ստեղծում և հակակոռուպցիոն գործերով մասնագիտացված քննության ապահովում 19

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4. ՀՀ գլխավոր դատախազությունում կոռուպցիոն հանցագործությունների քննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող ստորաբաժանման ստեղծում 21

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 5. Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման համար պատասխանատու մարմինների, ՀԿ-ների կարողությունների զարգացում 22

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 6. Դոնորների համակարգման մեխանիզմի բնականոն աշխատանքի ապահովում 24

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 7. ԱԺ-ի աշխատակազմում, Վարչապետի աշխատակազմում, անկախ և ինքնավար մարմիններում, քննչական մարմիններում, Դատական դեպարտամենտում, պետական կառավարման համակարգի մարմիններում, ՏԻՄ-երում հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների (անձ կամ ստորաբաժանում) նշանակում և գործառույթների ամրագրում համապատասխան փաստաթղթերում 25

ՈԼՈՐՏ 2. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ 28

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 8. Կոռուպցիոն ռիսկերի գնահատման հիման վրա ոլորտային միջոցառումների ծրագրի մշակում 28

ՈԼՈՐՏ 2.1. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ (բարեվարքություն) 29

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 9. Պետական պաշտոններում նշանակման ենթակա անձանց, Բարձրագույն դատական խորհրդի անդամների, դատավորների, այդ թվում՝ Սահմանադրական դատարանի, թեկնածուների, դատախազների թեկնածուների, քննիչների, առաջխաղացման ցուցակներում ընդգրկված քննիչների, դատախազների և դատավորների, ինչպես նաև ինքնավար և անկախ մարմինների անդամների թեկնածուների բարեվարքության կանոնների պահպանման նկատմամբ հսկողության իրականացման կառուցակարգերի ձևավորում 29

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 10. «Հանրային ծառայության մասին» և «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքների կատարման արդյունավետության գնահատում 32

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 11. «Հանրային ծառայության մասին» օրենքին համապատասխան էթիկայի հանձնաժողովների ու ԲՀԿ-ների ինստիտուտի ձևավորում և գործարկում 33

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 12. «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված՝ հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնների, քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնների, պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների սահմանում.....34

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 13. Պատգամավորի, քննիչի, վարքագծի կանոնների սահմանում, դատախազների և դատավորների վարքագծի կանոնների վերանայում.....36

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 14. Քաղաքացիական ծառայության ոլորտում արժանիքահեն համակարգի ապահովում.....37

ՈԼՈՐՏ 2. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ 39

2.2. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ (հայտարարագրում, նվերներ, կարգավորման ազդեցության գնահատում, գնումներ, մասնավոր ոլորտ, իրական շահառուներ, տնտեսական մրցակցության պաշտպանություն) 39

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 15. Հակակոռուպցիոն կարգավորման ազդեցության գնահատման համակարգի արդյունավետության բարձրացում 39

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 16. Գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրման համակարգի կատարելագործում, ծախսերի հայտարարագրման համակարգի ներդրում.....41

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 17. Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների անհամատեղելիության պահանջների, շահերի բախման իրավիճակների վերաբերյալ կարգավորումների հստակեցում 42

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 18. Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնական պարտականությունների իրականացման հետ կապված նվերների ինստիտուտի կատարելագործում և դրա նկատմամբ վերահսկողության գործիքակազմի սահմանում 44

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 19. Կուսակցությունների ֆինանսավորման թափանցիկության ապահովում, Հայաստանի Հանրապետությունում լոբբիստական գործունեության օրենսդրական կարգավորման նպատակահարմարության դիտարկում 46

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 20. Գործարար ոլորտում հակակոռուպցիոն համապատասխանության պահանջների ընդունման խթանում 47

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 21. Գնումների ոլորտի բարելավում 48

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 22. Իրավաբանական անձանց իրական շահառուների ինստիտուտի ներդրում.....50

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 23. Տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտի վերաբերյալ օրենսդրության կատարելագործում 51

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 24. Իրավական ակտերի նախագծերի մշակման գործընթացին հասարակության մասնակցայնության ապահովման արդյունավետության բարձրացում 52

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 25. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից քաղաքացիներին առավել շատ մատուցվող ծառայությունների վերաբերյալ մատչելի տեղեկատվություն ստանալու գործիքակազմի ներդրում 53

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 26. Ազդարարման համակարգի շարունակական կատարելագործում և ազդարարների պաշտպանության օրենսդրական մեխանիզմների բարելավում.....53

ՈԼՈՐՏ 3. ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ 56

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 27. ՀՀ քրեական օրենսգրքով կոռուպցիոն հանցագործությունների շրջանակի հստակեցում.....56

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 28. Քրեական օրենսգրքում ամրագրված կոռուպցիոն հանցագործությունների հանցակազմերի միջազգային չափանիշների համապատասխանության հարցի ուսումնասիրություն, կոռուպցիոն հանցագործությունները միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով կարգավորումների սահմանում նոր Քրեական օրենսգրքով.....56

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 29. Կոռուպցիոն առանձին հանցագործությունների, այդ թվում՝ ապօրինի հարստացման, քննության մեթոդիկայի մշակում, մշակված մեթոդիկայի հիման վրա քրեական հետապնդման մարմինների վերապատրաստում.....58

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 30. Կոռուպցիոն հանցագործությունների մասին վիճակագրության համալրում.....60

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 31. Պետական մարմինների էլեկտրոնային բազաներին քրեական հետապնդման մարմինների հասանելիության ապահովում էլեկտրոնային հարցման եղանակով 61

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 32. Բանկային հաշիվների կենտրոնացված ռեեստրի ստեղծում 63

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 33. Կոռուպցիոն հանցագործությունների քննության և բացահայտման շրջանակում միջազգային համագործակցության ամրապնդում 63

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 34. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված կառուցակարգերի ստեղծում.....64

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 35. Նոր Քրեական օրենսգրքի նախագծով Կոռուպցիոն իրավախախտումների համար իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտի ներդրում 65

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 36. «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքի 30-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորումների և իրավակիրառ պրակտիկային համապատասխանեցման նախադրյալների ստեղծում 67

ՈԼՈՐՏ 4. ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄ ԵՎ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ 69

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 37. Հանրային իրազեկման արշավի ծրագրի մշակում, հաստատում և իրականացում.....69

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 38. «Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» ուսուցման համար ոչ պարտադիր դասընթացի ներառում բոլոր բարձրագույն ուսումնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների դասավանդման մոդուլներում 70

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 39. Ավագ դպրոցում հակակոռուպցիոն կրթության իրականացում.....71

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 40. Քաղաքացիական ծառայության համակարգում իրականացվող բարեփոխումների վերաբերյալ իրազեկվածության բարձրացում, վերապատրաստումների իրականացում՝ այդ թվում կոռուպցիայի կանխարգելման, բարեվարքության թեմայով.....72

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 41. Քաղաքացիական ծառայողների համար հեռավար ուսուցման մոդուլների մշակում.....74

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 42. Թափուր պաշտոնների համալրման մրցույթների թեստավորման փուլի օնլայն հեռարձակում.....75

ՈԼՈՐՏ 5. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ, ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԴՐԱ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ.....77

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 43. Կոռուպցիայի, հանրային վստահության մակարդակի և հակակոռուպցիոն միջոցառումների ազդեցության վերաբերյալ պարբերական հարցումների իրականացում հասարակության շրջանում, հարցումների արդյունքների հրապարակում 77

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....79

1. ՄԵԹՈԴԱԿԱՆ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ..... 79
2. ԱՌԱՋԱՐԿՆԵՐ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ..... 80
3. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ..... 89
4. ՎԵՐՋՆԱԿԱՆ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ 89

ՀԱՎԵԼՎԱԾ 1. 2023-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱՋՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ.....90

Հապավումների ցանկ

ԱԺ	Ազգային ժողով
ԱՄՆ ՄԶԳ	Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալություն
ԱՆ	Արդարադատության նախարարություն
ԲԴԽ	Բարձրագույն դատական խորհուրդ
ԲՀԿ	Բարեվարքության հարցերով կազմակերպիչ
ԲՏԱՆ	Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն
ԲՈՒՀ	Բարձրագույն ուսումնական հաստատություն
ԵՄ	Եվրոպական միություն
ԵԽ	Եվրոպայի խորհուրդ
ԶԼՄ	Զանգվածային լրատվության միջոց
ԻՀԱ	Իրավաբանների հայկական ասոցիացիա
ԿԱԳ	Կարգավորման ազդեցության գնահատում
ԿԳՄՄՆ	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ԿԸՀ	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
ԿԿՀ	Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով
ՀԾ	Հանրային ծառայություն
ՀԾՄ	Հանրային ծառայության մասին
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀԿԿ	Հակակոռուպցիոն կոմիտե
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՄԱԶԾ	ՄԱԿ-ի զարգացման ծրագիր
ՄԺԾԾ	Միջնաժամկետ ծախսերի ծրագիր
ՄԻՊ	Մարդու իրավունքների պաշտպան
ՄՄՈՒՀ	Միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն
ՄՊՀ	Մրցակցության պաշտպանության հանձնաժողով
ՆԳՆ	Ներքին գործերի նախարարություն
ՆՄՄԿՈՒՀ	Նախնական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն
ՊԵԿ	Պետական եկամուտների կոմիտե
ՍԴ	Սահմանադրական դատարան
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
ՔԾ	Քաղաքացիական ծառայություն
ՔԾԳ	Քաղաքացիական ծառայության գրասենյակ
ՔԾՄ	Քաղաքացիական ծառայության մասին
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն
ՖԽՔ	Ֆոկուս խմբային քննարկում

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Կառավարությունը 2019 թվականի հոկտեմբերի 3-ին N 1332-Ն[1] որոշմամբ հաստատեց «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը» (այսուհետ նաև՝ Հակակոռուպցիոն ռազմավարություն կամ Ռազմավարություն), իսկ 2022 թվականի օգոստոսի 24-ին N 1351-Ն[2] որոշմամբ փոփոխություններ և լրացումներ կատարեց Ռազմավարության մեջ:

Հակակոռուպցիոն ռազմավարության հիմնական նպատակը՝ կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում ՀՀ Կառավարության հռչակած հայեցակարգային կանխադրույթների ու սկզբունքների հետևողական կենսագործումն է, այդ թվում՝ կոռուպցիան ծնող պատճառների վերհանումը և դրանց վերացումը, կոռուպցիայի նկատմամբ հասարակության և հանրային ծառայողների անհանդուրժողական վերաբերմունքի սերմանումը և տարածումը, կոռուպցիայի համատարած և շարունակական նվազեցումը:

Ռազմավարությունը 43 գործողությունները ներկայացված են հինգ ոլորտներում, որոնցից 7-ը՝ Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի զարգացման, 19-ը՝ Կոռուպցիայի կանխարգելման, 10-ը՝ Կոռուպցիոն գործերի քննության, 6-ը՝ Հանրային իրազեկման և հակակոռուպցիոն կրթության և 1-ը՝ Մշտադիտարկման, հսկողության և դրա վերաբերյալ հանրային հաղորդակցության ոլորտում:

Աղյուսակ 1. Հակակոռուպցիոն ռազմավարության ոլորտները և 2022 թվականին իրականացման ենթակա գործողությունների թիվը

Ոլորտներ	2022 թվականին իրականացման ենթակա գործողությունների թիվը[3]
Ոլորտ 1: Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի զարգացում	7
Ոլորտ 2: Կոռուպցիայի կանխարգելում	19
Ոլորտ 3. Կոռուպցիոն գործերի քննություն	10
Ոլորտ 4. Հանրային իրազեկում և հակակոռուպցիոն կրթություն	6
Ոլորտ 5. Մշտադիտարկում, հսկողության և դրա վերաբերյալ հանրային հաղորդակցություն	1
Ընդամենը 2022 թվականին իրականացման ենթակա՝	**43**

«Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ը, «Իրավունքի Եվրոպա միավորում» ՀԿ-ը, Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միությունը՝ համագործակցելով Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի հետ, և հիմնվելով ՀՀ 2019-2022թթ. հակակոռուպցիոն ռազմավարության 136-րդ կետի վրա, ըստ որի՝ առավել համապարփակ ու բազմակողմանի գնահատում ունենալու նպատակով քաղաքացիական հասարակության կազմակերպությունները յուրաքանչյուր տարի կարող են իրականացնել անկախ մոնիթորինգ և գնահատում, իրականացրել են ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառման ծրագրի 2022 թվականին իրականացման ենթակա

[1] 03.10.2019 թվականի N 1332-Ն որոշումը հասանելի է այստեղ. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=168051

[2] 24.10.2022 թվականի N 1351-Ն որոշումը հասանելի է այստեղ. https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=168042

[3] Գործողությունների թիվը հաշվարկվել է 2022 թվականին ակնկալվող արդյունքների և վերստուգիչ ցուցանիշների համադրման արդյունքում:

գործողությունների կատարման մշտադիտարկում։ Մշտադիտարկման դաշտային աշխատանքներն իրականացվել են 2023 թվականի մարտ-մայիս ամիսներին և **մշտադիտարկել են այն գործողությունները, որոնք կատարվել են 2022 թվականի ընթացքում**։ Նկատի ունենալով այն հանգամանքը, որ սույն զեկույցը ընդգրկում է ՀՀ 2019-2022թթ. հակակոռուպցիոն ռազմավարության վերջին տարվա՝ 2022 թվականի գործողությունների կատարողականը, հետևապես ակնկալվում է, որ այն կօժանդակի ՀՀ ԱՆ-ին՝ 2023-2026թթ. հակակոռուպցիոն ռազմավարությունը մշակելու աշխատանքներում, որի ընդունման վերջնաժամկետը ըստ ՀՀ կառավարության 2021-2026 թթ. գործունեության միջոցառումների ծրագրի 16-րդ կետի՝ նախատեսված է 2023 թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակին[4]։

[4] 18.11. 2021 թվականի N 1902-Լ որոշումը հասանելի է այստեղ. https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=158031

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ա. Մշտադիտարկման նպատակներ

Ռազմավարության գործողությունների ծրագրերի մշտադիտարկման և գնահատման նպատակներն են՝

1) գնահատել «ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրի՝ 2022 թվականին իրականացման ենթակա գործողությունների կատարման ընթացքը և վերջնական կատարման մակարդակը,
2) պարզել այն գործողությունները, որոնք կատարվել են, կատարվել են մեծամասամբ, մասնակի, չեն կատարվել կամ կատարման ընթացքը կասեցվել է, դրանց պատճառները, կատարել այդ գործողությունների ընթացակարգային (քանակական) գնահատումներ,
3) կատարել գործողությունների ազդեցության մակարդակի (որակական) գնահատումներ:

բ. Գնահատման աղյուսակ

Մշտադիտարկման են ենթարկվել այն գործողությունները, որոնք **իրականացվել են 2022 թվականին,** հետևապես **գնահատման արդյունքները վերաբերում են 2022 թվականի վերստուգիչ ցուցիչի և ռազմավարական խնդրի միջանկյալ և վերջնական արդյունքի հարաբերակցությանը:** Ռազմավարության և գործողությունների ծրագրի բաժնի արդյունքային մոնիթորինգի ցուցիչները մշտադիտարկման չեն ենթարկվել, քանի որ դա ենթադրում է ոչ թե տարեկան գործողությունների ծրագրի կատարողականի մշտադիտարկում, այլ ամբողջ ռազմավարության կատարողականի եզրափակիչ գնահատումը:

Ռազմավարության 2022 թվականին իրականացման ենթակա գործողությունների, ինչպես նաև դրանց ակնկալվող արդյունքների և վերստուգիչ ցուցանիշների ուսումնասիրությունը թույլ է տալիս այս գործողությունների իրականացումը գնահատող ցուցանիշները բաժանել երկու խմբի, ինչպես ներկայացված է ստորև՝

- **Ընթացակարգային (քանակական) ցուցանիշներ**

  Ընթացակարգային ցուցանիշներն ընդհանուր առմամբ անդրադառնում են այն գործողություններին, որոնք ուղղված են որոշակի ընթացակարգերի ավարտին, օրինակ՝ իրավական փաստաթղթի նախագիծը Վարչապետի աշխատակազմ կամ ԱԺ ներկայացնելը, վերլուծության կամ ուսումնասիրության իրականացումը և հաշվետվության հրապարակումը, հակակոռուպցիոն կանոնակարգերի ներդրումը և այլն: Ընթացակարգային ցուցանիշները վերաբերում են ելքային մակարդակի արդյունքներին և գնահատվում են արդյունքի վրա հիմնված մշտադիտարկման (անգլերեն՝ results-based monitoring) հիման վրա: Ակնկալվում է, որ 2022 թվականի ընթացքում իրականացվելիք գործողությունները գնահատման իրականացման ժամանակահատվածում, որն է՝ 2023 թվականի մարտ-մայիս ամիսները, արդեն իսկ պետք է ավարտված լինեն: Անհրաժեշտ է նշել, որ գործողությունների ծրագիրն ընդգրկում է հիմնականում ընթացակարգային ցուցանիշներ ենթադրող գործողություններ: Ընթացակարգային ցուցանիշների դեպքում մշտադիտարկումն արձանագրում է՝ թե որ փուլում է գտնվում գործընթացը:

  Ընթացակարգային ցուցանիշների կատարողականի գնահատման համար առանձնացվել են գնահատման հետևյալ կատեգորիաները՝

  - **Գործողությունը կատարված է** - գործողությունը գնահատվում է «կատարված է», եթե մշտադիտարկման խմբին ներկայացվել են կամ հասանելի են դարձել վկայող

փաստեր (անգլերեն՝ evidence) առ այն, որ գործողությունը կատարվել է ամբողջությամբ ռազմավարության գործողությունների ծրագրով սահմանված ժամկետում:

- **Գործողությունը կատարված է մեծամասամբ** - գործողությունը գնահատվում է «կատարվել է մեծամասամբ», եթե մշտադիտարկման խմբին ներկայացվել են կամ հասանելի են եղել վկայող փաստեր առ այն, որ գործողության կեսից ավելին կատարվել է, արձանագրվել է նշանակալի առաջընթաց, սակայն այն դեռևս ամբողջությամբ ավարտված չէ:
- **Գործողությունը կատարված է մասնակի** - գործողությունը գնահատվում է «կատարվել է մասնակի», եթե մշտադիտարկման խմբին ներկայացվել են կամ հասանելի են եղել վկայող փաստեր առ այն, որ գործողության կատարման ուղղությամբ արձանագրվել է նշանակալի առաջընթաց, սակայն այն դեռևս ամբողջությամբ ավարտված չէ:
- **Գործողությունը կատարված չէ** - գործողությունը գնահատվում է «չկատարված», եթե գործողության արդյունքային ցուցանիշը չի կատարվել կամ տվյալ գործողության վերաբերյալ մշտադիտարկման խմբին որևէ տեղեկատվություն չի տրամադրվել:
- **Գործողությունը կասեցված է** - գործողությունը գնահատվում է «կասեցված է», եթե գործողության կատարման ընթացքում հայտնի են դարձել հանգամանքներ, որոնք որոշակի ժամանակահատվածում անհնար են դարձնում գործողության կատարումը և գործողության կասեցված լինելը ամրագրվել է իրավական որևէ փաստաթղթում կամ որոշմամբ:

Յուրաքանչյուր ոլորտի համար այս գնահատման ընթացքում մշտադիտարկման թիմի կողմից հաշվարկվել է **կատարողական ցուցանիշ**, որն իրենից ներկայացնում է «կատարված» գործողությունների հարաբերակցությունը տվյալ ոլորտում հաշվետու ժամանակահատվածում նախատեսված ընդհանուր գործողությունների թվին:

Ազդեցության մակարդակի (Որակական) ցուցանիշներ

Որակական ցուցանիշներն անդրադառնում են ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներին և Գործողությունների ծրագրերի ներքո իրականացվող գործողությունը կապում են ռազմավարական խնդիրների մակարդակում սպասվող վերջնական կամ միջանկյալ արդյունքի հետ: Ռազմավարական խնդիրները ներկայացվել են Ռազմավարության 55-րդ կետում, ընդհանուր առմամբ առաջադրվել է 9 խնդիր: Այս ցուցանիշները գնահատվելու են մշտադիտարկման խմբի փորձագետների կողմից և վերաբերելու են կատարված գործողությունների միջոցով ռազմավարական խնդիրների մակարդակում սպասվող արդյունքներին և ելքային իրավիճակում ներկայացված խնդիրների հասցեագրման պոտենցիալին: Այս գնահատման ընթացքում հաշվի են առնվելու նաև վերստուգիչ ցուցանիշների օբյեկտիվությունն ու ամբողջականությունը: Գնահատումը իրականացվել է ՀՀ արդարադատության նախարարությանը՝ որպես հակակոռուպցիոն քաղաքականությունը մշակող և մոնիթորինգ ու գնահատում իրականացնող իրավասու մարմնի միջոցով գործողությունների կատարող (համակատարող) մարմիններին ուղղված ոլորտային՝ հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի, հակակոռուպցիոն կրթության և հանրային իրազեկման, կոռուպցիայի կանխարգելման և կոռուպցիայի հակազդման վերաբերյալ տեղեկատվական հարցումների՝ հարցաշարերի ստացված պաշտոնական պատասխանների, ՖԽՔ-ների և գրասենյակային ուսումնասիրության/փաստաթղթերի վերլուծության արդյունքում դուրսբերված տեղեկատվության հիման վրա: Նաև հարկ է նշել, որ հիշյալ հարցաշարերի (հետագա տեքստում ներկայացված են նաև որպես «Հարցադրումներ») վերաբերյալ ՀՀ ԱՆ-ին արված տեղեկատվական հարցումներին

տրամադրվել են ոչ ամբողջական պատասխաններ այն պատճառաբանությամբ, որ ՀՀ ԱՆ-ը մշտադիտարկումը իրականացնելու ժամանակահատվածում ծանրաբեռնված էր այլ հանձնառություններով:

Այս ցուցանիշների կատարողականի գնահատման համար առանձնացվել են գնահատման երեք չափանիշ.

- **Գործողությունը իրականացված է -** գործողությունը գնահատվում է «իրականացված է», եթե մշտադիտարկման խմբին ներկայացվել են կամ հասանելի են եղել վկայող փաստեր առ այն, որ գործողության իրականացումը ապահովվել է ռազմավարական խնդրի մակարդակում սպասվող արդյունքը:
- **Գործողությունը իրականացված է ոչ ամբողջական** - գործողությունը գնահատվում է «իրականացված է ոչ ամբողջական», եթե տվյալ գործողության իրականացումը չի ապահովել ռազմավարական խնդրի մակարդակում սպասվող վերջնական կամ միջանկյալ ամբողջական արդյունքը (ապահովել է մասնակի արդյունք) կամ չի հանդիսացել նպաստող գործոն այդ արդյունքի ամբողջական նվաճման համար կամ տվյալ գործողության իրականացման համար պատասխանատու պատկան մարմինների կողմից մշտադիտարկման խմբին չեն ներկայացվել փաստեր, որոնք կվկայեն ռազմավարական խնդրի մակարդակում սպասվող վերջնական կամ միջանկյալ արդյունքի ամբողջական իրականացումը:
- **Գործողությունը իրականացված չէ** - գործողությունը գնահատվում է «իրականացված չէ», եթե տվյալ գործողության իրականացման ուղղության որևէ էական միջոցառումներ չեն ձեռնարկվել կամ ձեռնարկված միջոցառումները ուղղված չեն ապահովելու ռազմավարական խնդրի մակարդակում սպասվող վերջնական կամ միջանկյալ արդյունքը կամ չեն հանդիսացել նպաստող գործոն այդ արդյունքի համար կամ տվյալ գործողության իրականացման համար պատասխանատու պատկան մարմինների կողմից մշտադիտարկման խմբին չեն ներկայացվել փաստեր, որոնք կվկայեն ռազմավարական խնդրի մակարդակում սպասվող վերջնական կամ միջանկյալ արդյունքի իրականացումը:

Օրինակ՝ «Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման համար պատասխանատու մարմինների, ՀԿ-ների կարողությունների զարգացում» (Հավելված 2, ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2019-2022 թթ. միջոցառումների ծրագիր, Ռազմավարական խնդիր՝ Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի վերափոխում և զարգացում, ռազմավարական ուղղություն 1, գործողություն 5) գործողության կատարումը ապահովել է արդյոք 2022 թվականին «Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի վերափոխում և զարգացում» ռազմավարական խնդրի մակարդակում սպասվող արդյունքը: Տվյալ միջոցառման համար 2022 թ.-ի համար սահմանվել են հետևյալ երկու վերստուգիչ ցուցիչները՝ «ա/ԱՆ-ի հակակոռուպցիոն քաղաքականությունը մշակող համապատասխան ստորաբաժանման աշխատակիցների առնվազն 40%-ն անցել է վերապատրաստում (2022թ.)» և «բ/ Իրականացվել է առնվազն 2 վերապատրաստում ՀԿ-ների ներկայացուցիչների համար»: Տվյալ պարագայում 2022 թ.-ին ՀԿ-ների համար 2 վերապատրաստման իրականացումը օբյեկտիվորեն չի կարող ապահովել «Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի վերափոխում և զարգացում» ռազմավարական խնդրի՝ ինստիտուցիոնալ համակարգի տարր հանդիսացող հակակոռուպցիոն ոլորտի մի քանի տասնյակ ՀԿ-ների «Կարողությունների զարգացում» սպասվող արդյունքի իրականացումը, ինչպես նաև սույն գործողության համար պատասխանատու պատկան մարմինների կողմից մշտադիտարկման խմբին չեն ներկայացվել այնպիսի փաստեր, որոնք կվկայեն ռազմավարական խնդրի մակարդակում սպասվող վերջնական կամ միջանկյալ արդյունքների իրականացումը նաև ինստիտուցիոնալ համակարգի տարր հանդիսացող ՀՀ ԱՆ-ի մասով, հետևապես սույն միջոցառման կատարումը գնահատվում է **Իրականացված է ոչ ամբողջական**:

Յուրաքանչյուր ոլորտի համար այս գնահատման ընթացքում փորձագիտական թիմի կողմից հաշվարկվել է **կատարողական ցուցանիշ**, որն իրենից ներկայացնում է «իրականացված» գործողությունների միջոցով տվյալ ռազմավարական խնդրի մակարդակում միջանկյալ կամ վերջնական արդյունքի նվաճումը:

գ. Գնահատման մեթոդներ

Մշտադիտարկման նպատակներին հասնելու համար կիրառվել է **արդյունքների համադրման մոտեցումը**՝ համադրելով որակական և քանակական տվյալները: Տվյալները հավաքագրվել են առաջնային և երկրորդային աղբյուրներից: Հետազոտության մեթոդները ներառում են տեղեկատվության հարցումները, գրասենյակային ուսումնասիրությունը/փաստաթղթերի վերլուծությունը, այդ թվում՝ ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակած Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների եզրափակիչ գնահատման և մոնիթորինգի զեկույցը (այսուհետ՝ Եզրափակիչ զեկույց), միջազգային կազմակերպությունների զեկույցները, համապատասխանության գնահատումները և խորհրդատվական եզրակացությունները, ՖԽՔ-ները: Կազմակերպվել է 4 ՖԽՔ՝ ներառական և մասնակցային ձևաչափով, որին մասնակցել են գործողությունների կատարման համար պատասխանատու պետական գերատեսչությունների և այլ շահագրգիռ կառույցների ու ՔՀԿ-ների ներկայացուցիչներ, ոլորտային փորձագետներ և իրավաբաններ: Նաև հարկ է նշել, որ սույն զեկույցը ձեռնպահ է մնացել ՀՀ ԱՆ-ի հրապարակած Եզրափակիչ զեկույցում առկա տեղեկությունները **ամբողջապես** արտացոլելուց, որը կծանրաբեռներ զեկույցի ծավալը, հետևապես, հետաքրքրված անձինք Ռազմավարության առանձին գործողությունների արդյունքների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկություններ ստանալու նպատակով կարող են ուսումնասիրել հիշյալ Եզրափակիչ զեկույցը[5]:

Աղյուսակ 2. ՖԽՔ -ների պետական մարմինները, այլ շահագրգիռ կառույցների և մասնակիցների թիվը

#	Անվանումը	Ներկայացուցիչների թիվը
1.	Արդարադատության նախարարություն	3
2.	Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով	4
3.	Ազգային ժողով	2
4.	Վարչապետի աշխատակազմ	1
5.	Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ	2
6.	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	4
7.	Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն	4
8.	Ֆինանսների նախարարություն	2
9.	Ներքին գործերի նախարարության ոստիկանության շտաբ	1
10.	Գլխավոր դատախազություն	2
11.	Հակակոռուպցիոն կոմիտե	1
12.	Քննչական Կոմիտե	2
13.	Բարձրագույն դատական խորհուրդ	2
14.	Մարդու իրավունքների պաշտպան	1
15.	Կենտրոնական բանկ	2

[5] ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակած Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների եզրափակիչ գնահատման և մոնիթորինգի զեկույցը (Եզրափակիչ զեկույց) հասանելի է այստեղ. https://www.moj.am/storage/files/pages/pg_7967694028641_AC_M-A_Report_final_2023-compressed_1_.pdf

16.	Մրցակցության պաշտպանության հանձնաժողով	2
17.	Պետական եկամուտների կոմիտե	1
18.	Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն	2
19.	ԷԿԵՆԳ ՓԲԸ	2
20.	Վանաձորի համայնքապետարան	1
21.	ՀՀ արդարադատության ակադեմիա	1
22.	ՀՀ Փաստաբանական ակադեմիա	1
23.	Պետական կառավարման ակադեմիա	1
24.	Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան	1
Ընդհանուր	**24**	**45**
	ՔՀԿ-ներ, փորձագետներ, իրավաբաններ	
1.	ՔՀԿ-ներ, փորձագետներ, իրավաբաններ	12
Ընդհանուր	**12**	**12**

Մշտադիտարկման արդյունքների հիման վրա մշակվել է Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրի 2022 թվականին իրականացման ենթակա գործողությունների մշտադիտարկման արդյունքների զեկույցը (այսուհետ՝ Զեկույց)։ Զեկույցի նախագիծը ներկայացվել է գործողությունների կատարման համար պատասխանատու պետական գերատեսչությունների և այլ շահագրգիռ կառույցների կարծիքի, որի արդյունքում ստացված դիտարկումների ու առաջարկությունների մի մասը ընդունվել են և տեղ են գտել Զեկույցի վերջնական տարբերակում։ Ընդհանուր առմամբ, Զեկույցի նախագիծը ներկայացվել է 21 պետական մարմինների և այլ շահագրգիռ կառույցների, որից 13-ը արձագանքել են և 7-ը ներկայացրել են դիտարկումներ և առաջարկություններ։

Աղյուսակ 3. Արձագանքներ, դիտարկումներ և առաջարկներ ներկայացրած մարմինների և կառույցների թիվը

#	Արձագանքներ ներկայացրած մարմինները	Արձագանքներ չներկայացրած մարմինները	Դիտարկումներ չունեցած մարմինները	Դիտարկումներ և առաջարկներ ներկայացրած մարմինները	Առաջարկների , դիտարկումների կարգավիճակը
1.	ՀՀ ԱՆ	ՀՀ ԲԴԽ	ՀՀ ԲՏԱ նախարարություն	*ՀՀ ԱՆ*	*Ընդունվել է մասնակի*
2.	ՀՀ ԲՏԱ նախարարություն	ՀՀ ԱԺ	ՀՀ ԿԲ	*ՀՀ Գլխավոր դատախազություն*	*Ընդունվել է մասնակի*
3.	ՀՀ Գլխավոր դատախազություն	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	ՀՀ քննչական կոմիտե	*ԿԿՀ*	*Ընդունվել է մեծամասամբ*
4.	ԿԿՀ	ՀՀ ԿԳՄՄՆ	ՀՀ ԿԸՀ	*ՀԿԿ*	*Ընդունվել է մեծամասամբ*
5.	ՀԿԿ	ՄՊՀ	ՀՀ ՄԻՊ-ի գրասենյակ	*Վարչապետի աշխատակազմի ՔԾԳ*	*Ընդունվել է մեծամասամբ*
6.	Վարչապետի աշխատակազմի ՔԾԳ	ՀՀ Ֆինանսների նախարարություն	ՀՀ ՆԳՆ ոստիկանության շտաբ	*Կորպորատիվ կառավարման կենտրոն*	*Ընդունվել է մեծամասամբ*
7.	Կորպորատիվ կառավարման կենտրոն	ԷԿԵՆԳ		*ՀՀ արդարադատության ակադեմիա*	*Ընդունվել է ամբողջությամբ*
8.	ՀՀ արդարադատության ակադեմիա	Ազգային անվտանգության ծառայություն			

9.	ՀՀ ԿԲ				
10.	ՀՀ ԿԸՀ				
11.	ՀՀ քննչական կոմիտե				
12.	ՀՀ ՄԻՊ-ի գրասենյակ				
13.	ՀՀ ՆԳՆ ոստիկանության շտաբ				
Ընդամենը	**13**	**8**	**6**	**7**	
Ընդհանուր	**21**		**13**		

դ. Զեկույցի մեթոդոլոգիայի համադրելիությունը ՀՀ ԱՆ-ի մեթոդոլոգիայի հետ

ՀՀ Կառավարությունը 2019 թվականի հոկտեմբերի 3-ին N 1332-Ն որոշմամբ հաստատել էր ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը: Այն բաղկացած էր հետևյալ երեք հավելվածներից. հակակոռուպցիոն ռազմավարություն, դրա իրականացման միջոցառումների (գործողությունների) ծրագիր և ֆինանսական գնահատական: ՀՀ Կառավարությունը 2019 թվականի հոկտեմբերի 3-ի N 1332-Ն որոշման մեջ 2022 թվականի օգոստոսի 24-ին N 1351-Ն որոշմամբ փոփոխություններ և լրացումներ կատարեց, որով հաստատեց հակակոռուպցիոն ռազմավարության նոր խմբագրությունը, 5-րդ գլխով նախատեսեց գործողությունների իրականացման մշտադիտարկման նոր մենթոդոլոգիա: Նույն որոշմամբ ավելացվեց նոր՝ չորրորդ հավելվածը, որը վերաբերում է ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության 2019-2022 թթ. միջոցառումների ծրագրի **մոնիթորինգի կիսամյակային հաշվետվության** և ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության 2019-2022 թթ. միջոցառումների ծրագրի **մոնիթորինգի և գնահատման տարեկան հաշվետվության** ձևաչափերին: Հարկ է նշել, որ ինչպես նոր խմբագրությամբ ռազմավարությունը, այնպես էլ չորրորդ հավելվածը գնահատելու է հակակոռուպցիոն ռազմավարության գործողությունների կատարման միայն քանակական, և ոչ թե որակական արդյունքները:

ԻՀԱ-ն և գործընկերները ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրերի հասարակական անկախ մշտադիտարկում իրականացնում է 2020 թվականից, և այդ պահից սկսած մշակել և հընթացս բարելավել են մեթոդոլոգիան, որը ԱՆ-ի և այլ շահագրգիռ գերատեսչությունների կողմից ընդունելի է եղել: Սույն զեկույցը նույնպես մշակվել է նախկինում իրականացրած մշտադիտարկումների ընթացքում կիրառված մեթոդոլոգիայի հիման վրա:

Վերոգրյալի հիման վրա հարկ է ընդգծել, որ սույն զեկույցը իրականացնում է ոչ միայն քանակական, այլև՝ որակական գնահատումը, ինչը ՀՀ ԱՆ-ի կողմից չի իրականացվում: Օրինակ, այդ նպատակով վեր են հանվում խոցելի վերստուգիչ ցուցանիշներ, ինչը, թեև չի ազդում քանակական գնահատականի վրա, սակայն կարող է ազդել որակական գնահատականի վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2019-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ՈԼՈՐՏ 1. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ձևավորում և բնականոն գործունեության ապահովում

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի մակարդակում	Ակնկալվող արդյունքը՝ գործողության մակարդակում (2022թ)	Պատասխանատու մարմին (ներ)	Վերստուգիչ ցուցանիշ (2022թ)	Մշտադիտարկման արդյունք
Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի վերափոխումը և զարգացումը:	2022 թվականի համար արդյունք նախատեսված չէ:	ԱՆ ԿԿՀ	Միջազգային մասնագիտացված կազմակերպությունների (ՏՀԶԿ) զեկույցներում ԿԿՀ-ի գործունեության վերաբերյալ դրական անդրադարձերի առկայություն (2021թ./2022թ. զեկույց):	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է:** Ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ:**

Համաձայն՝ ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված եզրափակիչ զեկույցի՝ գործողությունը գնահատվել է **կատարվել է ամբողջությամբ՝** նշելով, որ ՏՀԶԿ-ի և ԳՐԵԿՈ-ի համապատասխան զեկույցները անդրադարձ են կատարել ԿԿՀ-ին: Եզրափակիչ զեկույցում ընդգծել են նաև վեր հանված թերություններն ու խնդիրները: Որպես եզրահանգում նշվել է, որ ՏՀԶԿ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի գնահատման հինգերորդ պիլոտային փուլի 2022 թվականի զեկույցում (այսուհետ՝ ՏՀԶԿ 2022թ.-ի զեկույց) և ՀՀ-ի կողմից «Կոռուպցիայի կանխարգելումը պատգամավորների, դատավորների և դատախազների շրջանում պարտավորությունների կատարման վերաբերյալ» ԳՐԵԿՈ-ի 2023 թվականի միջանկյալ զեկույցում (այսուհետ՝ ԳՐԵԿՈ-ի 2023թ.-ի զեկույց) առկա են դրական անդրադարձեր ԿԿՀ-ի վերաբերյալ:

Մշտադիտարկման շրջանակներում ուսումնասիրելով ՏՀԶԿ 2022թ.-ի զեկույցը, պարզ է դառնում, որ զեկույցը տարաբնույթ անդրադարձեր է կատարում ԿԿՀ-ի լիազորությունների, գործառույթների, կատարված աշխատանքների, կարողությունների, թերությունների, խնդիրների և արդյունքների մասին: Օրինակ, ըստ ՏՀԶԿ 2022թ.-ի զեկույցի՝ *«ԿԿՀ-ի ձևավորման գործընթացը ուշացել է, այն ամբողջապես ֆունկցիոնալ է դարձել 2019 թվականին, նրա մարդկային ռեսուրսները ուժեղացնելու կարիք կա: ԿԿՀ-ն թեև ցուցադրում է լավ ջանքեր բարձրաստիճան պաշտոնատար անձանց շահերի բախման վերաբերյալ հրապարակային պնդումներին անդրադառնալու ուղղությամբ, բայց դեռևս զսպիչ պատժամիջոցներ չեն ձեռնարկվել[6]: … Շահերի բախման կանոնների և այլ սահմանափակումների իրականացման վերաբերյալ որևէ վիճակագրություն առկա չէ[7]: …»:* Ըստ ԳՐԵԿՈ-ի 2023թ.-ի զեկույցի՝ *«ԳՐԵԿՈ-ն նաև ի գիտություն է ընդունում ԿԿՀ-ի կողմից գործադրվող ջանքերը, որոնք ուղղված են*

[6] Տե՛ս ՏՀԶԿ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի գնահատման հինգերորդ պիլոտային փուլի 2022 թվականի զեկույցը հետևյալ հղմամբ. https://www.oecd-ilibrary.org/governance/anti-corruption-reforms-in-armenia_e56cafa9-en;jsessionid=XybFlBzfg3WExBEF9qWjoToWWhJU6in76Tz5i2uG.ip-10-240-5-111, էջ 32

[7] Տե՛ս ՏՀԶԿ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի գնահատման հինգերորդ պիլոտային փուլի 2022 թ.-ի զեկույցը հետևյալ հղմամբ. https://www.oecd-ilibrary.org/governance/anti-corruption-reforms-in-armenia_e56cafa9-en;jsessionid=XybFlBzfg3WExBEF9qWjoToWWhJU6in76Tz5i2uG.ip-10-240-5-111, էջ 32

մշտադիտարկելու պատգամավորների անհամատեղելիության պահանջներին համապատասխանությունը: Բավարար է գնահատվում այն, որ ԿԿՀ-ն կոնկրետ մեթոդաբանությամբ պարբերաբար ստուգումներ է կատարում: Խախտումների հայտնաբերման հետևանքների մասին, սակայն, չի նշվում[8]: … ԳՐԵԿՈ-ն հիշեցնում է, որ այս հանձնարարականը[9] մասամբ իրականացվել է Համապատասխանության միջանկյալ զեկույցում: ԳՐԵԿՈ-ն նշել է, որ ինչ վերաբերում է համակարգի ինստիտուցիոնալ կազմավորմանը, ապա նոր կանոնները, որոնք նախատեսում են մրցութային խորհրդի վերականգնում ԿԿՀ անդամների նշանակման գործընթացում, կկիրառվեն միայն ԿԿՀ հետագա ձևավորման համար: Հանձնաժողովի հինգից չորսը ընտրվել են նախկին կանոնների հիման վրա, որոնք քննադատվել էին Երկրորդ Համապատասխանության զեկույցում[10]: Հետևաբար, ԿԿՀ-ի գործառնական անկախության ամրապնդման դրական միջոցը դեռ ուժի մեջ չէր մտել[11]:»

Վերոգրյալի արդյունքում պարզ է դառնում, որ ԳՐԵԿՈ-ն, ի թիվս այլնի, վերահաստատել է իր մտահոգությունն ու քննադատությունը, որը վերաբերում է ԿԿՀ-ի գործառնական անկախությանը, իսկ ՏՀԶԿ-ն խոսել է նաև լիազորություններից բխող կատարված աշխատանքների շրջանակի և թերությունների մասին: Միաժամանակ, հարկ է հիշատակել, որ ՔՀԿ-ները ևս իրենց մտահոգություններն էին բարձրաձայնել[12] առ այն, որ ԿԿՀ-ի առաջին կազմի նշանակումները տեղի են ունեցել առանց մրցույթային կարգի:

Սույն գործողության մասով խնդրահարույց է **սահմանած վերստուգիչ ցուցանիշը**: Այս կապակցությամբ, հարկ է նաև ընդգծել, որ սույն գործողության գնահատման ոչ հստակությունը առաջանում է նաև ոչ ամբողջական և ոչ օբյեկտիվ վերստուգիչ ցուցիչի սահմանմամբ: Մասնավորապես, հասկակալի չէ, թե ինչ է նշանակում «դրական արձագանք» և ինչպես այն պետք է մեկնաբանվի ու չափվի: Այս ցուցանիշը օբյեկտիվորեն չի կարող ապահովել ռազմավարական խնդրի՝ ինստիտուցիոնալ համակարգի տարր հանդիսացող ԿԿՀ-ի «Վերափոխումը և զարգացումը» սպասվող արդյունքի իրականացումը:

Մշտադիտարկման խմբի կողմից ԱՆ-ին ներկայացվել էին հարցադրումներ առ այն, թե արդյո՞ք գործողության կատարման վերջնական գնահատում իրականացնելիս ուսումնասիրվել է ՏՀԶԿ-ի Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի

---

[8] ՀՀ-ի կողմից «Կոռուպցիայի կանխարգելումը պատգամավորների, դատավորների և դատախազների շրջանում պարտավորությունների կատարման վերաբերյալ» ԳՐԵԿՈ-ի 2023 թ.-ի միջանկյալ զեկույցը հետևյալ հղմամբ. https://rm.coe.int/grecorc4-2023-6-final-eng-2nd-interim-armenia-conf/1680aac534, էջ 6

[9] Տե՛ս ՀՀ-ի կողմից «Կոռուպցիայի կանխարգելումը պատգամավորների, դատավորների և դատախազների շրջանում պարտավորությունների կատարման վերաբերյալ» ԳՐԵԿՈ-ի 25.02.2016թ.-ի Չորրորդ գնահատման զեկույցի (2015թ.) 18-րդ առաջարկությունը հետևյալ հղմամբ. https://rm.coe.int/16806c2bd8

[10] 2019 թվականի դեկտեմբերի 6-ին ընդունված Հայաստանի վերաբերյալ 4-րդ գնահատման զեկույցում, ի թիվս այլնի (ներառյալ դատական և դատախազական համակարգը), ԳՐԵԿՈ-ն անդրադառնալով ԿԿՀ-ի անկախությանը, նշել էր. «ԱԺ-ի կողմից ընդունված նոր օրենքը ԿԿՀ անդամների նշանակման գործընթացից հեռացնում է մրցութային հանձնաժողովին և ներդնում ուղղակի առաջադրումների համակարգ: Նման մոդելի հիմնական մտահոգությունը բևեռացման զգալի ռիսկն է: Սա հակակոռուպցիոն մարմինների համար կարևոր գործոն է, քանի որ քաղաքական միջամտությունից և ազդեցությունից դրանց մեկուսացումը հանդիսանում է մարմինների արդյունավետության ապահովման հիմնական սկզբունք: ՔՀԿ-ները ներկայումս առաջադրման կամ ընտրության գործընթացում ներկայացված չեն: Կառավարությունն ու իշխող խորհրդարանական խմբակցությունը կարող են վերահսկել ԿԿՀ-ի մեծամասնությունը: ԳՐԵԿՈ-ն հորդորում է իշխանություններին ապահովել ԿԿՀ-ի անկախությունը, մասնավորապես՝ հավասարակշռված և կայուն կազմի և թափանցիկ ընթացակարգերի միջոցով:»

[11] Տե՛ս ՀՀ-ի կողմից «Կոռուպցիայի կանխարգելումը պատգամավորների, դատավորների և դատախազների շրջանում պարտավորությունների կատարման վերաբերյալ» ԳՐԵԿՈ-ի 2023 թ.-ի միջանկյալ զեկույցը հետևյալ հղմամբ. https://rm.coe.int/grecorc4-2023-6-final-eng-2nd-interim-armenia-conf/1680aac534, կետ 67

[12] https://iravaban.net/230242.html

Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի և «Կոռուպցիայի կանխարգելումը պատգամավորների, դատավորների և դատախազների շրջանում պարտավորությունների կատարման վերաբերյալ» ԳՐԵԿՈ-ի Հայաստանի գնահատման վերաբերյալ 2019-2022 թվականների ընթացքում տրամադրված բոլոր զեկույցները: Հարցադրման նպատակն էր՝ պարզելու, թե սույն գործողության գնահատում իրականացնելու համար ԱՆ-ը ինչպես է համադրելու ՀՀ 2019-2022 թթ. Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագրի կատարման ընթացքում ունեցած բացասական և դրական անդրադարձերը՝ գործողության վերջնական և օբյեկտիվ գնահատում իրականացնելու համար: Հիշյալին ԱՆ-ը պատասխան չի տրամադրել:

Քաղաքացիական հասարակությունը մասնակցել է հանրային քննարկումներին: Օրինագծերը դրվել են հանրային քննարկման:

Նման պայմաններում, թեև ըստ ներկայացված տվյալների՝ քանակական առումով գործողությունը կատարվել է մեծամասամբ, սակայն ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով ռազմավարական խնդիրը (արդյունքը) ոչ ամբողջական է իրականացվել, քանի որ ԿԿՀ-ի գործառնական անկախությունը ապահովող դրույթը դեռևս ամբողջությամբ չի գործում:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ:**

Ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ,** այս գործողության շրջանակներում իրականացված գործողությունները ամբողջապես չեն նպաստել հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի վերափոխմանը և զարգացմանը:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2. Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման, քննության գործառույթներով օժտված և անկախության բավարար երաշխիքներ ունեցող հակակոռուպցիոն իրավապահ մարմնի՝ Հակակոռուպցիոն կոմիտեի ձևավորում և բնականոն գործունեության ապահովում

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի մակարդակում	Ակնկալվող արդյունքը՝ գործողության մակարդակում (2022թ)	Պատասխանատու մարմին (ներ)	Վերստուգիչ ցուցանիշ (2022թ)	Մշտադիտարկման արդյունք
Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի վերափոխումը և զարգացումը:	Կոռուպցիոն հանցագործություններով մինչդատական քրեական վարույթն իրականացվում է ՀԿԿ-ի կողմից: ՀԿԿ-ի տարածքային ստորաբաժանումները կազմավորվել են:	ԱՆ Գլխավոր դատախազություն Քննչական կոմիտե ՀԿԿ	ՀԿԿ-ի կենտրոնական մարմինն ապահովված է անհրաժեշտ տարածքային, նյութական միջոցներով, ՀԿԿ-ի կենտրոնական մարմնի հաստիքների առնվազն 50%-ը համալրվել է: ՀԿԿ-ի աշխատակիցների 40%-ը	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԵԾԱՄԱՍԱՄԲ:** Ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ:**

			վերապատրաստվել է: ՀՀ պետական բյուջեում և ՄԺՕԾ-ում նախատեսված է ՀԿԿ-ի ֆինանսավորման առանձին տող Կազմավորվել է առնվազն 2 տարածքային բաժին, ապահովված են շենքային ու նյութատեխնիկական պայմանները:	

Համաձայն՝ ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված եզրափակիչ զեկույցի՝ գործողությունը գնահատվել է **կատարվել է մեծամասամբ**, քանի որ վերստուգիչ ցուցանիշներով նախատեսված գործողություններից չի կատարվել միայն տարածքային ստորաբաժանումների ձևավորումը:

Նշված շրջանակներում ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեից հայտնել են, որ կոմիտեին հատկացված ինքնավար պաշտոնների 40 հաստիքներից 2022 թվականի ընթացքում համալրվել են 32-ը, իսկ օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող 60 հաստիքից համալրվել է 40-ը: Նույն աղբյուրի համաձայն՝ 2022 թվականի ընթացքում ինչպես հայաստանյան, այնպես էլ միջազգային փորձագետների մասնակցությամբ տարատեսակ վերապատրաստումներ են անցել ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող 32 աշխատակիցներից 25-ը, իսկ օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող 40 աշխատակիցներից 39-ը:

Ըստ Հակակոռուպցիոն կոմիտեի հայտնած տեղեկությունների՝ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները ներգրավված են եղել վերապատրաստումների գործընթացներին:

Նման պայմաններում, թեև ըստ ներկայացված տվյալների՝ քանակական առումով գործողությունը կատարվել է մեծամասամբ, սակայն ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով ռազմավարական խնդիրը (արդյունքը) ոչ ամբողջական է իրականացվել, քանի որ հաշվետու ժամանակահատվածում տարածքային ստորաբաժանումները չեն ձևավորվել:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԵԾԱՄԱՍԱՄԲ:**

Ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ,** այս գործողության շրջանակներում իրականացված գործողությունները ամբողջապես չեն նպաստել հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի վերափոխմանը և զարգացմանը:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3. Հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանի ստեղծում և հակակոռուպցիոն գործերով մասնագիտացված քննության ապահովում

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝	Ակնկալվող արդյունքը՝ գործողության	Պատասխանատու մարմին (ներ)	Վերստուգիչ ցուցանիշ (2022թ)	Մշտադիտարկման արդյունք

ռազմավարական խնդրի մակարդակում	**մակարդակում (2022թ)**			
Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի վերափոխումը և զարգացումը:	Հակակոռուպցիոն դատարանը ձևավորվել է: Վերաքննիչ քաղ. դատարանում նշանակվել են հակակոռուպցիոն քաղ. գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող առանձին դատավորներ, իսկ վերաքննիչ քրեական դատարանում՝ կոռուպցիոն հանցագործությունների գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող առանձին դատավորներ: Ապահովված են բավարար մարդկային, վարչական և նյութական ռեսուրսներ մասնագիտացված դատարանների գործունեության ապահովման համար: Հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանի, ինչպես նաև կոռուպցիոն հանցագործությունների գործեր քննող դատավորները շարունակաբար վերապատրաստվում են:	ԱՆ ԲԴԽ Արդարադատության ակադեմիա	Մշակվել և հաստատվել են հակակոռուպցիոն մասնագիտացմամբ դատավորների համար մասնագիտական պատրաստման ուսուցման ծրագրերը (2022թ.): Հակակոռուպցիոն դատարանի դատավորների առաջին կազմը ձևավորվել է: Վերաքննիչ քաղ. դատարանում հակակոռուպցիոն քաղ. գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող դատավորները և վերաքննիչ քրեական դատարանում կոռուպցիոն հանցագործությունների գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող դատավորները նշանակվել են (2022 թ.): Դատավորների առնվազն 50%-ը անցել է համապատասխան մասնագիտական պատրաստման ուսուցումներ (2022թ.):	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԵԾԱՄԱՍԱՄԲ:** Ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ:**

Համաձայն՝ ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված եզրափակիչ զեկույցի՝ գործողությունը գնահատվել է **կատարվել է մեծամասամբ**, քանի որ վերստուգիչ ցուցանիշներով նախատեսված

գործողություններից չի կատարվել միայն դատավորների մասնագիտական վերապատրաստումները:

Մշտադիտարկման խմբի կողմից հարցադրումներ էին ներկայացվել հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանի, ինչպես նաև կոռուպցիոն հանցագործությունների գործեր քննող դատավորների համար անցկացված վերապատրաստումների որակական ազդեցությունը գնահատելու համար: Հիշյալին շահագրգիռ մարմինները լիարժեք պատասխան չեն տրամադրել, հետևապես գործողության ազդեցությունը վերապատրաստման մասով չի գնահատվել՝ ամբողջական տեղեկատվության բացակայությամբ պայմանավորված:

Քաղաքացիական հասարակությունը ընդգրկվել է գործընթացում, նախագիծը դրվել է հանրային քննարկման իրավական ակտերի հրապարակման միասնական հարթակում[13]:

Նման պայմաններում, թեև ըստ ներկայացված տվյալների՝ քանակական առումով գործողությունը կատարված է մեծամասամբ, սակայն ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով ռազմավարական խնդիրը (արդյունքը) ոչ ամբողջական է իրականացվել, քանի որ հաշվետու ժամանակահատվածում դատավորների մասնագիտական վերապատրաստումները չեն կատարվել:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԵԾԱՄԱՍԱՄԲ:**

Ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ,** այս գործողության շրջանակներում իրականացված գործողությունները ամբողջապես չեն նպաստել հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի վերափոխմանը և զարգացմանը:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4. ՀՀ գլխավոր դատախազությունում կոռուպցիոն հանցագործությունների քննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող ստորաբաժանման ստեղծում

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի մակարդակում	Ակնկալվող արդյունքը՝ գործողության մակարդակում (2022թ)	Պատասխանատու մարմին (ներ)	Վերստուգիչ ցուցանիշ (2022թ)	Մշտադիտարկման արդյունք
Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի վերափոխումը և զարգացումը:	ՀՀ գլխավոր դատախազության՝ կոռուպցիոն հանցագործությունների քննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող վարչության դատախազների համար	ՀՀ գլխավոր դատախազություն ԱՆ Արդարադատության ակադեմիա	Կոռուպցիոն հանցագործությունների քննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազների կազմի առնվազն 60%-ը անցել է համապատասխան	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է:** Ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ:**

[13] Իրավական ակտի նախագիծը ներկայացվել է հանրային քննարկման հետևյալ հղմամբ. https://www.e-draft.am/projects/4767

	կազմակերպվել են վերապատրաստումներ՝ մասնագիտացումը բարձրացնելու նպատակով:		վերապատրաստումներ (2022թ.):	

Համաձայն՝ ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված եզրափակիչ զեկույցի՝ գործողությունը գնահատվել է **կատարված է ամբողջությամբ,** գլխավոր դատախազությունում ստեղծված կոռուպցիոն հանցագործությունների քննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող ստորաբաժանման դատախազների 90%-ը անցել է համապատասխան վերապատրաստումներ: Ըստ ՀՀ գլխավոր դատախազության հայտնած տեղեկությունների՝ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության դատախազները մասնակցել են կոռուպցիայի դեմ պայքարի վերաբերյալ մի շարք դասընթացների և հանդիպումների՝ իրենց մասնագիտական որակները կատարելագործելու, միջազգային փորձն ուսումնասիրելու և ստացված գիտելիքները գործնականում արդյունավետորեն կիրառելու նպատակով:

Մշտադիտարկման խմբի կողմից ԱՆ-ին ներկայացվել էին հարցադրումներ ՀՀ գլխավոր դատախազության՝ կոռուպցիոն հանցագործությունների քննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող վարչության դատախազների համար անցկացված վերապատրաստումների որակական ազդեցությունը գնահատելու համար:

Քաղաքացիական հասարակությունը չի ընդգրկվել այս գործընթացում:

Նման պայմաններում, թեև ըստ ներկայացված տվյալների՝ քանակական առումով գործողությունը կատարված է, սակայն ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով ռազմավարական խնդիրը (արդյունքը) ոչ ամբողջական է իրականացվել, քանի որ ելակետային տվյալները հնարավորություն չեն տալիս գնահատել դրա արդյունավետությունը:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ Է:**

Ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ,** այս գործողության շրջանակներում իրականացված գործողությունները ամբողջապես չեն նպաստել հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի վերափոխմանը և զարգացմանը:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 5. Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման համար պատասխանատու մարմինների, ՀԿ-ների կարողությունների զարգացում

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի մակարդակում	Ակնկալվող արդյունքը՝ գործողության մակարդակում (2022թ)	Պատասխանատու մարմին (ներ)	Վերստուգիչ ցուցանիշ (2022թ)	Մշտադիտարկման արդյունք
Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի	ՀԿ-ների հետ համագործակցության շրջանակներում վերջիններիս	ԿԿՀ ԱՆ	ԱՆ հակակոռուպցիոն քաղաքականությունը մշակող համապատասխան	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ ՉԷ:**

վերափոխումը և զարգացումը:	կարիքների գնահատման հիման վրա ԿԿՀ-ի կողմից մշակվում են վերապատրաստման ծրագրեր: Դոնոր կազմակերպությունների աջակցությամբ իրականացվում են ՀԿ-ների ներկայացուցիչների վերապատրաստումներ: ՀԿ-ների ներկայացուցիչները պարբերաբար վերապատրաստվում են: ԱՆ-ի հակակոռուպցիոն քաղաքականությունը մշակող համապատասխան ստորաբաժանման աշխատակիցները պարբերաբար վերապատրաստվում են: Իրավասու ստորաբաժանումների գործառույթները հստակ տարանջատված են:		ստորաբաժանման աշխատակիցների առնվազն 40%-ն անցել է վերապատրաստում (2022թ.): Իրականացվել է առնվազն 2 վերապատրաստում ՀԿ-ների ներկայացուցիչների համար (2022թ.):	Ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՉԷ:**

Համաձայն՝ ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված եզրափակիչ զեկույցի՝ գործողությունը գնահատվել է **կատարված է մեծամասամբ** և ԱՆ հակակոռուպցիոն քաղաքականությունը մշակող ստորաբաժանման բոլոր աշխատակիցները անցել են վերապատրաստումներ, դոնոր կազմակերպությունների աջակցությամբ կոռուպցիայի դեմ պայքարի թեմաներով վերապատրաստումներ են անցկացվել գործարար ոլորտի ՀԿ-ների համար Երևանում, ինչպես նաև Ստրասբուրգում՝ 2 ՀԿ-ների մասնակցությամբ: Ըստ ԱՆ-ի տրամադրած լրացուցիչ տեղեկությունների՝ ՀԿ-ների համար իրականացվել են նաև այլ վերապատրաստումներ՝ կազմակերպված գործընկերների կողմից: Սակայն, որպես այդպիսին, ՀԿ-ների համար վերապատրաստման ծրագրեր չեն մշակվել:

Մշտադիտարկման խմբի կողմից ԱՆ-ին ներկայացվել էին հարցադրումներ ԱՆ-ի հակակոռուպցիոն քաղաքականությունը մշակող համապատասխան ստորաբաժանման աշխատակիցների համար անցկացված վերապատրաստումների որակական ազդեցությունը գնահատելու համար: Հիշյալին ԱՆ-ը լիարժեք պատասխան չի տրամադրել, հետևապես գործողության ազդեցությունը վերապատրաստման մասով չի գնահատվել՝ ամբողջական տեղեկատվության բացակայությամբ պայմանավորված:

Միաժամանակ, խնդրահարույց է <u>**սահմանած վերստուգիչ ցուցանիշը**</u>: ՀԿ-ների համար 2 վերապատրաստման իրականացումը օբյեկտիվորեն չի կարող ապահովել ռազմավարական խնդրի՝ ինստիտուցիոնալ համակարգի տարր հանդիսացող հակակոռուպցիոն ոլորտի մի քանի տասնյակ ՀԿ-ների «Կարողությունների զարգացում» սպասվող արդյունքի իրականացումը, ինչպես նաև սույն միջոցառման համար պատասխանատու պատկան մարմինների կողմից

մշտադիտարկման խմբին չեն ներկայացվել այնպիսի վկայող փաստեր, որոնք կվկայեն ռազմավարական խնդրի մակարդակում սպասվող վերջնական կամ միջանկյալ արդյունքների իրականացումը նաև ինստիտուցիոնալ համակարգի տարր հանդիսացող ՀՀ ԱՆ-ի մասով:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ ՉԷ:**

Ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՉԷ,** այս գործողության շրջանակներում իրականացված գործողությունները չեն նպաստել հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի վերափոխմանը և զարգացմանը:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 6. Դոնորների համակարգման մեխանիզմի բնականոն աշխատանքի ապահովում

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի մակարդակում	Ակնկալվող արդյունքը՝ գործողության մակարդակում (2022թ)	Պատասխանատու մարմին (ներ)	Վերստուգիչ ցուցանիշ (2022թ)	Մշտադիտարկման արդյունք
Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի վերափոխումը և զարգացումը:	Դոնորների աշխատանքների համակարգման նպատակով վերջիններիս և շահագրգիռ մարմինների հետ պարբերաբար քննարկումներ են իրականացվում: Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդն ըստ անհրաժեշտության անց է կացնում նիստ՝ նվիրված հակակոռուպցիոն ոլորտում դոնորների աշխատանքների համակարգմանը:	ԱՆ	Դոնորների աշխատանքների համակարգման նպատակով վերջիններիս և շահագրգիռ մարմինների հետ իրականացվել է առնվազն 1 քննարկում (2021-2022թթ.): Դոնորների ներգրավվածությունը հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների կատարման գործընթացին համամասնորեն բաշխված և համակարգված է (2021- 2022թթ):	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ ՉԷ:** Ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՉԷ:**

Համաձայն՝ ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված եզրափակիչ զեկույցի՝ գործողությունը գնահատվել է **կատարված է մեծամասամբ,** թեև դոնորների հետ պարբերաբար իրականացվել են հանդիպումներ, ներգրավվել են նաև շահագրգիռ մարմիններ, սակայն դոնորների և շահագրգիռ մարմինների համաժամանակյա հանդիպումները պարբերական բնույթ չեն կրել:

Մշտադիտարկման արդյունքները ցույց են տալիս, որ 2022 թվականի ընթացքում տեղի է ունեցել Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի մեկ նիստ[14], որի ընթացքում քննարկվել է ՀՀ-ում հակակոռուպցիոն ոլորտում իրականացված գործողությունները, ԳՐԵԿՈ-ի և ՏՀՋԿ-ի՝ ՀՀ-ի 2021 թվականի գնահատման արդյունքների վերաբերյալ առաջարկությունները: Բացի այդ, մշտադիտարկման խմբին չեն ներկայացվել այնպիսի վկայող փաստեր, որոնք կփաստեն սույն գործողության կատարումը: Ի լրումն, ԱՆ-ին ներկայացվել էին հարցադրումներ առ այն, թե արդյոք առկա է դոնորների ֆինանսական ներգրավվածության պլան կամ այլ փաստաթուղթ, որի հիման վրա երևում է գործընթացում դոնորների ներգրավվածության համամասնորեն բաշխվածությունը և համակարգվածությունը, ֆինանսական ծախսերի հաշվետվությունը: Հիշյալին ԱՆ-ը ամբողջական պատասխան չի տրամադրել:

Քաղաքացիական հասարակությունը չի ընդգրկվել այս գործընթացում:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ ՉԷ:**

Ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՉԷ,** այս գործողության շրջանակներում իրականացված գործողությունները չեն նպաստել հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի վերափոխմանը և զարգացմանը:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 7. ԱԺ-ի աշխատակազմում, Վարչապետի աշխատակազմում, անկախ և ինքնավար մարմիններում, քննչական մարմիններում, Դատական դեպարտամենտում, պետական կառավարման համակարգի մարմիններում, ՏԻՄ-երում հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների (անձ կամ ստորաբաժանում) նշանակում և գործառույթների ամրագրում համապատասխան փաստաթղթերում

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի մակարդակում	Ակնկալվող արդյունքը՝ գործողության մակարդակում (2022թ)	Պատասխանատու մարմին (ներ)	Վերստուգիչ ցուցանիշ (2022թ)	Մշտադիտարկման արդյունք
Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի վերափոխումը և զարգացումը:	ԱԺ-ի աշխատակազմում, Վարչապետի աշխատակազմում, անկախ և ինքնավար մարմիններում, քննչական մարմիններում, Դատական դեպարտամենտում, պետական կառավարման համակարգի մարմիններում հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուներ (անձ կամ ստորաբաժանում) նշանակման համար անհրաժեշտ իրավական հիմքերը սահմանվել են: Հակակոռուպցիոն ծրագրերի	ԱԺ-ի աշխատակազմ Վարչապետի աշխատակազմ Անկախ մարմիններ Ինքնավար մարմիններ Քննչական մարմիններ Պետական կառավարման համակարգի մարմիններ ՏԻՄ-եր	ԱԺ-ի աշխատակազմում, Վարչապետի աշխատակազմում, անկախ և ինքնավար մարմիններում, քննչական մարմիններում, Դատական դեպարտամենտում, պետական կառավարման համակարգի մարմիններում անհատական	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԵԾԱՄԱՍՍԱՄԲ:** Ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ:**

[14] Նիստը տեղի է ունեցել 2022 թվականի փետրվարի 16-ին, https://anti-corruption.gov.am/am/news?content.pid=4

	պատասխանատուները (պատասխանատու ստորաբաժանման աշխատողների) նշանակվել են, վերջիններիս պաշտոնի անձնագրերում (աշխատանքի նկարագիր) կամ համապատասխան անհատական իրավական ակտերում ամրագրված են հակակոռուպցիոն ծրագրերի և հակակոռուպցիոն ոլորտի միջազգային պարտավորությունների իրականացումից բխող գործառույթներ: Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների (պատասխանատու ստորաբաժանման աշխատողների) վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակված է համապատասխան մարմինների պաշտոնական կայքէջերում և Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի կայքում:	Արդարադատության ակադեմիա ՀԿ-ներ	իրավական ակտով կամ պաշտոնի անձնագրերով սահմանվել են հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուներ (անձ/ստորաբաժանում) (2022թ.):	

Համաձայն՝ ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված եզրափակիչ զեկույցի՝ գործողությունը գնահատվել է **կատարված է մեծամասամբ,** օրենսդրական ակտով ամրագրվել են հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների ինստիտուտի գործարկման համար անհրաժեշտ կարգավորումները: ԿԿՀ-ի և Վարչապետի աշխատակազմում Հակակոռուպցիոն ծրագրի պատասխանատու նշանակված չէ: Ապահովված է հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների վերաբերյալ տվյալների հրապարակայնությունը ԱՆ-ի և հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի կայքէջերում: Մնացյալ մարմինների կայքէջերում հրապարակման գործընթացը դեռևս ամբողջությամբ չի ավարտվել:

Մշտադիտարկման խումբը ուսումնասիրության է ենթարկել տարբեր պատկան մարմինների կայքէջերը, որտեղ նշված են հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուները: Այսպես, հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուի ինստիտուտը ենթադրում է, պետական և ՏԻ մարմիններում պետական կամ համայնքային ծառայություն իրականացնող կամ հանրային պաշտոն զբաղեցնող համապատասխան անձանց գործառույթներին ի լրումն սահմանել հակակոռուպցիոն ռազմավարություններով, ծրագրերով և ոլորտային միջազգային պարտավորություններով իրականացված կամ իրականացվելիք աշխատանքների համակարգման և ներկայացման գործառույթներ: Սակայն, մինույն ժամանակ, առկա չէ որևէ իրավական հիմք, որի շրջանակներում հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուները մինչև նշանակվելը պետք է ենթարկվեին որակական (մասնագիտական) ստուգման: Այս տեսանկյունից խնդրահարույց է գնահատվել այն պրակտիկան, համաձայն որի տարբեր պատկան մարմիններում հակակոռուպցիոն ծրագրի պատասխանատուների նշանակմանը չի նախորդել համապատասխան թեկնածուների որակական ստուգում, պարզելու՝ թե արդյոք

վերջիններս ունեն համապատասխան գիտելիքներ և հմտություններ հակակոռուպցիոն և բարեվարքության ոլորտներում, ինչպես է տեղի ունեցել նրանց նշանակումը, հատկապես այն պարագայում, երբ հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների գործառույթները դրվել են այլ հաստիք զբաղեցնող անձանց վրա[15]: Միաժամանակ, ինչպես տեղեկացնում են ՔԾԳ-ից, հարկ է նշել, որ հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների և նրանց փոխարինողների քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերում ամրագրված են ՀԾՄ օրենքով սահմանված համապատասխան գործառույթներն ու լիազորությունները:

Քաղաքացիական հասարակությունը առանձին միջոցառումներով չի ընդգրկվել այս գործընթացում, նախագիծը դրվել է հանրային քննարկման իրավական ակտերի հրապարակման միասնական հարթակում[16]:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԵԾԱՄԱՍԱՄԲ:**

Ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ,** այս գործողության շրջանակներում իրականացված գործողությունները ամբողջապես չեն նպաստել հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի վերափոխմանը և զարգացմանը:

Ընթացակարգային (քանակական) գնահատման ցուցանիշ 2022թ.		
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	7	100%
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ	2	28.57%
ՈՐԻՑ ՄԵԾԱՄԱՍԱՄԲ ԿԱՏԱՐՎԱԾ	3	42.86%
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻ	0	0%
ՈՐԻՑ ՉԿԱՏԱՐՎԱԾ	2	28.57%

Ազդեցության մակարդակի (որակական) գնահատման ցուցանիշ 2022թ.		
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	7	100%
ՈՐԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է	0	0%
ՈՐԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ	5	71.43%
ՈՐԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՉԷ	2	28.57%

[15] Օրինակ՝ Դատական դեպարտամենտի իրավական ակտերի մշակման և փորձաքննության վարչություն պետի ժամանակավոր պաշտոնակատարը միաժամանակ հանդիսանում է հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուն: Հասանելի է այստեղ. https://court.am/hy/central

[16] Իրավական ակտի նախագիծը ներկայացվել է հանրային քննարկման հետևյալ հղմամբ. https://www.e-draft.am/projects/4314

ՈԼՈՐՏ 2. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 8. Կոռուպցիոն ռիսկերի գնահատման հիման վրա ոլորտային միջոցառումների ծրագրի մշակում

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի մակարդակում	Ակնկալվող արդյունքը՝ գործողության մակարդակում (2022թ)	Պատասխանատու մարմին (ներ)	Վերստուգիչ ցուցանիշ (2022թ)	Մշտադիտարկման արդյունք
Վարչական կոռուպցիայի հաղթահարումը՝ ոլորտային կոռուպցիոն ռիսկերի վերհանման և դրանց նվազեցման, էլեկտրոնային ժողովրդավարության գործիքների շարունակական կատարելագործման միջոցով:	Մշակվել է կոռուպցիոն ռիսկերի գնահատման, վերլուծության և կառավարման հայեցակարգը և ներկայացվել է Կառավարության հաստատմանը:	ԿԿՀ ԱՆ ՀԿ-ներ	Կառավարության կողմից հաստատվել է կոռուպցիոն ռիսկերի գնահատման, վերլուծության և կառավարման հայեցակարգը (2022թ.):	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԱՍՆԱԿԻ:** Ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ:**

Համաձայն՝ ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված եզրափակիչ զեկույցի՝ գործողությունը գնահատվել է **կատարված է մասնակի,** կոռուպցիոն ռիսկերի գնահատման, վերլուծության և կառավարման հայեցակարգը գտնվում է լրամշակման փուլում:

Ըստ ԿԿՀ-ի՝ գործողության մասնակի կատարումը պայմանավորված է այն հանգամանքով, որ ԿԿՀ-ը չունի կոռուպցիոն ռիսկերի գնահատման մեթոդաբանության մշակման համար լիազորություն: Մասնավորապես, 2022 թվականի հունիսի 15-ին շրջանառված՝ պետական և ՏԻ մարմիններում կոռուպցիոն ռիսկերի կառավարման հայեցակարգի նախագիծը խնդրահարույց է դիտարկվել լիազորող նորմի բացակայության տեսանկյունից, ինչի հետևանքով գործընթաց կասեցվել է մինչև օրենսդրական փոփոխությունների փաթեթի շրջանառումը:

Ըստ մշտադիտարկման արդյունքների՝ «Բարեվարքության խթանում և կոռուպցիայի կանխարգելում Հայաստանի պետական հատվածում» ԵՄ Թվինինգ ծրագրի 4-րդ բաղադրիչի շրջանակում ԿԿՀ-ը մշակել է պետական մասնակցությամբ ձեռնարկություններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման մեթոդաբանությունը: Պետական մարմիններում և ՏԻՄ-երում կոռուպցիոն ռիսկերի կառավարման հայեցակարգի մշակման համար ուսումնասիրվել են ինչպես միջազգային հիմնական ստանդարտները (ՏՀԶԿ, ԱՄՆ ՄԶԳ, ՄԱԶԾ, ԻՍՕ), այնպես էլ տարբեր պետությունների փորձը (Կորեա, Նիդերլանդներ, Սլովենիա, Ուկրաինա, Լատվիա, Ալբանիա և այլն): ԿԿՀ-ի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ միջազգային պրակտիկայում գոյություն ունեն կոռուպցիոն ռիսկերի գնահատման տարբեր մեթոդաբանություններ, որոնք ապացուցել են իրենց կենսունակությունը տարբեր երկրներում, սակայն դրանցից յուրաքանչյուրը հարմարեցված է տեղային պայմաններին՝ յուրաքանչյուր երկրի համատեքստը հաշվի առնելով: Այնուամենայնիվ, չկա բոլոր իրավիճակներում կիրառելի միասնական մեկ մեթոդաբանություն, քանի որ կոռուպցիայի դրսևորումները և հակակոռուպցիոն մեխանիզմները, ինչպես նաև

քաղաքականության իրագործման համատեքստը տարբերվում են տարբեր պետություններում և իրավիճակներում: Հաշվի առնելով տարբեր երկրներում կիրառված փորձը, ինչպես նաև միջազգային փորձագետների հետ ԿԿՀ-ի կատարած ուսումնասիրությունները՝ որպես ռիսկերի գնահատման կիրառելի ստանդարտ ընտրվել է Ստանդարտների միջազգային կազմակերպության մոդելը, որը հեշտությամբ ինտեգրվում է կառավարման գրեթե բոլոր համակարգերում:

Անդրադառնալով այն հարցին, թե արդյոք իրականացվել է ԿԿՀ-ի կարողությունների գնահատում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ կարողություններն ու ռեսուրսները չեն գնահատվում, սակայն դրան զուգահեռ ավելանում են ԿԿՀ-ի լիազորություններն ու գործառույթները, նշվեց, որ կարողությունների, ռեսուրսի և կարիքի գնահատում չի կատարվել:

Քաղաքացիական հասարակությունը առանձին միջոցառումներով չի ընդգրկվել այս գործընթացում, մշակվել է օրենքի նախագիծ, որը միայն դրվել է հանրային քննարկման իրավական ակտերի հրապարակման միասնական հարթակում[17]:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԱՍՆԱԿԻ:**

Ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ,** այս գործողության շրջանակներում ոլորտային կոռուպցիոն ռիսկերի վերհանման և դրանց նվազեցման միջոցով վարչական կոռուպցիայի հաղթահարմանն ուղղված գործողությունները ամբողջապես չեն իրականացվել:

ՈԼՈՐՏ 2.1. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ (բարեվարքություն)

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 9. Պետական պաշտոններում նշանակման ենթակա անձանց, Բարձրագույն դատական խորհրդի անդամների, դատավորների, այդ թվում՝ Սահմանադրական դատարանի, թեկնածուների, դատախազների թեկնածուների, քննիչների, առաջխաղացման ցուցակներում ընդգրկված քննիչների, դատախազների և դատավորների, ինչպես նաև ինքնավար և անկախ մարմինների անդամների թեկնածուների բարեվարքության կանոնների պահպանման նկատմամբ հսկողության իրականացման կառուցակարգերի ձևավորում

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի մակարդակում	Ակնկալվող արդյունքը՝ գործողության մակարդակում (2022թ)	Պատասխանատու մարմին (ներ)	Վերստուգիչ ցուցանիշ (2022թ)	Մշտադիտարկման արդյունք
Հանրային ծառայողի օրինավոր և բարեխիղճ կերպարի ձևավորումը՝ հաշվետվողականության, թափանցիկության	ԿԿՀ-ը իրականացնում է ««ՀԾՄ» օրենքով սահմանված դեպքերում և կարգով պետական պաշտոններում նշանակման ենթակա անձանց, «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով	ԱՆ ԿԿՀ	Քննիչների թեկնածուների, առաջխաղացման ցուցակներում ընդգրկված քննիչների, ինչպես նաև ինքնավար և անկախ մարմինների	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԱՍՆԱԿԻ:** Ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է**

[17] Իրավական ակտի նախագիծը ներկայացվել է հանրային քննարկման հետևյալ հղմամբ. https://www.e-draft.am/projects/4563

և բարեվարքության ապահովման համապատասխան կառուցակարգերի ներդրմամբ:	սահմանված դեպքերում ու կարգով ԲԴԽ անդամների թեկնածուների, դատավորների՝ այդ թվում ՍԴ-ի, թեկնածուների հավակնորդների, «Դատախազության մասին» օրենքով սահմանված դեպքերում ու կարգով դատախազների թեկնածուների հավակնորդների, օրենքով սահմանված դեպքերում՝ քննիչների թեկնածուների բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրություններ, դրանց հիման վրա համապատասխան անձանց ներկայացնում խորհրդատվական բնույթի եզրակացություններ: Մշակվել և ՀՀ ԱԺ է ներկայացվել «ԿԿՀ մասին» և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծեր, որով ԿԿՀ-ին վերապահվել է քննիչների թեկնածուների, առաջխաղացման ցուցակներում ընդգրկված քննիչների, ինչպես նաև ինքնավար և անկախ մարմինների անդամների թեկնածուների բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացման, դրանց հիման վրա նշանակելու/ընտրելու իրավասություն ունեցող անձանց խորհրդատվական եզրակացություններ տրամադրելու վերաբերյալ իրավասություն:		անդամի ընտրության/նշանակման գործընթացը ներառում է բարեվարքության ուսումնասիրության փուլ (2022թ.): Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը ՀՀ պետական պաշտոնի հավակնող անձանց բարեվարքության վերաբերյալ 2022թ.-ին ներկայացրել է առնվազն 150 եզրակացություն:	ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ:

Համաձայն՝ ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված եզրափակիչ զեկույցի՝ գործողությունը գնահատվել է **կատարված է մասնակի,** 2022 թ.-ի ընթացքում ԿԿՀ-ն իրականացրել է պետական պաշտոնի հավակնող թվով 512 անձանց վերաբերյալ բարեվարքության ուսումնասիրություն, ինչի արդյունքում համապատասխան մարմիններ են ներկայացվել 505 խորհրդատվական բնույթի եզրակացություններ: Մշակվել է քննիչների թեկնածուների, առաջխաղացման ցուցակներում ընդգրկված քննիչների, ինչպես նաև ինքնավար և անկախ մարմինների անդամի

ընտրության/նշանակման գործընթացի ընթացքում վերջիններիս բարեվարքության ստուգման կառուցակարգերը սահմանող օրենսդրական ակտերի նախագծերի փաթեթը:

Ըստ ԿԿՀ-ի՝ սույն գործողությունը լրացման է ենթարկվել ՀՀ կառավարության 2022 թվականի օգոստոսի 24-ի թիվ 1351 որոշմամբ՝ ԿԿՀ-ին վերապահելով քննիչների թեկնածուների, առաջխաղացման ցուցակներում ընդգրկված քննիչների, ինչպես նաև ինքնավար և անկախ մարմինների անդամների թեկնածուների բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրության իրականացման, դրանց հիման վրա նշանակելու/ընտրելու իրավասություն ունեցող անձանց խորհրդատվական եզրակացություններ տրամադրելու վերաբերյալ իրավասություն: Չնայած դրան՝ համապատասխան օրենսդրական փոփոխությունը չի իրականացվել, ինչի հետևանքով ԿԿՀ-ը նշված շրջանակի անձանց բարեվարքության ուսումնասիրություն չի իրականացրել:

Ըստ մշտադիտարկման արդյունքների՝ ՔՀԿ-ները և փորձագետները պնդում են, որ բարեվարքության եզրակացության եզրափակիչ մասը անհրաժեշտ է հրապարակել, ծածկելով անձնական տվյալները՝ մինչև բարեվարքության ստուգում անցնող անձի պաշտոնում նշանակվելը, որով կապահովվի նաև հանրային ազդեցություն և կգնահատվի այս ինստիտուտի արդյունավետությունը՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ բարձրաստիճան պաշտոնի են նշանակվում նաև բացասական եզրակացություն ստացած թեկնածուները: Բացի այդ, անհրաժեշտ է ընդլայնել բարեվարքություն անցնող անձանց շրջանակը, մասնավորապես՝ ներառել հանրային նշանակովի պաշտոն զբաղեցնող անձանց, ինչպես օրինակ՝ նախարար, փոխնախարար, Վարչապետին առընթեր մարմինների ղեկավարներ և այլն, ինչպես նաև ներդնել ընթացիկ բարեվարքության ստուգման կառուցակարգեր, օրինակ՝ քննիչների, դատախազների և այլ սուբյեկտային կազմի համար:

Վերհանված խնդիրներից էր՝ բարեվարքության ստուգման փուլի թվայնացման բացակայությունը: Ինչպես փոխանցեցին ԿԿՀ-ից՝ մշակվում է նոր հայտարարագրման համակարգը, որը ներառում է նաև բարեվարքության ուսումնասիրման հատված: Ներկայիս էքսել ծրագրի միջոցով հարշացարը լրացնելու փոխարեն, անձինք կկարողանան մուտք գործել համակարգ և էլեկտրոնային տարբերակով լրացնել հարցաթերթիկը: **Վերհանվել է նաև համագործակցության խնդիր** ԱՆ-ի և ԿԿՀ-ի միջև, քանի որ այս ոլորտում ԱՆ-ի կողմից նախատեսվում են օրենսդրական փոփոխություններ, որոնք ըստ ԿԿՀ-ի ներկայացուցչի՝ իրենց հետ համաձայնեցրած չեն՝ չնայած ԱՆ-ի հակառակ պնդումների:

Քաղաքացիական հասարակությունը առանձին միջոցառումներով չի ընդգրկվել այս գործընթացում, ՀՀ պետական կառավարման համակարգի և ՏԻՄ-երում կոռուպցիոն ռիսկերի գնահատման մեթոդաբանության մշակումը ԿԿՀ-ին վերապահելու նպատակով մշակվել է օրենքի նախագիծ, որը միայն դրվել է հանրային քննարկման իրավական ակտերի հրապարակման միասնական հարթակում[18]:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾԷ ՄԱՍՆԱԿԻ:**

Ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ,** այս գործողության շրջանակներում հաշվետվողականության, թափանցիկության և բարեվարքության ապահովման

[18] Իրավական ակտի նախագիծը ներկայացվել է հանրային քննարկման հետևյալ հղմամբ. https://www.e-draft.am/projects/4563

համապատասխան կառուցակարգերի ներդրմամբ հանրային ծառայողի օրինավոր և բարեխիղճ կերպարի ձևավորման գործընթացը ամբողջապես չի իրականացվել:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 10. «Հանրային ծառայության մասին» և «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքների կատարման արդյունավետության գնահատում

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի մակարդակում	Ակնկալվող արդյունքը՝ գործողության մակարդակում (2022թ)	Պատասխանատու մարմին (ներ)	Վերստուգիչ ցուցանիշ (2022թ)	Մշտադիտարկման արդյունք
Հանրային ծառայողի օրինավոր և բարեխիղճ կերպարի ձևավորումը՝ հաշվետվողականության, թափանցիկության և բարեվարքության ապահովման համապատասխան կառուցակարգերի ներդրմամբ:	Իրականացվել են գնահատումներ՝ պարզելու «ՀԾՄ» և «ՔԾՄ» օրենքների կատարման ընթացքը: Գնահատումների հիման վրա ՀՀ Վարչապետին ներկայացվել է առաջարկությունների փաթեթ, արդյունքները քննարկվել են Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի նիստում:	Վարչապետի աշխատակազմի ՔԾԳ ԿԿՀ ՀԿ-ներ	«ՀԾՄ» և «ՔԾՄ» օրենքների կատարման վերաբերյալ գնահատման արդյունքների հիման վրա մշակված առաջարկությունների փաթեթը քննարկվել է Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի նիստում, որի վերաբերյալ շահագրգիռ մարմիններին տրվել են համապատասխան հանձնարարականներ (2022թ.):	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԵԾԱՄԱՍՍԱՄԲ:** Ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ:**

Համաձայն՝ ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված եզրափակիչ զեկույցի՝ գործողությունը գնահատվել է **կատարված է մեծամասամբ,** տեղեկատվական հարթակի միջոցով 2022 թ.-ին գնահատվել են էլեկտրոնային եղանակով ընթացող մրցույթների անցկացման թափանցիկությունը, «ՀԾՄ» և «ՔԾՄ» օրենքների պահանջների պահպանումը: Տեղեկատվական հարթակի գործող լուծումները հնարավորություն են տալիս ապահովելու մրցույթների թափանցիկությունը, չեզոքացնելու կոռուպցիոն ռիսկերը:

Ըստ մշտադիտարկման արդյունքների՝ 2022 թ.-ի ընթացքում տեղի է ունեցել Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի մեկ նիստ[19], որի ընթացքում «ՀԾՄ» և «ՔԾՄ» օրենքների կատարման վերաբերյալ գնահատման արդյունքների հիման վրա մշակված առաջարկությունների փաթեթը չի քննարկվել:

[19] Նիստը տեղի է ունեցել 2022 թվականի փետրվարի 16-ին, https://anti-corruption.gov.am/am/news?content.pid=4

Քաղաքացիական հասարակությունը չի ընդգրկվել այս գործընթացում:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԵԾԱՄԱՍԱՄԲ:**

Ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ,** այս գործողության շրջանակներում հաշվետվողականության, թափանցիկության և բարեվարքության ապահովման համապատասխան կառուցակարգերի ներդրմամբ հանրային ծառայողի օրինավոր և բարեխիղճ կերպարի ձևավորման գործընթացը ամբողջապես չի իրականացվել:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 11. «Հանրային ծառայության մասին» օրենքին համապատասխան էթիկայի հանձնաժողովների ու ԲՀԿ-ների ինստիտուտի ձևավորում և գործարկում

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի մակարդակում	Ակնկալվող արդյունքը՝ գործողության մակարդակում (2022թ)	Պատասխանատու մարմին (ներ)	Վերստուգիչ ցուցանիշ (2022թ)	Մշտադիտարկման արդյունք
Հանրային ծառայողի օրինավոր և բարեխիղճ կերպարի ձևավորումը՝ հաշվետվողականության, թափանցիկության և բարեվարքության ապահովման համապատասխան կառուցակարգերի ներդրմամբ:	ԿԿՀ-ի կողմից ԲՀԿ-ների գործունեության համակարգման իրավասությունները սահմանող օրենսդրական փաթեթը մշակվել է և ներկայացվել է ԱԺ: Վերլուծվել և գնահատվել է ԲՀԿ-ների՝ իրենց գործառույթները գործնականում իրականացնելու համար անհրաժեշտ գործիքակազմի ապահովման հարցը: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից մշակվել և ընդունվել են էթիկայի հանձնաժողովների և ԲՀԿ-ների գործունեության ուղեցույցներ: Էթիկայի հանձնաժողովի անդամների և ԲՀԿ-ների համար մշակվել են վերապատրաստման ծրագրեր, կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ: ԲՀԿ-ներին ապահովվել են իրենց գործառույթների գործնականում իրականացնելու համար անհրաժեշտ գործիքակազմով:	Վարչապետի աշխատակազմի ՔԾԳ ԿԿՀ ԱՆ ՀԿ-ներ	Մշակվել և ՀՀ ԱԺ է ներկայացվել ԿԿՀ-ի կողմից ԲՀԿ-ների գործունեության համակարգման իրավասությունները սահմանող օրենսդրական փաթեթը (2022թ.): ԿԿՀ-ի կողմից մշակվել և ընդունվել է էթիկայի հանձնաժողովների և ԲՀԿ-ների գործունեության առնվազն 2 ուղեցույց (2022թ.) ԲՀԿ-ներն ունեն իրենց գործունեությունն ապահովող համապատասխան գործիքակազմ (2022թ.): Առնվազն պետական մարմինների շրջանակում իրականացվել է առնվազն 1 վերապատրաստում (2022թ.):	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ ՉԷ:** Ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՉԷ:**

Համաձայն՝ ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված եզրափակիչ զեկույցի՝ գործողությունը գնահատվել է **կատարված չէ,** ԲՀԿ-ների համար իրականացվել են վերապատրաստումներ, քննարկվել են ԲՀԿ-ների գործառույթների արդյունավետ իրականացման հարցերը: ԲՀԿ-ների էթիկայի հանձնաժողովների և ԲՀԿ-ների գործունեության ուղեցույցները մշակված և հաստատված չեն, ԿԿՀ-ն ԲՀԿ-ների գործունեության համակարգման իրավասությունները սահմանող օրենսդրական փաթեթը չի մշակել:

Մշտադիտարկման խմբի կողմից ԱՆ-ին ներկայացվել էին հարցադրումներ առ այն, թե արդյոք առկա է վերլուծություն և գնահատում՝ ԲՀԿ-ների՝ իրենց գործառույթները գործնականում իրականացնելու համար անհրաժեշտ գործիքակազմի ապահովման հարցի վերաբերյալ, և ինչ եզրահանգումներ են եղել, առկա է գնահատում բարեվարքության և էթիկայի հանձնաժողովի գործունեության արդյունավետության վերաբերյալ և ինչ արդյունքներ կան:

Ըստ ՔԾԳ-ի՝ ուղեցույցները դեռևս պատրաստ չեն, մշակվել են նախագծեր, որոնք ներկայացվել են ԿԿՀ: Միաժամանակ հայտնել են, որ Կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի N 1332-Լ որոշմամբ[20] հաստատված N 2 հավելվածի մինչև 2022 թվականի օգոստոսի 24-ը եղած խմբագրությամբ, լինելով 11-րդ միջոցառման հիմնական կատարողը, ՔԾԳ-ը հնարավորություն չի ունեցել էթիկայի հանձնաժողովների և ԲՀԿ-ների՝ իրենց գործառույթները գործնականում իրականացնելու համար անհրաժեշտ գործիքակազմի վերլուծության և գնահատման ուղղությամբ աշխատանքներ իրականացնելու, քանի որ այս գործընթացը խոչընդոտվել էր հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների ընդունման ձգձգմամբ: Այս պայմաններում հատկապես էթիկայի հանձնաժողովների, իսկ վարքագծի կանոնների և ծառայողական քննությունների մասով բարեվարքության հարցերով կազմակերպիչների համար չունենալով գործունեության ուղեցույցները, հնարավոր չէր վերլուծել և գնահատել վերջիններիս գործունեության համար անհրաժեշտ գործիքակազմերը, ինչպես նաև գնահատել վերջիններիս գործունեության արդյունավետությունը:

ՏԽՔ-ի ընթացքում վերհանված հիմնական խնդիրներից է, որ ԲՀԿ-ներին չեն դիմում, նրանց չեն վստահում, ԲՀԿ-ների համակարգման կենտրոնական մարմին առկա չէ, նրանց անկախության իրական երաշխիքները ապահովված չեն:

Քաղաքացիական հասարակությունը չի ընդգրկվել այս գործընթացում:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ ՉԷ:**

Ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՉԷ,** այս գործողության շրջանակներում հաշվետվողականության, թափանցիկության և բարեվարքության ապահովման համապատասխան կառուցակարգերի ներդրմամբ հանրային ծառայողի օրինավոր և բարեխիղճ կերպարի ձևավորման գործընթացը չի իրականացվել:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 12. «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված՝ հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնների, քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնների, պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի,

[20] Որոշմամբ հաստատվել էր Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը:

Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների սահմանում

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի մակարդակում	Ակնկալվող արդյունքը՝ գործողության մակարդակում (2022թ)	Պատասխանատու մարմին (ներ)	Վերստուգիչ ցուցանիշ (2022թ)	Մշտադիտարկման արդյունք
Հանրային ծառայողի օրինավոր և բարեխիղճ կերպարի ձևավորումը՝ հաշվետվողականության, թափանցիկության և բարեվարքության ապահովման համապատասխան կառուցակարգերի ներդրմամբ:	Հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնների հիման վրա ընդունվել և հրապարակվել են քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնները: Միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա մշակվել և ընդունվել են պետական կառավարման համակարգի մարմինների ղեկավարների և նրանց տեղակալների վարքագծի կանոնները, զուգահեռաբար սահմանվել են լիազորող նորմերը:	ԿԿՀ Վարչապետի աշխատակազմի ՔԾԳ ԱՆ Պետական կառավարման համակարգի մարմիններ	Հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոններն ընդունվել են (2022թ.): Հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնների հիման վրա ընդունվել են քաղ. ծառայողի վարքագծի կանոնները: (2022թ.): Պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, ԲԴԽ անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց համար սահմանվել են վարքագծի կանոններ (2022թ.): Պաշտոնական կայքէջերում հրապարակվել են հանրային ծառայողի վարքագծի կանոնները և քաղ. ծառայողի վարքագծի կանոնները, պետական կառավարման համակարգի մարմինների ղեկավարների և նրանց տեղակալների վարքագծի կանոնները (2022թ.):	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԱՍՆԱԿԻ:** Ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ:**

Համաձայն՝ ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված եզրափակիչ զեկույցի՝ գործողությունը գնահատվել է **կատարված է մասնակի,** հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնները և դրա հիման վրա քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնները սահմանվել են, ապահովվել են դրանց հրապարակայնությունը, անցկացվել են մի շարք վերապատրաստումներ:

Ըստ մշտադիտարկման արդյունքների՝ պետական կառավարման համակարգի մարմինների ղեկավարների և նրանց տեղակալների վարքագծի կանոնները դեռևս սահմանված չեն: Սահմանված չեն նաև պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, ԲԴԽ-ի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց համար վարքագծի կանոնները (կանոնագիրքը): Ըստ ԿԿՀ-ի՝ կանոնագրքի մշակման աշխատանքները մեկնարկել են նախքան 2022 թ.-ը և նախատեսվում է, որ այն կհաստատվի 2023 թ.-ի երկրորդ կիսամյակում:

Քաղաքացիական հասարակությունը ընդգրկվել է այս գործընթացում: «Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնները հաստատելու մասին» որոշման նախագիծը դրվել է հանրային քննարկման իրավական ակտերի հրապարակման միասնական հարթակում[21]:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԱՍՆԱԿԻ:**

Ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ,** այս գործողության շրջանակներում հաշվետվողականության, թափանցիկության և բարեվարքության ապահովման համապատասխան կառուցակարգերի ներդրմամբ հանրային ծառայողի օրինավոր և բարեխիղճ կերպարի ձևավորման գործընթացը ամբողջապես չի իրականացվել:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 13. Պատգամավորի, քննիչի, վարքագծի կանոնների սահմանում, դատախազների և դատավորների վարքագծի կանոնների վերանայում

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի մակարդակում	Ակնկալվող արդյունքը՝ գործողության մակարդակում (2022թ)	Պատասխանատու մարմին (ներ)	Վերստուգիչ ցուցանիշ (2022թ)	Մշտադիտարկման արդյունք
Հանրային ծառայողի օրինավոր և բարեխիղճ կերպարի ձևավորումը՝ հաշվետվողականության, թափանցիկության և բարեվարքության ապահովման համապատասխան	Հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնների հաշվառմամբ պատգամավորի և քննիչի վարքագծի կանոնների նախագծերը լրամշակվել են և հաստատվել են: Դատախազների և դատավորների վարքագծի կանոնները վերանայվել են՝ հաշվի առնելով հանրային ծառայողի	ԱԺ ՔՀԿ ՀԿԿ ԿԿՀ Գլխավոր դատախազություն ԲԴԽ	Միջազգային փորձի հիման վրա մշակված պատգամավորի, քննիչի վարքագծի կանոնները հաստատվել են: Դատախազների և դատավորների վարքագծի կանոնները վերանայվել են: Քննիչների և պատգամավորների համար իրականացվել	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԱՍՆԱԿԻ:** Ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ:**

[21] Իրավական ակտի նախագիծը ներկայացվել է հանրային քննարկման հետևյալ հղմամբ. https://www.e-draft.am/projects/4098

կառուցակարգերի ներդրմամբ:	վարքագծի տիպային կանոնները:		է առնվազն 2 վերապատրաստում:	

Համաձայն՝ ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված եզրափակիչ զեկույցի՝ գործողությունը գնահատվել է **կատարված է մասնակի,** հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնների հաշվառմամբ հաստատվել է Քննչական կոմիտեի քննիչների վարքագծի կանոնները: Պատգամավորների, ՀԿԿ քննիչների վարքագծի կանոնները մշակվել են, իսկ դատախազների վարքագծի կանոնները կլրամշակվեն և կհաստատվեն Ուղեցույցի հաստատումից հետո: Դատավորների վարքագծի կանոնները վերանայվել են: Վերապատրաստումների մասով՝ դատախազների համար անցկացվել են վերապատրաստումներ վարքագծի կանոնների վերաբերյալ թեմայով, իսկ մյուս պաշտոնատար անձանց համար վերապատրաստումները կանցկացվեն վարքագծի կանոնների հաստատումից հետո:

Ըստ մշտադիտարկման արդյունքների՝ պատգամավորի առանձին վարքագծի կանոններ դեռևս ընդունված չեն, թեև նախագիծը մշակվել է: Քննչական կոմիտեն ընդունել է վարքագծի կանոնները 2022 թվականի հունիսի 14-ին: ՀԿԿ-ը, հիմք ընդունելով ԿԿՀ տիպային կանոնների հրապարակումը, մշակել է ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի տիպային կանոններ, սակայն դրանք գտնվում եմ վերամշակման փուլում: ՀԿԿ-ի և Գլխավոր դատախազության դիրքորոշման համաձայն՝ ՀԿԿ-ի քննիչների և դատախազների վարքագծի կանոնների վերանայումը ձգձգվում է, քանի որ դա կարող է իրականացվել ԿԿՀ-ի կողմից Ուղեցույցի հաստատումից հետո:

Այս գործողության մասով ԿԿՀ-ի կողմից **բարձրաձայնված խնդիրներից է այն**, որ թեև ԿԿՀ-ն համանուն օրենքի համաձայն հանրային պաշտոն և հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի սկզբունքների մեկնաբանման, ինչպես նաև հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնների պահպանման միասնականությունն ապահովելու գործառույթ ունի, սակայն լիազորություն, որպես այդպիսին չունի, որով կկարողանա ապահովել այդ կանոնների իմպերատիվ բնույթը: Մասնավորապես, «ՀԾՄ» օրենքով՝ Քննչական կոմիտեն պարտավոր չէ ընդունել ԿԿՀ-ի մշակած վարքագծի կանոնները՝ որպես տիպային: Նույնը վերաբերում է նաև ԱԺ-ին: Անհրաժեշտ է կատարել օրենսդրական փոփոխություն և սահմանել կողմերի լիազորությունների շրջանակը՝ հիշյալի լույսի ներքո: Միաժամանակ, խնդրահարույց է **սահմանած վերստուգիչ ցուցանիշը**: Քննիչների և պատգամավորների համար 2 վերապատրաստման իրականացումը օբյեկտիվորեն չի կարող ապահովել ռազմավարական խնդրի՝ հանրային ծառայողի օրինավոր և բարեխիղճ կերպարի ձևավորումը:

Քաղաքացիական հասարակությունը չի ընդգրկվել այս գործընթացում:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԱՍՆԱԿԻ:**

Ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ,** այս գործողության շրջանակներում հաշվետվողականության, թափանցիկության և բարեվարքության ապահովման համապատասխան կառուցակարգերի ներդրմամբ հանրային ծառայողի օրինավոր և բարեխիղճ կերպարի ձևավորման գործընթացը ամբողջապես չի իրականացվել:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 14. Քաղաքացիական ծառայության ոլորտում արժանիքահեն համակարգի ապահովում

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի մակարդակում	Ակնկալվող արդյունքը՝ գործողության մակարդակում (2022թ)	Պատասխանատու մարմին (ներ)	Վերստուգիչ ցուցանիշ (2022թ)	Մշտադիտարկման արդյունք
Հանրային ծառայողի օրինավոր և բարեխիղճ կերպարի ձևավորումը՝ հաշվետվողականության, թափանցիկության և բարեվարքության ապահովման համապատասխան կառուցակարգերի ներդրմամբ:	Վերանայվել են ՔԾ-ի պաշտոն զբաղեցնելու մրցութային հանձնաժողովների ձևավորման կարգերը՝ զրոյականացնելով քաղաքացիական ծառայողների ներգրավման գործընթացում քաղաքական ազդեցությունը Սահմանվել են մրցութային հանձնաժողովների ձևավորման հստակ չափանիշներ:	Վարչապետի աշխատակազմի ՔԾԳ ՀԿ-ներ	Ընդունվել են մրցութային հանձնաժողովների ձևավորման կարգն ու չափանիշները հաստատելու մասին հարաբերությունները կարգավորող իրավական ակտերը (2022թ.): Առնվազն 10 մրցույթ իրականացվել է նոր կարգով (2022թ.):	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ ՉԷ:** Ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է:**

Համաձայն՝ ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված եզրափակիչ զեկույցի՝ գործողությունը գնահատվել է **կատարված չէ,** ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող «Աջակցություն ՀՀ-ում ՔԾ-ի բարեփոխումների հետագա իրականացմանը» Թվինինգ ծրագրի փորձագետների աջակցությամբ գնահատվել են մրցութային հանձնաժողովների ձևավորման համար ամրագրված պահանջները, ուսումնասիրվել են Տեղեկատվական հարթակի միջոցով ընթացող մրցույթների հանձնաժողովների կազմերի համապատասխանությունը իրավական ակտերի պահանջներին, գնահատվել են առկա ռիսկերը՝ իրավական ակտերում փոփոխություններ կատարելու նպատակով: Իրականացվել են վերապատրաստումներ քաղաքացիական ծառայողների մրցույթների հարցազրույցի փուլի ընթացքում հանձնաժողովի անդամության թեկնածուների դերին և պատասխանատվությանն առնչվող թեմաներով:

Ըստ մշտադիտարկման արդյունքների՝ մրցութային հանձնաժողովների ձևավորման կարգն ու չափանիշները հաստատելու մասին հարաբերությունները կարգավորող իրավական ակտերը չեն մշակել և ընդունվել, հետևաբար նոր կարգով մրցույթներ ևս չեն անցկացվել: Միաժամանակ, պետք է նշել, որ թեև միջոցառման վերստուգիչ ցուցիչ է սահմանվել մրցութային հանձնաժողովների ձևավորման կարգն ու չափանիշները հաստատելու մասին հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի ընդունումը, այնուամենայնիվ ՔԾՄ գործող օրենքով նման պահանջ նախատեսված չէ: Օրենքի 10-րդ հոդվածի 22-րդ մասով նախատեսված է դրույթ, համաձայն որի մրցույթ անցկացնելու կարգը սահմանում է կառավարությունը: ՔԾ-ի թափուր պաշտոն զբաղեցնելու համար հարցազրույց անցկացնող հանձնաժողովի ձևավորման, հանձնաժողովի կազմում ընդգրկվող պաշտոնատար անձանց և այլ թեկնածուների վերաբերյալ դրույթները սահմանված են նույն հոդվածի 13-14-րդ մասերում: Բացառություն է նախատեսված միայն գլխավոր քարտուղարի թափուր պաշտոնը համալրելու համար ձևավորվող հանձնաժողովների մասով: «Քաղաքացիական ծառայության ոլորտում արժանիքահեն համակարգի ապահովում» միջոցառման մասով նախատեսված վերստուգիչ ցուցանիշի ապահովումը ՔԾԳ-ը առաջարկել է վերանայել:

Հարկ է նաև ավելացնել, որ 2022 թ.-ին կազմակերպվել են վերապատրաստումներ համապատասխան մարմինների քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթների հարցազրույց փուլի հանձնաժողովի անդամության թեկնածուների համար: Հարցազրույցի փուլի իրավակարգավորումները և Տեղեկատվական հարթակի գործող լուծումները ներկա պահին հնարավորություն են տալիս ապահովելու մրցույթների թափանցիկությունը և արժանիքահեն համակարգի ձևավորումը, մասնավորապես՝ հարցազրույցի ավարտից անմիջապես հետո մրցույթի մասնակցի ներկայությամբ հանձնաժողովի անդամների կողմից հարցազրույցը գնահատելը, հարցազրույցի փուլի տեսաձայնագրումը այն կարևոր գործիքակազմերն են, որոնք կոչված են բարձրացնելու դիմորդի վստահությունը հանձնաժողովի անդամների նկատմամբ:

Քաղաքացիական հասարակությունը չի ընդգրկվել այս գործընթացում:

Նման պայմաններում, թեև ըստ ներկայացված տվյալների՝ քանակական առումով գործողությունը կատարված չէ, սակայն ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով ռազմավարական խնդիրը (արդյունքը) իրականացվել է, քանի որ այն նպատակը, որը դրվել է գործողության հիմքում՝ մեծամասամբ իրականացվել է:**Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով** գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ ՉԷ:**

Ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է,** այս գործողության շրջանակներում հաշվետվողականության, թափանցիկության և բարեվարքության ապահովման համապատասխան կառուցակարգերի ներդրմամբ հանրային ծառայողի օրինավոր և բարեխիղճ կերպարի ձևավորման գործընթացը իրականացվել է:

ՈԼՈՐՏ 2. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

2.2. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ (հայտարարագրում, նվերներ, կարգավորման ազդեցության գնահատում, գնումներ, մասնավոր ոլորտ, իրական շահառուներ, տնտեսական մրցակցության պաշտպանություն)

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 15. Հակակոռուպցիոն կարգավորման ազդեցության գնահատման համակարգի արդյունավետության բարձրացում

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի մակարդակում	Ակնկալվող արդյունքը՝ գործողության մակարդակում (2022թ)	Պատասխանատու մարմին (ներ)	Վերստուգիչ ցուցանիշ (2022թ)	Մշտադիտարկման արդյունք
Կարգավորման ազդեցության գնահատման ինստիտուտի դերի բարձրացումը:	Քննարկվել է հակակոռուպցիոն կարգավորման ազդեցության և հակակոռուպցիոն փորձաքննության համակարգերի ներդրման նպատակահարմարությունը՝ որպես լիազոր մարմին դիտարկելով ԿԿՀ-ն:	ԱՆ ԿԿՀ ՀԿ-ներ	Քննարկվել է հակակոռուպցիոն կարգավորման ազդեցության և հակակոռուպցիոն փորձաքննության համակարգերի ներդրման նպատակահարմարությունը՝ որպես լիազոր մարմին դիտարկելով ԿԿՀ-ն (2021-2022թ.):	Գործողությունը: **ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԱՍՆԱԿԻ, ՍԱԿԱՅՆ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԿԱՍԵՑՎԱԾ Է:** Ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ:**

Համաձայն՝ ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված եզրափակիչ զեկույցի՝ գործողությունը գնահատվել է **կատարվել է մեծամասամբ** այն հիմնավորմամբ, որ մոտեցում է որդեգրվել կարգավորման ազդեցության գնահատումն փոխարինել իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն փորձաքննությամբ և հարցի լուծմանն ուղղված վերջնական լուծումը տալ 2023-2026 թվականների հակակոռուպցիոն ռազմավարության շրջանակներում: Գործողության կատարման հետ կապված այլ մանրամասներ ներկայացված են Եզրափակիչ զեկույցում:

Ի պատասխան Մշտադիտարկման խմբի կողմից ներկայացված հարցադրմանն առ այն, թե շահագրգիռ կողմերի հետ քննարկման արդյունքում ինչպե՞ս, ի՞նչ վերլուծությունների/կարիքների/գործիքների հիման վրա է կայացվել որոշումը, որպեսզի կիրառվի իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն փորձաքննություն և, որ առավել նպատակահարմար է որպես լիազոր մարմին դիտարկել ԿԿՀ-ին, վերջինս տեղեկացրել է, որ Կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 17-ի N 2075-Ն որոշման Հավելվածի իրավակարգավորումներից հետևում է, որ ԿԱԳ իրականացնող մարմինները հանդիսանում են միայն պետական կառավարման համակարգի մարմինները, մինչդեռ ԿԿՀ-ն չի հանդիսանում պետական կառավարման համակարգի մարմին, ուստի ԿԿՀ-ին այս բնագավառում լիազոր մարմին սահմանելու համար անհրաժեշտ է նշված նորմատիվ իրավական ակտերում կատարել համապատասխան լրացումներ՝ ԿԿՀ-ին վերապահելով համապատասխան լիազորություններ: 2022 թվականին ԿԿՀ-ի և ՄԱԶԾ-ի միջև համագործակցության շրջանակում կորեացի փորձագետի ներգրավմամբ մշակվել է Կորեայի Հանրապետությունում կոռուպցիոն ռիսկերի գնահատման համակարգի, կիրառվող գործիքակազմի և ՀՀ-ում դրա ներդրման հնարավորությունների մասին հայեցակարգը, որով առաջարկվեց և միջազգային փորձի ուսումնասիրությամբ հաստատվեց, որ առավել նպատակահարմար է օգտագործել «իրավական ակտերի հակակոռուպցիոն փորձաքննություն» եզրույթը (Anti-Corruption Assessment of Laws (“Corruption Proofing”)): Քննարկումների արդյունքում որոշում է կայացվել Հակակոռուպցիոն ազդեցության գնահատման կառուցակարգերի ներդրմանն անդրադառնալ Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարության շրջանակում:

Ի պատասխան այն հարցերին, արդյո՞ք առկա են եղել ՀՀ-ում ԿԱԳ գնահատման ելակետային հետազոտության արդյունքներ կամ ելակետային այլ տվյալներ, որոնց հիման վրա նախատեսվել է գործողությունը, և արդյո՞ք իրականացվել է ԿԿՀ կարողությունների և նշյալ հայցվող գործառույթների գնահատում, ԿԿՀ պատասխանում անդրադարձ չի կատարվել:

Ի պատասխան ՖԽՔ ժամանակ մշտադիտարկման խմբի կողմից բարձրացված այն հարցադրման, արդյո՞ք որպես համակատարողներ նախատեսված ՀԿ-ները ևս մասնակցել են քննարկմանը, ի՞նչ եղանակով և ինչպե՞ս է ապահովվել ներառականությունը, ԿԿՀ ներկայացուցիչը նշեց, թե քանի որ, ըստ էության, ԿԿՀ-ն 2022 թվականի հուլիսի 20-ին ԱՆ հասցեագրված գրությամբ առաջարկել էր հետաձգել վերոնշյալ գործողությունը, մասնագիտական գործառույթ չի իրականացվել, և հետևաբար ներառականության հարցը ևս չի ծագել, իսկ ԱՆ ներկայացուցիչը նշեց, որ 2022 թվականին մեկ քննարկում կազմակերպվել է նաև ՀԿ-ների մասնակցությամբ՝ դժվարանալով նշել վերջիններիս անվանումները:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԱՍՆԱԿԻ, ՍԱԿԱՅՆ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԿԱՍԵՑՎԱԾ Է:**

Ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ**, քանի որ գործողության կասեցման արդյունքում կարգավորման ազդեցության գնահատման ինստիտուտի դերի բարձրացում տեղի չի ունեցել:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 16. Գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրման համակարգի կատարելագործում, ծախսերի հայտարարագրման համակարգի ներդրում

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի մակարդակում	Ակնկալվող արդյունքը՝ գործողության մակարդակում (2022թ)	Պատասխանատու մարմին (ներ)	Վերստուգիչ ցուցանիշ (2022թ)	Մշտադիտարկման արդյունք
Վարչական կոռուպցիայի հաղթահարումը՝ ոլորտային կոռուպցիոն ռիսկերի վերհանման և դրանց նվազեցման, էլեկտրոնային ժողովրդավարության գործիքների շարունակական կատարելագործման միջոցով: Հանրային ծառայողի օրինավոր և բարեխիղճ կերպարի ձևավորումը՝ հաշվետվողականության, թափանցիկության և բարեվարքության ապահովման համապատասխան կառուցակարգերի ներդրմամբ:	Ընդունված կարգավորումների շարունակական կիրարկման ապահովում:	ԱՆ ԿԿՀ ԲՏԱՆ ՀԿ-ներ	Ներդրվել է ծախսերի հայտարարագրման ինստիտուտը:	Գործողությունը: **ԿԱՏԱՐՎԱԾ Է:** Ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է:**

Համաձայն՝ ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված եզրափակիչ զեկույցի՝ գործողությունը գնահատվել է **կատարվել է ամբողջությամբ** այն հիմնավորմամբ, որ դեռևս 2021 թվականի կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում ներդրվել է ծախսերի հայտարարագրման ինստիտուտը, իսկ 2022 թվականից հայտարարատու պաշտոնատար անձինք արդեն իսկ հայտարարագրում են նաև ծախսերը: Գործողության կատարման հետ կապված այլ մանրամասներ ներկայացված են Եզրափակիչ զեկույցում:

Ի պատասխան Մշտադիտարկման խմբի կողմից ներկայացված հարցադրմանն առ այն, թե նշյալ միջոցառման հաշվետվությունը մշակելիս ինչպե՞ս է չափվել «Ընդունված կարգավորումների շարունակական կիրարկման ապահովում» գործողության կատարողականը, եթե վերջինիս վերստուգիչ ցուցանիշ նախատեսված չէ՝ խնդրելով տրամադրել արդյունքների քանակական և որակական չափման մեթոդիկան, ԿԿՀ-ն պատասխանել է, որ 2021 թվականի հունվարի 19-ին ընդունված ՀՕ-51-Ն «Հանրային ծառայության մասին» օրենքի փոփոխություններով պայմանավորված՝ հայտարարագրման էլեկտրոնային համակարգը 07.06.2021 թվականից անհասանելի է եղել հայտարարագրերի լրացման և ներկայացման համար[22]: Հայտարարագրման էլեկտրոնային համակարգն անխափան գործարկվել է 02.09.2021[23] թվականից՝ ապահովելով ոչ միայն տարեկան, ստանձնելու, դադարեցնելու հայտարարագրերի ներկայացումը ՀՀ

[22] Ծանուցում, ԿԿՀ պաշտոնական կայք, 07.06.2021, հասանելի է հետևյալ հղմամբ. http://cpcarmenia.am/hy/news/item/2021/06/07/1/

[23] Ծանուցում, ԿԿՀ պաշտոնական կայք, 02.09.2021, հասանելի է հետևյալ հղմամբ. http://cpcarmenia.am/hy/news/item/2021/06/07/1/

Կառավարության 27 մայիսի 2021 թվականի N 858-Ն որոշմամբ սահմանված նոր ձևաչափերով, այլ նաև՝ հաշվետվությունն ու թափանցիկությունը:

ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված եզրափակիչ զեկույցը անդրադարձ է կատարում քննարկումների իրականացմանը միմիայն պաշտոնատար անձանց մասնակցությամբ, հետևաբար քաղաքացիական հասարակությունը չի ընդգրկվել այս գործընթացում:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է**:

Ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է**, քանի որ ծախսերի հայտարարագրման ներդրումը և շարունակական կիրարկումը հանդիսանում է թե հաշվետվողականության, թափանցիկության և բարեվարքության կառուցակարգ՝ միտված հանրային ծառայողի օրինավոր և բարեխիղճ կերպարի ձևավորմանը, թե՝ վարչական կոռուպցիայի հաղթահարմանն ուղղված կոռուպցիոն ռիսկերի նվազեցման էլեկտրոնային ժողովրդավարության գործիք:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 17. Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների անհամատեղելիության պահանջների, շահերի բախման իրավիճակների վերաբերյալ կարգավորումների հստակեցում

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի մակարդակում	Ակնկալվող արդյունքը՝ գործողության մակարդակում (2022թ)	Պատասխանատու մարմին (ներ)	Վերստուգիչ ցուցանիշ (2022թ)	Մշտադիտարկման արդյունք
Բիզնեսի և քաղաքականության տարանջատման հստակ սահմանների ապահովումը:	Ազգային ժողով է ներկայացվել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների անհամատեղելիության պահանջների, շահերի բախման իրավիճակների վերաբերյալ կարգավորումների հստակեցման ուղղված օրենսդրական փաթեթը:	ԿԿՀ Կենտրոնական բանկ ԲԴԽ ՀՀ գլխավոր դատախազություն Քննչական կոմիտե ՀԿԿ	Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների անհամատեղելիության պահանջների, շահերի բախման իրավիճակների վերաբերյալ կարգավորումների հստակեցմանն ուղղված օրենսդրական փաթեթը ներկայացվել է Ազգային ժողով: Նշված փաթեթով, ի թիվս այլնի, հստակեցվել են հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների անհամատեղելիության պահանջները, սահմանվել է, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները	Գործողությունը: **ԿԱՏԱՐՎԱԾ Է**: Ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ:**

			առևտրային կազմակերպություններ ի կանոնադրական կապիտալում մասնակցություն (բաժնեմաս, բաժնետոմս, փայ) ունենալու դեպքում այն հավատարմագրային կառավարման կարող են հանձնել ֆինանսական շուկայի մասնագիտացված անձանց: Բացի այդ, վերանայվել են շահերի բախման վերաբերյալ կարգավորումները:	

Համաձայն՝ ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված եզրափակիչ զեկույցի՝ գործողությունը գնահատվել է **կատարվել է ամբողջությամբ** այն հիմնավորմամբ, որ 2022 թվականի դեկտեմբերի 7-ին ընդունված «Հանրային ծառայության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-540-Ն օրենքով հստակեցվել են հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների անհամատեղելիության պահանջները՝ արգելվել է հանրային պաշտոն զբաղեցնող անձին և հանրային ծառայողին փոխկապակցված անձի հետ կնքել առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալում ունեցած բաժնեմասի հավատարմագրային կառավարման պայմանագիր, վերացվել է «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքով առկա բացառությունը, որի արդյունքում առևտրային կազմակերպության մասնաբաժնի կառավարումը կարող է իրականացվել միայն լիցենզավորված կազմակերպության կողմից, իսկ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների հավատարմագրային կառավարման գործունեությունը դարձվել է ծանուցվող գործունեություն, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների բաժնեմասերի կառավարման գրանցումը դարձել է պարտադիր և սահմանվել է հստակ ժամկետ, որի ընթացքում պաշտոնյան պարտավոր կլինի պաշտոնավարման ընթացքում ձեռք բերված մասնակցությունը հանձնել հավատարմագրային կառավարման: Գործողության կատարման հետ կապված այլ մանրամասներ ներկայացված են Եզրափակիչ զեկույցում:

ՖԽՔ քննարկման ժամանակ մասնակիցները մտահոգություն հայտնեցին առ այն, որ ներդրված կարգավորումները շարունակում են թերի մնալ, օրինակ՝ օրենքի այն կարգավորումը, որի համաձայն հավատարմագրային կառավարիչներ կարող են լինել ինչպես կազմակերպություններ, այնպես էլ՝ անհատ ձեռնարկատերեր, ինչը չի բխում բաժնեմասնակցությունը ՄԱՄՆԱԳԻՏԱՑՎԱԾ հավատարմագրային կառավարման ընկերություններին հանձնելու պահանջի էությունից:

Բացի այդ, ի պատասխան ՖԽՔ քննարկման ժամանակ Մշտադիտարկման խմբի կողմից ներկայացված հարցադրմանն առ այն, արդյո՞ք առկա է նշյալ օրենքի կիրարկման ենթաօրենսդրություն, մասնավորապես՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից գույքի հավատարմագրային կառավարման հանձնելու պայմանագրերի գրանցման և հաշվառման ռեեստր և վարման կարգ, որի արդյունքում հնարավոր կլինի որակապես գնահատել սույն գործողության ազդեցությունը և տիրապետել վիճակագրության առ այն, թե որքա՞ն մասնագիտացված ընկերություններ են տրամադրում հավատարմագրային

կառավարման նշյալ ծառայությունը, և որքա՞ն դեպք է գրանցվել, երբ պաշտոնատար անձինք առևտրային կազմակերպության իրենց բաժնեմասնակցությունը հանձնել են հավատարմագրային կառավարման, ԱՆ ներկայացուցիչը նշեց, որ նման կարգ առկա չէ, և չեն տիրապետում պրակտիկայի վերաբերյալ վիճակագրական տվյալներին: Հետևաբար, այս գործողության մասով սահմանված **վերստուգիչ ցուցանիշները մտահոգիչ են**, քանի որ չեն ներառում օրենսդրական փոփոխությունները կիրարկող ենթաօրենսդրության ընդունում, որի արդյունքում բարեփոխումները մնում են անավարտ:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է:**

Ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ,** քանի որ բիզնեսի և քաղաքականության տարանջատման հստակ սահմաններն ապահովված չեն օրենքի անկատարության և թերի վերստուգիչ ցուցանիշի արդյունքում օրենքը կիրարկող ենթաօրենսդրության բացակայության պատճառով:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 18. Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնական պարտականությունների իրականացման հետ կապված նվերների ինստիտուտի կատարելագործում և դրա նկատմամբ վերահսկողության գործիքակազմի սահմանում

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի մակարդակում	Ակնկալվող արդյունքը՝ գործողության մակարդակում (2022թ)	Պատասխանատու մարմին (ներ)	Վերստուգիչ ցուցանիշ (2022թ)	Մշտադիտարկման արդյունք
Հանրային ծառայողի օրինավոր և բարեխիղճ կերպարի ձևավորումը՝ հաշվետվողականության, թափանցիկության և բարեվարքության ապահովման համապատասխան կառուցակարգերի ներդրմամբ	Մշակվել է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնական պարտականությունների իրականացման հետ կապված նվերների ինստիտուտի կատարելագործմանը և նվերների հաշվառման գործընթացի նկատմամբ վերահսկողության գործիքակազմի սահմանման ուղղված օրենսդրական ակտերի նախագծերի փաթեթ: Նախագծերի փաթեթը ներկայացվել է Ազգային ժողով: Զուգահեռաբար մշակվել է նվերների ռեեստրի տեխնիկական առաջադրանքը:	ԱՆ ԿԿՀ ՀԿ-ներ	Նախագծերի փաթեթը ներկայացվել է Ազգային ժողով: Զուգահեռաբար մեկնարկել են նվերների ռեեստրի էլեկտրոնային հարթակի մշակման աշխատանքները:	Գործողությունը: **ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԵԾԱՄԱՍԱՄԲ:** Ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ**

Համաձայն՝ ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված եզրափակիչ զեկույցի՝ գործողությունը գնահատվել է **կատարվել է ամբողջությամբ** այն հիմնավորմամբ, որ 2022 թվականի դեկտեմբերի 7-ին ԱԺ-ի ընդունված «Հանրային ծառայության մասին» օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքներով կարգավորվել են հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնական պարտականությունների իրականացման հետ կապված նվերների ինստիտուտի կատարելագործմանը և նվերների հաշվառման գործընթացի նկատմամբ վերահսկողության գործիքակազմի սահմանմանն ուղղված հիմնահարցերը: Զուգահեռաբար, նշվել է, որ մեկնարկել են նվերների ռեեստրի էլեկտրոնային հարթակի մշակման աշխատանքները, սակայն՝ չի հստակեցվել, թե կոնկրետ ինչ աշխատանքներ, օրինակ՝ արդյոք մշակվել է նվերների ռեեստրի տեխնիկական առաջադրանքը: Գործողության կատարման հետ կապված այլ մանրամասներ ներկայացված են Եզրափակիչ զեկույցում:

Մշտադիտարկման խմբի գնահատմամբ՝ **<u>առկա է անհամապատասխանություն գործողությամբ սահմանված ակնկալվող արդյունքի և վերջինիս ցուցանիշի մեջ</u>**, քանի որ որպես ակնկալվող արդյունք նախատեսված է նվերների ռեեստրի տեխնիկական առաջադրանքի մշակումը, իսկ որպես վերստուգիչ ցուցանիշ՝ նվերների ռեեստրի էլեկտրոնային հարթակի մշակման աշխատանքների մեկնարկը, որի արդյունքում առաջինն ավելի հստակ ու չափելի է, քան՝ երկրորդը:

Ի պատասխան ՖԽՔ-ի քննարկման ժամանակ մշտադիտարկման խմբի կողմից ներկայացված հարցադրմանն առ այն, թե ինչ փուլում են գտնվում նվերների ռեեստրի էլեկտրոնային հարթակի մշակման աշխատանքները, ԿԿՀ ներկայացուցիչը նշեց, որ նվերների ռեեստրի վարման կարգը և այլ ենթաօրենսդրական ակտերը պետք է մշակվեն մինչև 2023 թվականի ավարտ: Վերջինիս հավաստմամբ՝ այս տարի հնարավոր կլինի հայտարարել մրցույթ ռեեստրի վարման համար, իսկ համակարգն արդեն հնարավոր կլինի շահագործել մինչև 2024 թվականի ավարտ, իսկ մինչ այդ կարգերի գործարկման համար որոշակի ժամանակավոր լուծումներ կտրվեն նվերներին վերաբերող գործառույթն իրականացնելու համար: Արդյունքում, թեև հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնական պարտականությունների իրականացման հետ կապված նվերների ինստիտուտի կատարելագործմանը և նվերների հաշվառման գործընթացի նկատմամբ վերահսկողության գործիքակազմի սահմանմանն ուղղված օրենսդրական փաթեթն ընդունվել է, նվերների ռեեստրի տեխնիկական առաջադրանքը չի մշակվել 2022թ.-ի դրությամբ:

ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված եզրափակիչ զեկույցն անդրադարձ է կատարում միմիայն իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքի միջոցով հանրային քննարկման իրականացմանը, հետևաբար՝ քաղաքացիական հասարակությունը չի ընդգրկվել այս գործընթացում:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԵԾԱՄԱՍԱՄԲ:**

Ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ,** քանի որ հանրային ծառայողի օրինավոր և բարեխիղճ կերպարի ձևավորման ուղղված հաշվետվողականություն, թափանցիկություն և բարեվարքության ապահովմանն ուղղված կառուցակարգը, այն է՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնական պարտականությունների իրականացման հետ կապված նվերների գործիքակազմն ամբողջապես ներդրված չէ:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 19. Կուսակցությունների ֆինանսավորման թափանցիկության ապահովում, Հայաստանի Հանրապետությունում լոբբիստական գործունեության օրենսդրական կարգավորման նպատակահարմարության դիտարկում

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի մակարդակում	Ակնկալվող արդյունքը՝ գործողության մակարդակում (2022թ)	Պատասխանատու մարմին (ներ)	Վերստուգիչ ցուցանիշ (2022թ)	Մշտադիտարկման արդյունք
Ոլորտային իրավական կարգավորումների պարզեցումը և հստակեցումը:	Առաջարկությունների հիման վրա մշակվել և ՀՀ ազգային ժողով է ներկայացվել կուսակցությունների թափանցիկության ապահովման նպատակով կառուցակարգեր սահմանող իրավական ակտերի նախագծերի փաթեթ: Շահագրգիռ կողմերի հետ քննարկվել է Հայաստանի Հանրապետությունում լոբբիստական գործունեության օրենսդրական կարգավորման նպատակահարմարության հարցը:	ԱՆ ԿԸՀ ԿԿՀ ԱԺ ՀԿ-ներ	Իրավական ակտերի նախագծերի փաթեթը ներկայացվել է ՀՀ Ազգային ժողով: Բարձրացվել է կուսակցությունների ֆինանսավորման թափանցիկությունը:	Գործողությունը: **ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԱՍՆԱԿԻ:** Ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ:**

Համաձայն՝ ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված եզրափակիչ զեկույցի՝ գործողությունը գնահատվել է **կատարվել է մասնակի** այն հիմնավորմամբ, որ 2022 թվականի մայիսի 4-ին ԱԺ-ի կողմից «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» սահմանադրական օրենքի և հարակից օրենքների ընդունմամբ ներդրվել են կուսակցությունների ֆինանսական թափանցիկությանն ուղղված կառուցակարգերը, մասնավորապես՝ ապահովվել է ԿԿՀ-ի՝ կուսակցությունների ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողության պատշաճ իրականացումը, սակայն լոբբիստական գործունեության կարգավորման հարցը քննարկման փուլում է: Գործողության կատարման հետ կապված այլ մանրամասներ ներկայացված են Եզրափակիչ զեկույցում:

Ի պատասխան ՖԽՔ-ի քննարկման ժամանակ մշտադիտարկման խմբի կողմից ներկայացված հարցադրմանը, ԿԿՀ-ից հայտնել են, որ 2022 թվականի հոկտեմբերի 31-ի N 03-L որոշմամբ պետական ֆինանսավորման ենթակա կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգման նպատակով լրացուցիչ տվյալների, տեղեկատվության, փաստաթղթերի ստացման անհրաժեշտությունից ելնելով կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգման ժամկետը երկարաձգվել է 60 օրով: Կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգման ընթացքում պարզվել է, որ Սահմանադրական օրենքի կիրառելիության հետ կապված

առկա են որոշակի անհամապատասխանություններ[24], կիրառվող հասկացությունների ոչ հստակություն, կիրառման ենթակա հարցերում՝ օրենսդրական բաց, ինչպես նաև իրավական որոշակիության հետ կապված խնդիրներ, որոնք վեր են հանվել ԿԿՀ-ի կողմից և ներկայացվել են շահագրգիռ կողմերին:

Մշտադիտարկման խմբի գնահատմամբ՝ **առկա է անհամապատասխանություն գործողությամբ սահմանված ակնկալվող արդյունքի և վերջինիս ցուցանիշի մեջ**, մասնավորապես՝ որպես ակնկալվող արդյունք նախատեսված է ՀՀ լոբբիստական գործունեության օրենսդրական կարգավորման նպատակահարմարության հարցի քննարկումը, սակայն վերջինս չունի հստակ վերստուգիչ ցուցանիշ, ինչպես նաև **մտահոգիչ է** «Բարձրացվել է կուսակցությունների ֆինանսավորման թափանցիկությունը» վերստուգիչ ցուցանիշը, քանի որ վերջինս չափելի չէ:

ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված եզրափակիչ զեկույցն անդրադարձ է կատարում իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքի միջոցով, ինչպես նաև՝ 2023 թվականին ՔՀԿ մասնակցությամբ հանրային քննարկման իրականացմանը, հետևաբար՝ քաղաքացիական հասարակությունը հաշվետու ժամանակաշրջանում չի ընդգրկվել այս գործընթացում:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԱՍՆԱԿԻ,** քանի որ կուսակցությունների ֆինանսական թափանցիկությանն ուղղված կառուցակարգերը թեպետ ներդրվել են, սակայն օրենսդրության անկատարության արդյունքում դրանք բարձրացնում չեն կուսակցությունների ֆինանսավորման թափանցիկությունը, ինչպես նաև լոբբիստական գործունեության օրենսդրական կարգավորման նպատակահարմարության հարցին վերջնական որոշում չի տրվել:

Ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ,** քանի որ անկատար օրենսդրական փոփոխությունները չեն նպաստել ոլորտային իրավական կարգավորումների պարզեցմանը և հստակեցմանը:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 20. Գործարար ոլորտում հակակոռուպցիոն համապատասխանության պահանջների ընդունման խթանում

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի մակարդակում	Ակնկալվող արդյունքը՝ գործողության մակարդակում (2022թ)	Պատասխանատու մարմին (ներ)	Վերստուգիչ ցուցանիշ (2022թ)	Մշտադիտարկման արդյունք
Տնտեսական գործունեության ազատության ու ազատ տնտեսական մրցակցության ապահովումը և երաշխավորումը	Հակակոռուպցիոն համապատասխանության առկայությունը համապատասխան իրավական ակտերով սահմանվել է որպես առավելություն տվող չափանիշ գործարար ոլորտի	Էկոնոմիկայի նախարարություն «Կորպորատիվ կառավարման կենտրոն» հիմնադրամ ԱՆ ՀԿ-ներ	Գործարար ոլորտի համար նախատեսված պետական աջակցության առնվազն 1 ծրագրով հակակոռուպցիոն համապատասխանության առկայությունը համապատասխան իրավական ակտերով	Գործողությունը: **ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԱՍՆԱԿԻ:** Ռազմավարական խնդիրը (արդյունքը)

[24] 2022 թվականին ԿԿՀ-ի կողմից «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի կիրառման արդյունքում վերհանված խնդիրներ, ԿԿՀ:

	ներկայացուցիչներին պետական աջակցություն տրամադրելիս։ Գործարար ոլորտում հակակոռուպցիոն համապատասխանության պահանջներն ամրագրվել են համապատասխան իրավական ակտերով։		սահմանվել է որպես առավելություն տվող չափանիշ։ Առնվազն 10 ընկերությունում ներդրվել են հակակոռուպցիոն համապատասխանության պահանջներ։	**ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ։**

Համաձայն՝ ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված եզրափակիչ զեկույցի՝ գործողությունը գնահատվել է **կատարվել է մասնակի** այն հիմնավորմամբ, որ Բիզնես բարեվարքության ակումբի մասնակից շուրջ 22 ընկերություններում ներդրվել են հակակոռուպցիոն համապատասխանության կառուցակարգեր, սակայն պետական աջակցության ծրագրով հակակոռուպցիոն համապատասխանության առկայությունը որպես առավելություն տվող չափանիշի սահմանմանն ուղղված իրավական ակտի նախագիծը թեև մշակվել է, սակայն դեռ ներքին քննարկումների փուլում է։ Գործողության կատարման հետ կապված այլ մանրամասներ ներկայացված են Եզրափակիչ զեկույցում։

Մշտադիտարկման խմբի գնահատմամբ՝ գործողության ակնկալվող արդյունքը և վերստուգիչ ցուցանիշը բավարար չափով հավակնոտ չեն, մասնավորապես՝ միջազգային պրակտիկայի վերլուծությունից պարզ է դառնում, որ հակակոռուպցիոն համապատասխանության պահանջների ընդունման խթանման համար առավել արդյունավետ է գործում այն մոդելը, որի համաձայն հակակոռուպցիոն համապատասխանության ծրագրերի առկայությունը սահմանվում է որպես՝ իրավաբանական անձի քրեական պատասխանատվությունը բացառող կամ մեղմացուցիչ հանգամանք նախատեսող օրենսդրական պահանջ (օրինակ՝ Նիդեռլանդներ, Իսպանիա, Ավստրիա), քան սույն ռազմավարության շրջանակներում նախատեսված՝ որպես գործարար ոլորտի ներկայացուցիչներին պետական աջակցության տրամադրման առավելություն տվող չափանիշ նախատեսող մոդելը։

Քաղաքացիական հասարակությունն ընդգրկված է եղել գործընթացում՝ առավելապես մասնակցելով «Կորպորատիվ կառավարման կենտրոն» հիմնադրամի կողմից դոնորների ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրի շրջանակներում ։

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԱՍՆԱԿԻ**։

Ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ,** քանի որ 22 ընկերություններում հակակոռուպցիոն համապատասխանության կառուցակարգերի նախատեսումը միայն՝ առանց համապատասխան իրավական ակտերով խրախուսման նորմերի սահմանման, չի կարող նպաստել տնտեսական գործունեության ազատությանն ու ազատ տնտեսական մրցակցության ապահովմանն ու երաշխավորմանը։

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 21. Գնումների ոլորտի բարելավում

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի մակարդակում	Ակնկալվող արդյունքը՝ գործողության մակարդակում (2022թ)	Պատասխանատու մարմին (ներ)	Վերստուգիչ ցուցանիշ (2022թ)	Մշտադիտարկման արդյունք
Բիզնեսի և քաղաքականության տարանջատման հստակ սահմանների ապահովումը, տնտեսական գործունեության ազատության ու ազատ տնտեսական մրցակցության ապահովումը և երաշխավորումը:	Ուսումնասիրության հիման վրա մշակվել և ընդունվել է նախագծերի փաթեթ՝ ուղղված գնման գործընթացների պարզեցմանը, գնման գործընթացի որոշակիության ապահովմանը, արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի հաշվին գնումները ազգային ռեժիմով իրականացնելու պարագայում՝ գործընթացները միասնական կանոններով կառավարելու հնարավորության ստեղծմանը:	Ֆինանսների նախարարություն	Գնումների համակարգի կատարելագործմանն ուղղված նախագծերի փաթեթը ներկայացվել է Ազգային ժողով: Գնումների համակարգը կատարելագործվել է:	**ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԵԾԱՄԱՍՍԱՄԲ:** Ռազմավարական խնդիրը (արդյունքը): **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ**

Համաձայն՝ ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված եզրափակիչ զեկույցի՝ գործողությունը գնահատվել է **կատարվել է ամբողջությամբ** այն հիմնավորմամբ, որ գնումների համակարգի կատարելագործմանն ուղղված օրենսդրական ակտերի փաթեթը ընդունվել է, և ըստ այդմ գնումների համակարգը կատարելագործվել է: Զեկույցում, մասնավորապես, խոսվում է 2022 թվականի հունվարի 21-ին ընդունված գնումների արտադատական բողոքարկման համակարգին նվիրված օրենսդրական փոփոխությունների փաթեթի մասին, որով նաև սահմանվել է, որ ՀՀ կառավարությունը հաստատում է միջազգային պայմանագրերով նախատեսված ֆինանսական միջոցների հաշվին կազմակերպվող գնման գործընթացների առանձնահատկությունները: Գործողության կատարման հետ կապված այլ մանրամասներ ներկայացված են Եզրափակիչ զեկույցում:

Մշտադիտարկման խմբի կողմից գրասենյակային ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ ՀՀ կառավարության որոշում վերոնշյալ հարցով առկա չէ: Բացի այդ, մշտադիտարկման խմբի գնահատմամբ «Գնումների համակարգը կատարելագործվել է» վերստուգիչ ցուցանիշը մտահոգիչ է, քանի որ այն բավարար չափով հստակ և չափելի չէ: Ավելին, ՖԽՔ արդյունքում մասնակիցների կողմից բարձրացվեցին տարատեսակ մտահոգություններ գնման գործընթացի պարզության և որոշակիության մասով, որով պարզ է դառնում, որ ընդունված օրենսդրական փաթեթը համապարփակ կերպով չի կարողացել լուծել իր առջև դրված խնդիրը, որի արդյունքում հարցի տակ է դրվում գործողության «կատարված է ամբողջությամբ» գնահատականը գնումների համակարգի կատարելագործման վերստուգիչ ցուցիչի պրիզմայից:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԵԾԱՄԱՍԱՄԲ**:

Ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ**, քանի որ վերջինս չի նպաստել ամբողջապես բիզնեսի և քաղաքականության տարանջատման հստակ սահմանների և տնտեսական գործունեության ազատության ու ազատ տնտեսական մրցակցության ապահովմանն ու երաշխավորմանը:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 22. Իրավաբանական անձանց իրական շահառուների ինստիտուտի ներդրում

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի մակարդակում	Ակնկալվող արդյունքը՝ գործողության մակարդակում (2022թ)	Պատասխանատու մարմին (ներ)	Վերստուգիչ ցուցանիշ (2022թ)	Մշտադիտարկման արդյունք
Բիզնեսի և քաղաքականության տարանջատման հստակ սահմանների ապահովումը, տնտեսական գործունեության ազատության ու ազատ տնտեսական մրցակցության ապահովումը և երաշխավորումը	Իրավաբանական անձանց իրական շահառուների գրանցամատյանի էլեկտրոնային հարթակը գործարկվում է:	ԱՆ Պետական կառավարման համակարգի մարմիններ ՀԿ-ներ	2022 թվականին իրավաբանական անձանց կողմից ներկայացվել է իրական շահառուների վերաբերյալ 200 հայտարարագիր:	Գործողությունը: **ԿԱՏԱՐՎԱԾ Է:** Ռազմավարական խնդիրը (արդյունքը): **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է:**

Համաձայն՝ ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված եզրափակիչ զեկույցի՝ գործողությունը գնահատվել է **կատարվել է ամբողջությամբ** այն հիմնավորմամբ, որ 2023 թվականի հունվարից իրական շահառուներին հայտարարագրելու պահանջը տարածվել է բոլոր իրավաբանական անձանց համար: Միևնույն ժամանակ, գործարկվել է իրավաբանական անձանց իրական շահառուների գրանցամատյանի էլեկտրոնային հարթակը: 2023 թվականի մարտի 10-ի դրությամբ իրավաբանական անձանց իրական շահառուների գրանցամատյանի էլեկտրոնային հարթակի միջոցով ներկայացվել է շուրջ 37,000 հայտարարագիր: Գործողության կատարման հետ կապված այլ մանրամասներ ներկայացված են Եզրափակիչ զեկույցում:

Քանի որ վերստուգիչ ցուցանիշը վերաբերվում է 2022 թվականին, իսկ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից հաղորդած վիճակագրական տեղեկությունների՝ 2022 թվականի ընթացքում ընդհանուր առմամբ ներկայացվել է 1850 հայտարարագիր, ինչը գերազանցում է վերստուգիչ ցուցանիշով նախատեսված 200 հայտարարագրի շեմը:

ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված եզրափակիչ զեկույցն անդրադարձ է կատարում միմիայն հանրային իրազեկման արշավների իրականացմանը, հետևաբար՝ քաղաքացիական հասարակությունը չի ընդգրկվել այս գործընթացում:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է**:

Ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է,** քանի որ իրական շահառուների վերաբերյալ շուրջ 1.000 հայտարարագրի ներկայացումը հանդիսանում է բիզնեսի և քաղաքականության տարանջատման հստակ սահմանների և տնտեսական գործունեության ազատության ու ազատ տնտեսական մրցակցության ապահովմանն ու երաշխավորմանը նպաստող գործոն:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 23. Տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտի վերաբերյալ օրենսդրության կատարելագործում

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի մակարդակում	Ակնկալվող արդյունքը՝ գործողության մակարդակում (2022թ)	Պատասխանատու մարմին (ներ)	Վերստուգիչ ցուցանիշ (2022թ)	Մշտադիտարկման արդյունք
Տնտեսական գործունեության ազատության ու ազատ տնտեսական մրցակցության ապահովումը և երաշխավորումը	Ընդունվել են օրենսդրական փոփոխությունների կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական իրավական ակտերը:	ՄՊՀ ԱՆ	Օրենսդրական փոփոխությունների կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտերն ամբողջությամբ ընդունվել են (2022թ):	Գործողությունը: **ԿԱՏԱՐՎԱԾ Է:** Ռազմավարական խնդիրը (արդյունքը): **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է:**

Համաձայն՝ ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված եզրափակիչ զեկույցի՝ գործողությունը գնահատվել է **կատարվել է ամբողջությամբ,** օրենսդրական փոփոխությունների կիրարկումն ապահովող թվով 18 ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր, այդ թվում՝ ՄՊՀ-ի աշխատակարգը, չհիմնավորված բարձր գնի և չհիմնավորված ցածր գնի որոշման կարգը, պետական օժանդակության գնահատման կարգը, պատասխանատվության միջոցի ընտրության և տուգանքի հաշվարկման մեթոդաբանությունը, գաղտնագրման ենթակա հաղորդումը ներկայացնելու և այն գաղտնագրելու կարգը, ապրանքների և ծառայությունների անհատականացման միջոցների շփոթության աստիճանի նմանության որոշման կարգը և Հանձնաժողովի գործունեությունն ապահովող մի շարք այլ ակտեր հաշվետու ժամանակաշրջանում ամբողջությամբ ընդունվել են: Գործողության կատարման հետ կապված այլ մանրամասներ ներկայացված են Եզրափակիչ զեկույցում:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է**:

Ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է,** քանի որ տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտի վերաբերյալ օրենսդրության կիրարկումն ապահովող թվով 18 ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունումը հանդիսանում է բիզնեսի և քաղաքականության տարանջատման հստակ սահմանների և տնտեսական գործունեության ազատության ու ազատ տնտեսական մրցակցության ապահովմանն ու երաշխավորմանը նպաստող գործոն:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 24. Իրավական ակտերի նախագծերի մշակման գործընթացին հասարակության մասնակցայնության ապահովման արդյունավետության բարձրացում

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի մակարդակում	Ակնկալվող արդյունքը՝ գործողության մակարդակում (2022թ)	Պատասխանատու մարմին (ներ)	Վերստուգիչ ցուցանիշ (2022թ)	Մշտադիտարկման արդյունք
Հանրային կրթության և իրազեկման միջոցով կոռուպցիայի նկատմամբ ժխտողական վերաբերմունքի սերմանումը, պահանջատեր քաղաքացու ձևավորումը:	Ներդրված են վիճակագրական նոր գործիքներ, որոնք ապահովում են իրավական ակտերի նախագծերի մշակման և ընդունման բաց և թափանցիկ գործընթացը: Իրականացվում են www.e-draft.am հարթակի, ինչպես նաև դրանից օգտվելու կանոնների մասին հանրության իրազեկման միջոցառումներ:	ԱՆ ԲՏԱՆ ՄԻՊ ՀԿ-ներ	Իրականացվել են առնվազն 2 հանրային իրազեկման միջոցառումներ (2022թ.): www.e-draft.am հարթակում տեղադրված իրավական ակտերի դիտելիությունը աճել է 10%-ով (2022թ.):	Գործողությունը: **ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԵԾԱՄԱՍԱՄԲ:** Ռազմավարական խնդիրը (արդյունքը): **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ:**

Համաձայն՝ ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված եզրափակիչ զեկույցի՝ գործողությունը գնահատվել է **կատարվել է ամբողջությամբ** այն հիմնավորմամբ, որ իրականացվել են հետևյալ հանրային իրազեկման միջոցառումները՝ «e-draft.am առցանց հարթակի առավելություններն ու խնդիրները» թեմայով աշխատանքային կլոր-սեղան քննարկում և տեղեկատվական նյութի և տեսահոլովակի հրապարակում տարբեր հարթակներում, որի արդյունքում 2022 թվականին www.e-draft.am հարթակում տեղադրված իրավական ակտերի դիտելիությունը՝ այցելությունների քանակը 2019 թվականի համեմատ գրանցել է 144,3% աճ:

Մշտադիտարկման խմբի գնահատմամբ՝ **առկա է անհամապատասխանություն գործողությամբ սահմանված ակնկալվող արդյունքի և վերջինիս ցուցանիշի մեջ**, մասնավորապես՝ որպես ակնկալվող արդյունք նախատեսված է նոր վիճակագրական գործիքների ներդրումը, որի կապակցությամբ վերստուգիչ ցուցանիշ նախատեսված չէ: Այս կապակցությամբ ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված եզրափակիչ զեկույցում խոսվում է վերոնշյալ քննարկման արդյունքում www.e-draft.am հարթակի արդիականացման լրամշակված տեխնիկական առաջադրանքի մասին, որը ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ՝ Թվայնացման խորհրդի նիստում քննարկելու և ծրագրի ֆինանսավորմանն աջակցելու նպատակով, սակայն վերջինս մինչ օրս չի արդիականացվել, որի արդյունքում նոր վիճակագրական գործիքների ներդրված չեն:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԵԾԱՄԱՍԱՄԲ**:

Ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ,** քանի որ վերջինս չի նպաստել ամբողջապես հանրային կրթության և իրազեկման միջոցով կոռուպցիայի նկատմամբ ժխտողական վերաբերմունքի սերմանմանը և պահանջատեր քաղաքացու ձևավորմանը:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 25. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից քաղաքացիներին առավել շատ մատուցվող ծառայությունների վերաբերյալ մատչելի տեղեկատվություն ստանալու գործիքակազմի ներդրում

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի մակարդակում	Ակնկալվող արդյունքը՝ գործողության մակարդակում (2022թ)	Պատասխանատու մարմին (ներ)	Վերստուգիչ ցուցանիշ (2022թ)	Մշտադիտարկման արդյունք
Հանրային կրթության և իրազեկման միջոցով կոռուպցիայի նկատմամբ ժխտողական վերաբերմունքի սերմանումը, պահանջատեր քաղաքացու ձևավորումը:	Իրականացվել են մատուցվող ծառայությունների վերաբերյալ մատչելի տեղեկատվություն ստանալու գործիքակազմի ներդրման միջոցառումներ:	Պետական կառավարման համակարգի մարմիններ Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ	Մշակվել ու առնվազն 3 պետական մարմինների կայքէջերում հրապարակվել են մատուցվող ծառայությունների վերաբերյալ դիմումի լրացման օրինակելի ձևերը (2021թ.):	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է :** Ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է :**

Համաձայն՝ ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված եզրափակիչ զեկույցի՝ գործողությունը գնահատվել է **կատարվել է ամբողջությամբ** այն հիմնավորմամբ, որ մի շարք պետական մարմինների կողմից մշակվել և իրենց պաշտոնական կայքէջերում տեղադրված են ծառայությունների ստացման համար անհրաժեշտ դիմումների օրինակելի ձևերը:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է**:

Ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ,** քանի որ վերջինս հանդիսացել է հանրային կրթության և իրազեկման միջոցով կոռուպցիայի նկատմամբ ժխտողական վերաբերմունքի սերմանմանը և պահանջատեր քաղաքացու ձևավորմանը նպաստող գործոն:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 26. Ազդարարման համակարգի շարունակական կատարելագործում և ազդարարների պաշտպանության օրենսդրական մեխանիզմների բարելավում

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի մակարդակում	Ակնկալվող արդյունքը՝ գործողության մակարդակում (2022թ)	Պատասխանատու մարմին (ներ)	Վերստուգիչ ցուցանիշ (2022թ)	Մշտադիտարկման արդյունք
Հանրային ծառայողի օրինավոր և բարեխիղճ կերպարի ձևավորումը՝	Կատարված ուսումնասիրությունների հիման վրա ազդարարման համակարգի արդյունավետությանն	ԱՆ Գլխավոր դատախազություն	Ազդարարման դեպքերի վիճակագրությունը ներառված է ԱՆ-ի տարեկան հաշվետվության մեջ,	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԵԾԱՄԱՍԱՄԲ:** Ռազմավարական խնդիրը

հաշվետվողականության, թափանցիկության և բարեվարքության ապահովման համապատասխան կառուցակարգերի ներդրմամբ: Կոռուպցիոն իրավախախտումների համար պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի իրացման երաշխավորումը, օրենսդրության շարունակական կատարելագործումը, այդ թվում՝ կոռուպցիոն հանցագործությունների ցանկի օրենքով սահմանման միջոցով:	ուղղված առաջարկությունները ներկայացվել են Վարչապետի աշխատակազմ: Առաջարկությունների հիման վրա մշակվել և Վարչապետի աշխատակազմ են ներկայացվել ազդարարման համակարգի և ազդարարների պաշտպանության մեխանիզմների կատարելագործմանն ուղղված իրավական ակտերի նախագծերի փաթեթ: Ներքին և արտաքին ազդարարման վիճակագրության վարման միասնական մեխանիզմի սահմանում: Ազդարարման համակարգի և ազդարարների պաշտպանության մեխանիզմների կատարելագործմանն ուղղված նախագծերի փաթեթը ներկայացվել է ԱԺ:		Ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակում (2020թ., 2021թ.,2022թ.): Առաջարկությունների հիման վրա ձևավորված իրավական ակտերի նախագծերի փաթեթը ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ: Ազդարարման համակարգը բարելավվել է (2022թ) Ազդարարների պաշտպանության օրենսդրական մեխանիզմները միջազգային փորձին համապատասխան կատարելագործվել են (2022թ.): Հայտարարագրերին, շահերի բախումներին և անհամատեղելիությանն առնչվող իրավախախտումների վերաբերյալ ազդարարման կառուցակարգերի սահմանման, ԿԿՀ-ին ազդարարման համակարգին հասանելիության ապահովման կարգավորումները սահմանվել են (2022թ.):	(արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ:**

Համաձայն՝ ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված եզրափակիչ զեկույցի՝ գործողությունը գնահատվել է **կատարված է ամբողջությամբ,** օրենսդրական փոփոխությունների արդյունքում ազդարարների պաշտպանության օրենսդրական մեխանիզմները միջազգային փորձին համապատասխան կատարելագործվել են, հայտարարագրերին, շահերի բախումներին և անհամատեղելիությանն առնչվող իրավախախտումների վերաբերյալ ազդարարման կառուցակարգերը սահմանվել են: Սահմանվել են նաև վիճակագրության վարմանը ներկայացվող պահանջները: Բացի այդ, Ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակում հրապարակվում է ազդարարման դեպքերի վիճակագրությունը:

Ըստ մշտադիտարկման արդյունքների՝ ներքին և արտաքին ազդարարումների ներկա կարգավորումները անարդյունավետ են, քանի դեռ դրանք անանուն և էլեկտրոնային տարբերակով չեն իրականացվում: Հաշվետու ժամանակահատվածում ազդարարման

միասնական էլեկտրոնային հարթակում վիճակագրությունը ներկայացված էր ոչ ամբողջական, ազդարարման դեպքերի վիճակագրությունը ներառված չէ ԱՆ-ի տարեկան հաշվետվության մեջ:

Քաղաքացիական հասարակությունը առանձին միջոցառումներով չի ընդգրկվել այս գործընթացում, նախագիծը միայն դրվել է հանրային քննարկման իրավական ակտերի հրապարակման միասնական հարթակում[25]:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ ԷՄԵԾԱՄԱՍԱՄԲ**:

Ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ,** այս գործողության շրջանակներում հաշվետվողականության, թափանցիկության և բարեվարքության ապահովման համապատասխան կառուցակարգերի ներդրմամբ հանրային ծառայողի օրինավոր և բարեխիղճ կերպարի ձևավորման գործընթացը ամբողջապես չի իրականացվել, ինչպես նաև կատարված աշխատանքները չեն նպաստել կոռուպցիոն իրավախախտումների համար պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի իրացման երաշխավորմանը:

Ընթացակարգային (քանակական) գնահատման ցուցանիշ 2022թ.		
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	19	100%
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ	5	26.32%
ՈՐԻՑ ՄԵԾԱՄԱՍԱՄԲ ԿԱՏԱՐՎԱԾ	5	26.32%
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻ ՍԱԿԱՅՆ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԿԱՍԵՑՎԱԾ Է	1	5.26%
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻ	6	31.58%
ՈՐԻՑ ՉԿԱՏԱՐՎԱԾ	2	10.53%

Ազդեցության մակարդակի (որակական) գնահատման ցուցանիշ 2022թ.		
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	19	100%
ՈՐԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է	5	26.32%
ՈՐԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ	13	68.42%
ՈՐԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՉԷ	1	5.26%

[25] Իրավական ակտի նախագիծը ներկայացվել է հանրային քննարկման հետևյալ հղմամբ. https://www.e-draft.am/projects/4470

ՈԼՈՐՏ 3. ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 27. ՀՀ քրեական օրենսգրքով կոռուպցիոն հանցագործությունների շրջանակի հստակեցում

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի մակարդակում	Ակնկալվող արդյունքը՝ գործողության մակարդակում (2022թ)	Պատասխանատու մարմին (ներ)	Վերստուգիչ ցուցանիշ (2022թ)	Մշտադիտարկման արդյունք
Կոռուպցիոն իրավախախտումների համար պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի իրացման երաշխավորումը, օրենսդրության շարունակական կատարելագործումը, այդ թվում՝ կոռուպցիոն հանցագործությունների ցանկի օրենքով սահմանման միջոցով	2022 թվականի համար արդյունք սահմանված չէ:	ԱՆ Գլխավոր դատախազություն ՀԿԿ Քննչական կոմիտե Ազգային անվտանգության ծառայություն Ոստիկանություն ՊԵԿ	Ապահովվել է կոռուպցիոն հանցագործությունների շրջանակի ուղենիշային սահմանումը՝ ըստ ՏՀԶԿ հակակոռուպցիոն ցանցի, ԵԽ ու ԵՄ փորձագետների առաջարկությունների (2019թ.)	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է:** Ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է:**

Համաձայն՝ ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված եզրափակիչ զեկույցի՝ գործողությունը գնահատվել է **կատարվել է ամբողջությամբ**, քանի որ 2022 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած նոր քրեական օրենսգրքի Հանրային ծառայության շահերի դեմ ուղղված հանցագործությունները գլխում ավելացել են կաշառք ստանալու, կաշառքի միջնորդության կամ իրական կամ ենթադրյալ ազդեցությունը շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով օգտագործելու պատրվակով գույք, ներառյալ դրամական միջոց, արժեթուղթ, վճարային այլ գործիք, գույքի նկատմամբ իրավունք, ծառայություն կամ որևէ այլ առավելություն ստանալու, բռնի անհետացման հանցակազմերը, պաշտոնեական լիազորություններն անցնելու հանցակազմը միավորվել է պաշտոնեական լիազորությունների չարաշահման հանցակազմի հետ, ընդլայնվել է պաշտոնատար անձի հասկացությունը, որը տրված է օրենսգրքի 3-րդ հոդվածում:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ Է:**

Ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է,** այս գործողության շրջանակներում՝ կատարված աշխատանքները նպատսել են օրենսդրության կատարելագործմանը, այդ թվում՝ կոռուպցիոն հանցագործությունների ցանկի օրենքով սահմանման միջոցով:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 28. Քրեական օրենսգրքում ամրագրված կոռուպցիոն հանցագործությունների հանցակազմերի միջազգային չափանիշների համապատասխանության հարցի ուսումնասիրություն, կոռուպցիոն հանցագործությունները միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով կարգավորումների սահմանում նոր Քրեական օրենսգրքով

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի մակարդակում	Ակնկալվող արդյունքը՝ գործողության մակարդակում (2022թ)	Պատասխանատու մարմին (ներ)	Վերստուգիչ ցուցանիշ (2022թ)	Մշտադիտարկման արդյունք
Կոռուպցիոն իրավախախտումների համար պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի իրացման երաշխավորումը, օրենսդրության շարունակական կատարելագործումը, այդ թվում՝ կոռուպցիոն հանցագործությունների ցանկի օրենքով սահմանման միջոցով:	Կոռուպցիոն հանցագործությունների հանցակազմերը, ինչպես նաև վաղեմության ժամկետները միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու անհրաժեշտության վերաբերյալ առաջարկները ներառվել են նոր Քրեական օրենսգրքի նախագծի շրջանակներում:	ԱՆ Գլխավոր դատախազություն ՀԿԿ Քննչական կոմիտե Ազգային անվտանգության ծառայություն Ոստիկանություն ՊԵԿ	Միջազգային փորձի ուսումնասիրությունն իրականացված է (2020թ.): Ըստ արդյունքների՝ առաջարկությունները ներառված են Քրեական օրենսգրքի նախագծում (2021թ.):	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԱՄՆԱԿԻ:** Ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ:**

Համաձայն՝ ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված եզրափակիչ զեկույցի՝ գործողությունը գնահատվել է **կատարվել է ամբողջությամբ**, քանի որ կոռուպցիոն հանցագործությունների հանցակազմերը, ինչպես նաև վաղեմության ժամկետները միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու անհրաժեշտության վերաբերյալ առաջարկները ներառվել են նոր Քրեական օրենսգրքի նախագծի շրջանակներում:

Մշտադիտարկման խմբի կողմից ԱՆ-ին ներկայացվել էին հարցադրումներ միջազգային փորձի ուսումնասիրության, այդ թվում՝ կոռուպցիոն հանցանքների վաղեմության ժամկետների վերաբերյալ հատուկ կարգավորումներ նախատեսելու մասով: Հիշյալին լիարժեք պատասխան չի տրամադրվել, չեն ներկայացվել կատարված կատարված միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքները, հետևապես գործողության ազդեցությունն այս առումով չի կարող լիարժեք գնահատվել՝ ամբողջական տեղեկատվության բացակայությամբ պայմանավորված:

Միևնույն ժամանակ, վաղեմության ժամկետների առումով շահագրգիռ մարմինները հայտնել են, որ քրեական նոր օրենսգրքով վաղեմության ժամկետների հաշվարկման նոր մեխանիզմ է սահմանվել: (…) եթե նախկին Քրեական օրենսգրքի պայմաններում հնարավոր էր դատական նիստերի ձգձգմամբ և այլ հանգամանքներով պայմանավորված՝ կոռուպցիոն հանցագործությունների քննության շրջանակներում հասնել նրան, որ անձը կարողանա ազատվել պատասխանատվությունից վաղեմության ժամկետների ավարտման հիմքով, ապա նոր Քրեական օրենսգրքով անձը զրկված է նման հնարավորությունից: Ուստի, օրենսդրական այս կարգավորումը լրացուցիչ երաշխիք ստեղծեց, որպեսզի կոռուպցիոն հանցագործություններով ենթադրյալ հանցագործները չկարողանան խուսափել պատասխանատվությունից:

Միաժամանակ հայտնվել է, որ ՀՀ գործող քրեական օրենսգրքով սահմանվել են վաղեմության ժամկետի կասեցման նոր՝ ավելի խիստ իրավակարգավորումներ: Բացի այդ, նշվել է, որ «**պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը կամ լիազորություններն անցնելը,** որը կատարվել է բռնություն գործադրելով» հանցակազմի համար (ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետ) ՀՀ քրեական նոր օրենսգրքով վաղեմության ժամկետներ առհասարակ չեն կիրառվում:

Նշվածի կապակցությամբ անհրաժեշտ է արձանագրել երկու փաստ. առաջին, ՀՀ քրեական նոր օրենսգրքում վաղեմության ժամկետների փոփոխությունը կրում է համընդհանուր բնույթ, այսինքն՝ քրեական պատասխանատվության ենթարկվելու վաղեմության ժամկետների հաշվարկման ելակետային հանգամանքների փոփոխությունը վերաբերում է ՀՀ քրեական օրենսգրքի բոլոր հանցակազմերին: Այսինքն՝ նշված փոփոխությունը տարածվել է ինչպես կոռուպցիոն, այնպես էլ ոչ կոռուպցիոն հանցանքների կատարման նկատմամբ: Ուստի, պետք է փաստել, որ վաղեմության ժամկետների հաշվարկման փոփոխությունը չի կատարվել զուտ որոշ հանցանքների կոռուպցիոն բնույթը հաշվի առնելով: Ինչ վերաբերում է՝ **պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը կամ լիազորություններն անցնելը** հանցակազմի համար քրեական պատասխանատվության վաղեմության ժամկետներ չնախատեսելու հանգամանքին, ապա հարկ է նշել, որ այս կարգավորումը ևս կապ չունի կոռուպցիոն բնույթի հետ: Մասնավորապես, վաղեմության ժամկետների չկիրառման հիմք է նախատեսվել ոչ թե ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի ամբողջ հանցակազմը, այլ՝ միայն ազդեցությունը չարաշահելու կամ լիազորություններն անցնելու հանցակազմի որակյալ տեսակը, այն է՝ **բռնություն գործադրելով դրսևորումը:** Նշվածը պայմանավորված է միջազգային չափանիշներով, որոնք պահանջում են խոշտանգումների կամ դրան հավասարեցված արարքների կատարման դեպքում բացառել քրեական պատասխանատվության վաղեմության ժամկետների կիրառումը: Հետևաբար, նշված փոփոխությունը ևս որևէ կապ չունի դրա կոռուպցիոն բնույթի հետ: Ուստի, շահագրգիռ մարմինների կողմից այս առնչությամբ ներկայացված հիմնավորումներն ընդունելի լինել չեն կարող:

Նման պայմաններում, հարկ է նշել, որ ՀՀ քրեական նոր օրենսգրքում կոռուպցիոն հանցագործությունների համար վաղեմության ժամկետների հաշվարկման հատուկ կարգավորումներ չեն նախատեսվել՝ պայմանավորված դրանց կոռուպցիոն բնույթով:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԱՍՆԱԿԻ:**

Ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ,** այս գործողության շրջանակներում՝ օրենսդրության կատարելագործման առումով նշված փոփոխությունը չի համապատասխանում սահմանված ռազմավարական խնդրին:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 29. Կոռուպցիոն առանձին հանցագործությունների, այդ թվում՝ ապօրինի հարստացման, քննության մեթոդիկայի մշակում, մշակված մեթոդիկայի հիման վրա քրեական հետապնդման մարմինների վերապատրաստում

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի մակարդակում	Ակնկալվող արդյունքը՝ գործողության մակարդակում (2022թ)	Պատասխանատու մարմին (ներ)	Վերստուգիչ ցուցանիշ (2022թ)	Մշտադիտարկման արդյունք
Կոռուպցիոն իրավախախտումների համար պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի իրացման երաշխավորումը,	Կոռուպցիոն առանձին հանցագործությունների, այդ թվում՝ ապօրինի հարստացման քննության մեթոդիկայի բարելավվել է՝ միաժամանակ	ՀՀ Գլխավոր դատախազություն ՄԻՊ Ազգային անվտանգության ծառայություն Արդարադատության ակադեմիա	Իրականացվել է առնվազն 4 վերապատրաստում (2021-2022թ.):	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԵԾԱՄԱՍՍԱՄԲ:** Ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ**

օրենսդրության շարունակական կատարելագործումը, այդ թվում՝ կոռուպցիոն հանցագործությունների ցանկի օրենքով սահմանման միջոցով:	նախատեսելով կոնկրետ գործիքակազմերի կիրառության վերաբերյալ կարգավորումներ, վերլուծական կարողություններ զարգացնող մեթոդական ցուցումներ: Պարբերաբար անցկացվում են վերապատրաստումներ:	ՀԿ-ներ		**Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ:**

Համաձայն՝ ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված եզրափակիչ զեկույցի՝ գործողությունը գնահատվել է **կատարվել է ամբողջությամբ**, կոռուպցիոն առանձին հանցագործությունների, այդ թվում՝ ապօրինի հարստացման քննության մեթոդական ուղեցույցը մշակվել է և հաստատվել Գլխավոր դատախազի 2021 թվականի մարտի 22-ի N 35 հրամանով դեռևս 2021 թվականին: Բացի այդ, 2021 թվականին Հատուկ քննչական ծառայության 7 քննիչներ և Քննչական կոմիտեի 58 քննիչներ անցել են վերապատրաստումներ «Կրիմինալիստիկական տակտիկա և մեթոդիկա», «Կոռուպցիոն հանցագործությունների քննության մեթոդիկա» թեմաներով: Դատախազների համար 2021 թվականին անցկացվել են վերապատրաստումներ «Հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի արդի հարցեր», «Կոռուպցիոն դեպքերի քննություն», «Կրիմինալիստիկական տակտիկա և մեթոդիկա», «Կոռուպցիոն դեպքերի քննություն», «Պաշտոնական կոռուպցիայի դեպքերի քննություն», «Կոռուպցիոն բնույթի ֆինանսական հանցագործություններ և անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքար» թեմաներով:

Մշտադիտարկման խմբի կողմից ԱՆ-ին ներկայացվել էին հարցադրումներ Կոռուպցիոն առանձին հանցագործությունների, այդ թվում՝ ապօրինի հարստացման քննության մեթոդիկայի վերաբերյալ, իրականացված վերապատրաստումներին ի՞նչ մեթոդով են ընտրվել վերապատրաստման մասնակիցները, ի՞նչ պաշտոններ են զբաղեցրել վերջիններս, նրանցից քանի՞սն են Երևանից, քանի՞սը ՀՀ մարզերից, արդյո՞ք կատարվել է նրանց թիրախային ոլորտներում գիտելիքների (տեղեկատվության) նախնական (pre) և վերջնական (post) ստուգում: Եթե այո, ապա բարելավման ինչպիսի՞ արդյունքներ են գրանցվել տոկոսային արտահայտմամբ, ովքե՞ր են անցկացրել վերապատրաստումները և ի՞նչ մեթոդիկայով են ընտրվել, կատարվե՞լ է նրանց գնահատում՝ մասնակիցների կողմից: Եթե այո, ապա ինչպիսի՞ գնահատման համակարգ է (գործիք) գործել և, ընդհանուր առմամբ, ի՞նչ գնահատական է տրվել վերապատրաստողին, ի՞նչ մեթոդիկայով են մշակվել վերապատրաստման նյութերը և ովքե՞ր են դրանց հեղինակները, ի՞նչ մեթոդով են ընտրվել հեղինակները, խնդրելով տրամադրել վերապատրաստումների նյութերը, վերապատրաստող անձանց ցանկը և/կամ դրանց առցանց հղումները: Հիշյալին պատասխան չի տրամադրվել, հետևապես գործողության ազդեցությունն այս առումով չի կարող լիարժեք գնահատվել՝ ամբողջական տեղեկատվության բացակայությամբ պայմանավորված:

Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ մշտադիտարկման խմբի կողմից անցկացված ՖԽՔ-ների շրջանակներում պարզ է դարձել, որ նշված տեղեկատվությունը լիարժեք չէ, առանձին չափորոշիչ դրված չի եղել, թե մասնակիցները մարզերից են, թե Երևանից, նախատեսված չի եղել վերապատրաստված անձանց գիտելիքների գնահատման ստուգում, վերապատրաստումների անցկացման մեթոդիկայի առումով հատուկ գործիքակազմ չկա, դասավանդողների ընտրության հատուկ մեթոդիկա նախատեսված չի եղել: Նման պայմաններում, հնարավոր չէ ազդեցության մակարդակի արդյունքներով նշված գործողությամբ ռազմավարական խնդիրը համարել

ամբողջությամբ իրականացված, քանի որ փաստացի գնահատման համար անհրաժեշտ ելակետային տվյալները բացակայում են:

Նշվածի կապակցությամբ շահագրգիռ մարմինները մշտադիտարկման խմբին հայտնել են, որ պարտադիր վերապատրաստումը չի առնչվում համապատասխան պաշտոն զբաղեցնող անձի՝ մարզում կամ Երևանում պաշտոնավարելու հանգամանքի հետ: Նշվել է նաև, որ վերապատրաստման մեթոդիկան ներառել է դասախոսությունների, սեմինարների, գործնական պարապունքների, ինչպես նաև ունկնդիրների ինքնակրթությունը խրախուսող կրթական այլ եղանակների կիրառման միջոցով: Միաժամանակ, հայտնվել է, որ որպես դասախոս ներգրավելու չափանիշներն են՝ գիտական աստիճանի առկայությունը, առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային կամ գիտամանկավարժական գործունեության ստաժի առկայությունը, դասավանդվող դասընթացին առնչվող ոլորտում առնվազն երկու տարվա գործունեության փորձը, Արդարադատության ակադեմիայի կամ գործընկեր կառույցների կողմից կազմակերպվող վերապատրաստողների վերապատրաստման դասընթացին մասնակցությունը: Անդրադառնալով դասախոս ներգրավված անձանց գնահատմանը, նշվել է, որ ուսումնառության ավարտից հետո բոլոր ունկնդիրներին հնարավորություն է ընձեռնվում լրացնելու անանուն գնահատման հարցաթերթիկ, որոնց ամփոփված արդյունքներն Ակադեմիայի կողմից հաշվի են առնվում ուսումնական հետագա գործընթացի կազմակերպման ընթացքում:

Նման պայմաններում, թեև ըստ ներկայացված տվյալների՝ քանակական առումով գործողությունը կատարվել է մեծամասամբ, սակայն ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով ռազմավարական խնդիրը (արդյունքը) ոչ ամբողջական է իրականացվել, քանի որ ելակետային տվյալները հնարավորություն չեն տալիս գնահատել դրա արդյունավետությունը:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԵԾԱՄԱՍԱՄԲ:**

Ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ,** այս գործողության շրջանակներում անցկացված վերապատրաստումները չեն կարող գնահատվել իրենց նպատակին ծառայած, քանի որ լիարժեք չեն եղել՝ գործնականում պատասխանատվության անխուսափելիության սկզբունքն ապահովելու համար:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 30. Կոռուպցիոն հանցագործությունների մասին վիճակագրության համալրում

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի մակարդակում	Ակնկալվող արդյունքը՝ գործողության մակարդակում (2022թ)	Պատասխանատու մարմին (ներ)	Վերստուգիչ ցուցանիշ (2022թ)	Մշտադիտարկման արդյունք
Կոռուպցիոն իրավախախտումների համար պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի իրացման երաշխավորումը, օրենսդրության շարունակական կատարելագործումը	Կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ տեղեկատվության ստացման աղբյուրների դրանց քննության արդյունքում բռնագրավված և բռնագանձված գույքի մասին վիճակագրության	ՀՀ գլխավոր դատախազություն Ոստիկանություն	Կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ վիճակագրությունը համալրվել է տեղեկատվության ստացման աղբյուրների և քննության արդյունքում բռնագրավված և բռնագանձված գույքի մասին տվյալներով (2021թ.):	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է:** Ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է:**

, այդ թվում՝ կոռուպցիոն հանցագործությունների ցանկի օրենքով սահմանման միջոցով:	վարման կարգերը հաստատված են: Կոռուպցիոն հանցագործությունների մասին քրեական վիճակագրությունը համալրվել է տեղեկատվության ստացման աղբյուրների և քննության արդյունքում բռնագրավված և բռնագանձված գույքի մասին տվյալներով:			

Համաձայն՝ ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված եզրափակիչ զեկույցի՝ գործողությունը գնահատվել է **կատարվել է ամբողջությամբ**, դեռևս 2019 թվականին ՀՀ գլխավոր դատախազի 2019 թվականի դեկտեմբերի 27-ի և 2020 թվականի հուլիսի 2-ի համապատասխան հրամաններով հաստատված կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ վիճակագրական տեղեկատվությունը համալրվել է կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ տեղեկատվության ստացման աղբյուրների ու կոռուպցիոն հանցագործությունների քննության արդյունքում բռնագրավված և բռնագանձված գույքի մասին տվյալներով: Բացի այդ, Գլխավոր դատախազությունը յուրաքանչյուր տարի հրապարակում է կոռուպցիոն հանցագործությունների քննության վերաբերյալ տեղեկանք, որում ոչ միայն ներկայացվում են վիճակագրական տվյալներ, այլև՝ վերլուծվում են այդ տվյալները և համեմատական է անցկացվում նախորդ տարվա տվյալների հետ[26]:

Ըստ մշտադիտարկման արդյունքների՝ օրենսդրությամբ հաստատվել է կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ վիճակագրական վարման կարգը, հրապարակվում է կոռուպցիոն հանցագործությունների քննության մասին տեղեկատվությունը:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ Է:**

Ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է,** քանի որ օրենսդրության շարունակական կատարելագործման շրջանակներում հաստատվել են վիճակագրության վարման կարգերը:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 31. Պետական մարմինների էլեկտրոնային բազաներին քրեական հետապնդման մարմինների հասանելիության ապահովում էլեկտրոնային հարցման եղանակով

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի մակարդակում	Ակնկալվող արդյունքը՝ գործողության մակարդակում (2022թ)	Պատասխանատու մարմին (ներ)	Վերստուգիչ ցուցանիշ (2022թ)	Մշտադիտարկման արդյունք

[26] Նշված տարեկան տեղեկանքները հասանելի են հետևյալ հղմամբ՝ https://n9.cl/wpagk

Կոռուպցիոն իրավախախտումների համար պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի իրացման երաշխավորումը, օրենսդրության շարունակական կատարելագործումը, այդ թվում՝ կոռուպցիոն հանցագործությունների ցանկի օրենքով սահմանման միջոցով:	Պետական մարմինների էլեկտրոնային բազաներին քրեական հետապնդման մարմիններին էլեկտրոնային եղանակով ամբողջական հասանելության ապահովման և էլեկտրոնային հարցումներ կատարելու խոչընդոտները բացահայտվել են, վեր են հանվել խնդիրները և ներկայացվել են դրանց լուծմանն ուղղված առաջարկություններ: Խնդիրները լուծման նպատակով անհրաժեշտ գործողությունների իրականացում: Իրավապահ մարմիններն ունեն էլեկտրոնային եղանակով հարցումների միջոցով պետական մարմինների այն տեղեկատվական բազաներին հասանելիություն, որոնք անհրաժեշտ են կոռուպցիոն և այլ տնտեսական հանցագործությունների արդյունավետ քննության համար:	Փոխվարչապետի գրասենյակ Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ (ԷԿԵՆԳ) ԱՆ ԲՏԱՆ Գլխավոր դատախազություն Ազգային անվտանգության ծառայություն Քննչական կոմիտե ՀԿԿ	Իրավապահ մարմինների կողմից էլեկտրոնային եղանակով հարցումների միջոցով պետական մարմինների տեղեկատվական բազաներին հասանելիություն տվող ծրագրային ապահովումը մշակվել է և լիարժեք գործարկվում է (2022թ.): Իրականացվել է առնվազն 5 հարցում (2022թ):	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է:** Ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է:**

Համաձայն՝ ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված եզրափակիչ զեկույցի՝ գործողությունը գնահատվել է **կատարվել է ամբողջությամբ**, տվյալների շտեմարաններին հասանելիությունն ապահովվել է ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 19-ի N 1849-Ն որոշմամբ սահմանված կարգով: Շուրջ հիսուն վեբ ծառայությունների միջոցով հնարավոր է տվյալներ ստանալ տարբեր պետական շտեմարաններից: Ընդ որում, ԿՓՀ-ի միջոցով կատարված հարցումները 2022 թվականին կազմել են շուրջ 170 մլն.:

Ըստ մշտադիտարկման արդյունքների՝ քրեական հետապնդման մարմինները «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի միջոցով ունեն հասանելիություն այլ պետական մարմինների բազաներին, ինչպես օրինակ՝ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության, պետական ռեգիստրի, ճանապարհային ոստիկանության էլեկտրոնային ռեգիստրի և այլ բազաների տվյալներին:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ Է:**

Ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է,** քանի որ օրենսդրության շարունակական կատարելագործման շրջանակներում կոռուպցիոն իրավախախտումների քննության համար քրեական հետապնդման մարմինները ստացել են անհրաժեշտ հիմնական տվյալների բազաներին հասանելիություն:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 32. Բանկային հաշիվների կենտրոնացված ռեեստրի ստեղծում

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի մակարդակում	Ակնկալվող արդյունքը՝ գործողության մակարդակում (2022թ)	Պատասխանատու մարմին (ներ)	Վերստուգիչ ցուցանիշ (2022թ)	Մշտադիտարկման արդյունք
Կոռուպցիոն իրավախախտումների համար պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի իրացման երաշխավորումը, օրենսդրության շարունակական կատարելագործումը, այդ թվում՝ կոռուպցիոն հանցագործությունների ցանկի օրենքով սահմանման միջոցով:	Իրավական ակտերի նախագծերի փաթեթը ներկայացվել է ԱԺ: Բանկային հաշիվների կենտրոնական ռեեստրի կարգավորումները ընդունվել են: Բանկային հաշիվների կենտրոնական ռեեստրի գործարկվում է, և տվյալները համալրվում են:	ԿԲ ԲՏԱՆ	Բանկային հաշիվների կենտրոնացված ռեեստրի վերաբերյալ միջազգային փորձն ուսումնասիրվել և Վարչապետի աշխատակազմ է ներկայացվել առաջարկությունների փաթեթ (2019թ.):	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է:** Ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է:**

Համաձայն՝ ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված եզրափակիչ զեկույցի՝ գործողությունը գնահատվել է **կատարվել է ամբողջությամբ**, քանի որ 2022 թվականից բանկային հաշիվների կենտրոնական ռեեստրը ստեղծվել է և գործարկվում է և տվյալներն ամբողջությամբ համալրվել են:

Ըստ մշտադիտարկման արդյունքների՝ ռեեստրը մշակվել է ՀՀ ԿԲ-ի կողմից՝ ՀՀ ՊԵԿ-ի հետ համագործակցության շրջանակներում՝ հանրօգուտ նպատակների կենսագործման համար:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ Է:**

Ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է,** քանի որ օրենսդրության կատարելագործման շնորհիվ ստեղծվել է բանկային հաշիվների կենտրոնացված ռեեստրը:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 33. Կոռուպցիոն հանցագործությունների քննության և բացահայտման շրջանակում միջազգային համագործակցության ամրապնդում

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի մակարդակում	Ակնկալվող արդյունքը՝ գործողության մակարդակում (2022թ)	Պատասխանատու մարմին (ներ)	Վերստուգիչ ցուցանիշ (2022թ)	Մշտադիտարկման արդյունք
Կոռուպցիոն իրավախախտումների համար պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի իրացման երաշխավորումը, օրենսդրության շարունակական կատարելագործումը, այդ թվում՝ կոռուպցիոն հանցագործությունների	ԱԺ է ներկայացվել կոռուպցիոն գործերով միջազգային համագործակցության իրականացման առկա խոչընդոտների հաղթահարման վերաբերյալ առաջարկներ նախատեսող «Քրեական գործերով իրավական օգնության	ԱՆ Գլխավոր դատախազություն Ազգային անվտանգության ծառայություն	«Քրեական գործերով իրավական օգնության մասին» օրենքն ընդունվել է և կոռուպցիոն հանցագործությունների քննության և բացահայտման շրջանակում միջազգային համագործակցության մեխանիզմները	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ ՉԷ:** Ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՉԷ:**

ցանկի օրենքով սահմանման միջոցով:	մասին» օրենքի նախագիծը:		կատարելագործվել են (2022թ.):	

Համաձայն՝ ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված եզրափակիչ զեկույցի՝ գործողությունը գնահատվել է **չկատարված,** քանի որ «Քրեական գործերով իրավական օգնության մասին» օրենքն չի ընդունվել և կոռուպցիոն հանցագործությունների քննության և բացահայտման շրջանակում միջազգային համագործակցության մեխանիզմները չեն կատարելագործվել:

Ըստ մշտադիտարկման արդյունքների՝ օրենքը չի ընդունվել և ներկայումս այս առումով փաստացի կիրառվում են ՀՀ քրեական դատավարության հին օրենսգրքի վերաբերելի կարգավորումները, որոնք որոշակիորեն հակասության մեջ են գտնվում ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի մի շարք ինստիտուտների և կառուցակարգերի հետ:

Նշվածի կապակցությամբ շահարգիռ մարմիններից հայտնել են, որ «Քրեական գործերով իրավական օգնության մասին» օրենքի նախագծի վերնագիրը փոփոխվել է և սահմանվել «Քրեական վարույթով իրավական օգնության մասին» ՀՀ օրենքի նախագիծ: Այն ներկայումս գտնվում է հանրային քննարկումների փուլում և ՀՀ կառավարության 2021-2026թթ. միջոցառումների ծրագրով նախատեսված է մինչև 2023 թվականի դեկտեմբերի առաջին տասնօրյակը «Քրեական վարույթով իրավական օգնության մասին» օրենքի նախագծի շրջանառում և ընդունում:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ ՉԷ:**

Ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը՝ (արդյունքը) կոռուպցիոն իրավախախտումների համար պատասխանատվության անխուսափելիության ապահովումը, օրենդրության շարունակական կատարելագործումը **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՉԷ**:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 34. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված կառուցակարգերի ստեղծում

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի մակարդակում	**Ակնկալվող արդյունքը՝ գործողության մակարդակում (2022թ)**	**Պատասխանատու մարմին (ներ)**	**Վերստուգիչ ցուցանիշ (2022թ)**	**Մշտադիտարկման արդյունք**
Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված կառուցակարգերի սահմանումը և ներդրումը, միջազգային չափանիշներին դրանք համապատասխանության ապահովումը, միջազգային համագործակցության ամրապնդումը:	Ստեղծվել և գործարկվում են ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանը, գույքի կառավարմանը, միջազգային համագործակցությանն ուղղված կառուցակարգեր:	ԱՆ Գլխավոր դատախազություն ԿԲ Ազգային անվտանգության ծառայություն	Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված կառուցակարգերը ստեղծվել են (2021թ.) և գործարկվում են (2022թ.)	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է:** Ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ:**

Համաձայն՝ ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված եզրափակիչ զեկույցի՝ գործողությունը գնահատվել է **կատարվել է ամբողջությամբ**, քանի որ առկա գործիքակազմերի կատարելագործման նպատակով Գլխավոր դատախազության կողմից մշակվել և ԱՆ-ի կողմից շահագրգիռ մարմիններին՝ կարծիքի, ինչպես նաև հանրային քննարկման է ներկայացվել «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը: Նշված օրենքն (ՀՕ-270-Ն) ընդունվել է 2022 թ.-ի հունիսի 9-ին և ուժի մեջ է մտել 2022 թ-ի հուլիսի 10-ից: Օրենքով հստակեցվել են գործող մի շարք կարգավորումներ:

Ըստ մշտադիտարկման արդյունքների՝ հարկ է նկատել, որ օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ՀՀ ՍԴ-ի դիմումի հիման վրա Վենետիկի հանձնաժողովից ստացված 2022 թվականի դեկտեմբերի 19-ի կարծիքից պարզ է դարձել, որ օրենքն ունի լրամշակման կարիք, մասնավորապես, որոշ հարցերում, ինչպես օրինակ՝ ապացուցման բեռի մասով, օրենսդրական կարգավորումներն ունեն որոշակիացման անհրաժեշտություն[27]: Այսինքն, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի առանցքային հանգամանքները ունեն օրենսդրական որոշակիացման անհրաժեշտություն:

Նման պայմաններում, թեև ընթացակարգային գնահատումների արդյունքներով գործողությունը կատարվել է, սակայն ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով ռազմավարական խնդիրը (արդյունքը) ամբողջական իրականացված չէ, քանի օրենսդրական կարգավորումները լիարժեք չեն և որոշակի պատկերացում չեն տալիս ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման առանցքային հանգամանքների շուրջ:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ Է:**

Ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ,** քանի որ ապօրինի ծագում ունեցող գույքի կառուցակարգերի սահմանումը և միջազգային չափանիշներին համապատասխան դրանց ներդրումը լիարժեք չի կատարվել:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 35. Նոր Քրեական օրենսգրքի նախագծով Կոռուպցիոն իրավախախտումների համար իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտի ներդրում

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի մակարդակում	Ակնկալվող արդյունքը՝ գործողության մակարդակում (2022թ)	Պատասխանատու մարմին (ներ)	Վերստուգիչ ցուցանիշ (2022թ)	Մշտադիտարկման արդյունք
Կոռուպցիոն իրավախախտումների համար պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի իրացման երաշխավորումը, օրենսդրության շարունակական կատարելագործումը, այդ թվում՝ կոռուպցիոն հանցագործությունների	Նոր Քրեական օրենսգրքի նախագիծը և հարակից նախագծերի փաթեթը մշակվել և Ազգային ժողով են ներկայացվել:	ԱՆ Գլխավոր դատախազություն	Նոր Քրեական օրենսգրքի նախագիծը և հարակից նախագծերի փաթեթը ներկայացվել են Ազգային ժողով (2021թ.)	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է:** Ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ:**

[27] Վենետիկի հանձնաժողովի դիրքորոշումը հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD(2022)048-e, պարագրաֆ 61:

ցանկի օրենքով սահմանման միջոցով:				

Համաձայն՝ ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված եզրափակիչ զեկույցի՝ գործողությունը գնահատվել է **կատարվել է ամբողջությամբ**, քանի որ ՀՀ քրեական նոր օրենսգրքի ընդունմամբ ներդրվել է նաև իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության (այդ թվում՝ կոռուպցիոն հանցագործությունների համար) ինստիտուտը: Իրավաբանական անձանց պատասխանատվությանն առնչվող դրույթները ուժի մեջ են մտել 2023 թվականի հունվարի 1-ից:

Մշտադիտարկման խմբի կողմից ԱՆ-ին ներկայացվել էին հարցադրումներ առ այն թե արդյո՞ք առկա է իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտի վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրություն, արդյո՞ք առկա է իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտի վերաբերյալ վիճակագրական տվյալներ, արդյո՞ք նախքան ինստիտուտի ներդրումը, այն քննարկվել է գործարար հատվածի հետ, արդյո՞ք նախքան ինստիտուտը ներդրումը գնահատվել է այս ինստիտուտի հնարավոր ազդեցությունը գործարար միջավայրի վրա: Հիշյալին պատասխան չի տրամադրվել, հետևապես գործողության ազդեցությունն այս առումով չի կարող լիարժեք գնահատվել՝ ամբողջական տեղեկատվության բացակայությամբ պայմանավորված:

Միաժամանակ, մշտադիտարկման խմբի կողմից ուսումնասիրվել է, որ իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու մասով ՀՀ օրենսդրությունը պարունակում է քրեական հետապնդման մարմինների համար հայեցողության լայն հնարավորություններ, որոնք գործնականում կարող են կամայականությունների տեղիք տալ: Օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ իրավաբանական անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե իրավաբանական անձի մասնակիցները, բաժնետերերը կամ փայատերերը ձեռնարկել են ողջամտորեն անհրաժեշտ միջոցները քրեական օրենսգրքի 123-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված անձանց կողմից հանցանքի կատարումը կանխելու նպատակով: Այս համատեքստում, կարգավորումը չի համապատասխանում որոշակիության սկզբունքին և իրավաբանական անձանց համար չի ստեղծում հնարավորություն հստակեցնելու օրենսդրական կարգավորման բովանդակությունը:

Նման պայմաններում, իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտն անհրաժեշտ է համալրել անհրաժեշտ երաշխիքներով՝ որպեսզի մի կողմից՝ քրեական օրենսգրքի մակարդակով նախատեսված՝ իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտը ծառայի իր նպատակին, մյուս կողմից՝ ապահովվեն անհրաժեշտ պայմաններ իրավաբանական անձանց գործունեության բնականոն ընթացքը երաշխավորելու, և ընդհանուր առմամբ՝ արդարացի պատասխանատվության սկզբունքն ապահովելու համար: Այդ պատճառով անհրաժեշտ է ապահովել քրեաիրավական և քրեադատավարական կարգավորումների լիարժեք ներդաշնակությունը, իրավաբանական անձանց մեղսագրման ենթակա հոդվածների շրջանակի հստակեցումը, իրավաբանական անձանց վերակազմակերպման և սնանկացման դեպքերում քրեական պատասխանատվության ենթարկվելու առանձնահատկությունների սահմանումը, իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությունը բացառող կարգավորումներում հայեցողության լայն շրջանակի նեղացումը, իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությունից մեխանիկորեն ազատող կարգավորումների վերանայումը՝ իրավական որոշակիությանը համապատասխան որոշակի վավերապայմանների նախատեսմամբ, իրավաբանական անձանց նկատմամբ անվտանգության միջոցների կիրառման հնարավորության նախատեսումը, իրավաբանական անձանց նկատմամբ կիրառվող իրավական ներգործության միջոցների կասեցման (պայմանականորեն չկիրառման) հնարավորության նախատեսումը, իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքերի շրջանակի հստակեցումը, պետական ոչ առևտրային կազմակերպությունների, պետական բաժնեմաս ունեցող ընկերությունների

քրեական պատասխանատվության ենթարկվելու հնարավորության հստակեցումը, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների քրեական պատասխանատվության չենթարկվելու հիմքի սահմանումը:

Վերոգրյալի հաշվառմամբ, անհրաժեշտ է արձանագրել, որ թեև քանակական առումով գործողությունը կատարված է և իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ ինստիտուտը ներդրված է, սակայն ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրն իրականացված է ոչ ամբողջական:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ Է:**

Ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ,** քանի որ օրենսդրության կատարելագործումը լիարժեք չի կատարվել:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 36. «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքի 30-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորումների և իրավակիրառ պրակտիկային համապատասխանեցման նախադրյալների ստեղծում

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի մակարդակում	Ակնկալվող արդյունքը՝ գործողության մակարդակում (2022թ)	Պատասխանատու մարմին (ներ)	Վերստուգիչ ցուցանիշ (2022թ)	Մշտադիտարկման արդյունք
Կոռուպցիոն իրավախախտումների համար պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի իրացման երաշխավորումը, օրենսդրության շարունակական կատարելագործումը, այդ թվում՝ կոռուպցիոն հանցագործությունների ցանկի օրենքով սահմանման միջոցով:	Մշակվել և Ազգային ժողով է ներկայացվել օրենսդրական փաթեթ, որով կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակում օպերատիվ հետախուզական միջոցառումը կհամապատասխանեցվի նոր Քրեական օրենսգրքով նախատեսված կոռուպցիոն հանցագործությունների շրջանակին:	ԱՆ Գլխավոր դատախազություն ՀԿԿ Քննչական կոմիտե Ազգային անվտանգության ծառայություն Ոստիկանություն	«Օպերատիվ հետախուզական գործունեության մասին» օրենքով սահմանված իրավակարգավորումներ ի, նոր Քրեական օրենսգրքի և իրավակիրառ պրակտիկայի միջև հակասությունը վերացնող օրենսդրական փոփոխությունների փաթեթը ներկայացվել է ԱԺ (2022թ.):	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է:** Ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է:**

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված եզրափակիչ զեկույցի՝ գործողությունը գնահատվել է **կատարվել է ամբողջությամբ**, քանի որ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2022 թվականի հունիսի 09-ի ՀՕ-154-Ն օրենքով համապատասխան փոփոխություններ են կատարվել «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքում և դրանով իսկ լուծվել է նոր Քրեական օրենսգրքի և իրավակիրառ պրակտիկայի միջև հակասությունը:

Ըստ մշտադիտարկման արդյունքների՝ օրենքն ընդունվել է և պատշաճ ձևով կիրառվում է պրակտիկայում:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ Է:**

Ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է,** քանի որ իրավակիրառ պրակտիկայում առկա խնդրի առումով օրենսդրությունը կատարելագործվել է:

Ընթացակարգային (քանակական) գնահատման ցուցանիշ 2022թ.		
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	10	100%
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ	7	70%
ՈՐԻՑ ՄԵԾԱՄԱՍԱՄԲ ԿԱՏԱՐՎԱԾ	1	10%
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻ	1	10%
ՈՐԻՑ ՉԿԱՏԱՐՎԱԾ	1	10%

Ազդեցության մակարդակի (որակական) գնահատման ցուցանիշ 2022թ.		
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	10	100%
ՈՐԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է	5	50%
ՈՐԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ	4	40%
ՈՐԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՉԷ	1	10%

ՈԼՈՐՏ 4. ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄ ԵՎ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 37. Հանրային իրազեկման արշավի ծրագրի մշակում, հաստատում և իրականացում

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի մակարդակում	Ակնկալվող արդյունքը՝ գործողության մակարդակում (2022թ)	Պատասխանատու մարմին (ներ)	Վերստուգիչ ցուցանիշ (2022թ)	Մշտադիտարկման արդյունք
Հանրային կրթության և իրազեկման միջոցով կոռուպցիայի նկատմամբ ժխտողական վերաբերմունքի սերմանումը, ներառյալ՝ ազդարարման ինստիտուտի նկատմամբ վերաբերմունքի փոփոխման միջոցով, պահանջատեր քաղաքացու ձևավորումը:	Հաղորդակցման գործողությունների ծրագիրը հաստատվել է և իրականացվում է:	ԱՆ Վարչապետի աշխատակազմ ԿԿՀ Պետական կառավարման համակարգի մարմիններ ՀԿ-ներ ԶԼՄ-ներ	Հաղորդակցման գործողությունների ծրագիրը հաստատվել է և իրականացվել է առնվազն 5 միջոցառում (2021-2022թթ.):	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է :** Ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ:**

Համաձայն՝ ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված եզրափակիչ զեկույցի՝ գործողությունը գնահատվել է **կատարվել է ամբողջությամբ** և հաղորդակցման գործողությունների ծրագիրը[28] հաստատվել է Վարչապետի 2022 թվականի հուլիսի 18-ի N 820-Լ որոշմամբ: Նշված ծրագրի շրջանակներում իրականացվել են հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումների իրականացման ընթացքի և դրա արդյունքում իրականացվող բարեփոխումների վերաբերալ իրազեկման արշավներ հեռուստատեսությամբ, սոցիալական ցանցերում և պաշտոնական կայքերում գովազդային տեսահոլովակների հեռարձակման/ցուցադրման, սոցիալական ցանցերում, պաշտոնական կայքերում և ԶԼՄ-ներում տեղեկատվական նյութերի հրապարակման միջոցով: Բացի այդ, կոռուպցիայի դեմ պայքարի մարմինների գործունեության վերաբերյալ տեղեկատվական արշավի շրջանակներում իրազեկող տեսահոլովակներ է հեռարձակել (ցուցադրել), տեղեկատվական նյութեր է հրապարակել սոցիալական ցանցերում և պաշտոնական կայքերում, հնարավորության դեպքում՝ զանգվածային լրատվության միջոցներում Գործողության կատարման հետ կապված այլ մանրամասներ ներկայացված են Եզրափակիչ զեկույցում: Ըստ մշտադիտարկման արդյունքների՝ հաղորդակցման գործողությունների ծրագիրը մշակելիս և գործողություններ նախատեսելիս որևէ ելակետային հետազոտություն չի արվել, այլ ելակետային տվյալներ նույնպես առկա չեն եղել: Հաղորդակցման գործողությունների ծրագրի իրականացման հաշվետվությունը[29] մշակելիս գործողությունների չափում չի կատարվել: Հասարակության հակակոռուպցիոն ընկալման և գիտակցության վրա հաղորդակցման գործողությունների ծրագրի իրականացման ազդեցության գնահատում

[28] Տե՛ս Հաղորդակցման գործողությունների ծրագիրը հետևյալ հղմամբ. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=166032

[29] Տե՛ս Հաղորդակցման գործողությունների ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը հետևյալ հղմամբ. https://moj.am/storage/uploads/REPORT%20ON%20COMMUNICATION%20ACTION%20PLAN.pdf

նույնպես չի կատարվել: Պլանը կարելի է ենթադրել, որ ժամանակավրեպ է, և վերաբերում է միայն վերջին վեց ամիսներին:

Անդրադառնալով առնվազն 5 միջոցառումների կազմակերպմանը, ապա ըստ ԿԿՀ-ի՝ իրականացվել են իրազեկման հանդիպումներ, որոնց ընդհանուր առմամբ, ներկա են գտնվել մոտ 330 մասնակից: Այս հանդիպումներում գիտելիքների (տեղեկատվության) նախնական (pre) և վերջնական (post) ստուգում չի իրականացվել, հանդիպումների ազդեցության գնահատում, ինչպես նաև վերապատրաստողների գնահատում չի կատարվել: Որպես բանախոսներ, հանդես են եկել ԿԿՀ-ի մասնագիտական ստորաբաժանումների աշխատակիցները, որոնք ԵՄ Թվինինգ ծրագրի շրջանակներում վերապատրաստվել են որպես վերապատրաստողներ:

Հաղորդակցման գործողությունների ծրագրի շրջանակներում ԿԿՀ-ն կատարել է հրապարակումներ ֆեյսբուքյան տիրույթում, որի վերաբերյալ դիտումների վիճակագրություն կամ թվային պատկեր հրապարակված չէ, ազդեցության գնահատում չի կատարվել: Հաղորդակցման գործողությունների ծրագրի 1-ին և 2-րդ գործողություններով նախատեսված իրազեկման արշավների պլանը չի մշակվել:

Քաղաքացիական հասարակությունը և ԶԼՄ-ները առանձին միջոցառումներով չեն ընդգրկվել այս գործընթացում, նախագիծը միայն դրվել է հանրային քննարկման իրավական ակտերի հրապարակման միասնական հարթակում[30]:

Նման պայմաններում, թեև ըստ ներկայացված տվյալների՝ քանակական առումով գործողությունը կատարված է, սակայն ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով ռազմավարական խնդիրը (արդյունքը) ոչ ամբողջական է իրականացվել, քանի որ ելակետային տվյալները հնարավորություն չեն տալիս գնահատել դրա արդյունավետությունը:**Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով** գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է:**

Ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ**, այս գործողության շրջանակներում կատարված աշխատանքները չեն նպաստել հանրային իրազեկման միջոցով կոռուպցիայի նկատմամբ ժխտողական վերաբերմունք ամբողջական սերմանմանը:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 38. «Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» ուսուցման համար ոչ պարտադիր դասընթացի ներառում բոլոր բարձրագույն ուսումնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների դասավանդման մոդուլներում

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի մակարդակում	Ակնկալվող արդյունքը՝ գործողության մակարդակում (2022թ)	Պատասխանատու մարմին (ներ)	Վերստուգիչ ցուցանիշ (2022թ)	Մշտադիտարկման արդյունք
Հանրային կրթության և իրազեկման միջոցով կոռուպցիայի նկատմամբ ժխտողական վերաբերմունքի սերմանումը, ներառյալ՝	Սահմանվել են առարկայական չափորոշիչները: ԲՈՒՀ-երում և ՄՄՈՒՀ-երում դասավանդվում է	ԿԳՄՄՆ ԲՈՒՀ-եր ՄՄՈՒՀ-եր	ԲՈՒՀ-երում և ՄՄՈՒՀ-երում ուսանողների համար առնվազն 2 անգամ ցուցադրվել են հակակոռուպցիոն	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԱՍՆԱԿԻ:** Ռազմավարական խնդիրը (արդյունքը)

[30] Իրավական ակտի նախագիծը ներկայացվել է հանրային քննարկման հետևյալ հղմամբ. https://www.e-draft.am/projects/3879

ազդարարման ինստիտուտի նկատմամբ վերաբերմունքի փոփոխման միջոցով, պահանջատեր քաղաքացու ձևավորումը:	«Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» դասընթացը կամ առարկան: ԲՈՒՀ-երի և ՄՄՈՒՀ-երի ուսանողների համար ստեղծվել են հակակոռուպցիոն թեմաներով ուսուցողական նյութեր:		թեմաներով ուսուցողական նյութեր (2022թ.):	**ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ:**

Համաձայն՝ ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված եզրափակիչ զեկույցի՝ գործողությունը գնահատվել է **կատարվել է ամբողջությամբ**: ՄՄՈՒՀ-երի 2-4-րդ կուրսերում մշակվել և իրականացվում է 428 հակակոռուպցիոն թեմատիկայով առարկայական ծրագրեր, որոնց ուսանողների թիվը՝ 8430 է: Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրեր իրականացնող ՈՒՀ-երի 1-ին-3-րդ կուրսերում մշակվել և իրականացվում են թվով 244 հակակոռուպցիոն թեմատիկ առարկայական ծրագրեր, որոնց ուսանողների թիվը՝ 3396 է: «Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» առարկան բուհերում դասավանդվում է 2021-2022 ուսումնական տարվանից՝ հասարակագիտական առարկաների շրջանակում: Այս առարկան (թեմատիկ ծրագիրը) ներառված է նաև ՆՄՄԿՈՒՀ-ներում և ՀՀ ոստիկանության կրթահամալիրի բարձրագույն և միջին մասնագիտական կրթական ծրագրերում: Գործողության կատարման հետ կապված այլ մանրամասներ ներկայացված են Եզրափակիչ զեկույցում:

Ըստ մշտադիտարկման արդյունքների՝ «Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» ուսուցման ազդեցության գնահատման մեխանիզմ առկա չէ, որով հնարավոր կլինի հստակ գնահատել դասընթացի կամ առարկայական ծրագրի շրջանավարտի մոտ գործողության վերջնարդյունքը: Այս գործողության մասով **մտահոգիչ են սահմանված վերստուգիչ ցուցանիշները**, որոնք ավելի շատ իրավիճակային են, ոչ թե համակարգային: Օրինակ ցուցիչներից մեկն է՝ երկու դասընթացի ցուցադրում, սակայն պարզ չէ, թե ի՞նչ արդյունք դա կարող է տալ: **Վերհանվել է նաև համագործակցության խնդիր**. ԲՈՒՀ-երի հետ հանդիպումներ ԿԳՄՍՆ-ի կողմից չեն նախաձեռնվել, այլ վարվել է պաշտոնական գրագրություն, որով ոլորտային մարմինը առաջարկել է ԲՈՒՀ-երին իրենց մոտ ներդրել հակակոռուպցիոն դասընթացներ՝ մոդուլի կամ դասաժամի տեսքով:

Քաղաքացիական հասարակությունը չի ընդգրկվել այս գործընթացում:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԱՍՆԱԿԻ:**

Ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ**, այս գործողության շրջանակներում կատարված աշխատանքները չեն նպաստել հանրային իրազեկման միջոցով կոռուպցիայի նկատմամբ ժխտողական վերաբերմունք ամբողջական սերմանմանը:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 39. Ավագ դպրոցում հակակոռուպցիոն կրթության իրականացում

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝	Ակնկալվող արդյունքը՝ գործողության մակարդակում (2022թ)	Պատասխանատու մարմին (ներ)	Վերստուգիչ ցուցանիշ (2022թ)	Մշտադիտարկման արդյունք

ռազմավարական խնդրի մակարդակում				
Հանրային կրթության և իրազեկման միջոցով կոռուպցիայի նկատմամբ ժխտողական վերաբերմունքի սերմանումը, ներառյալ՝ ազդարարման ինստիտուտի նկատմամբ վերաբերմունքի փոփոխման միջոցով, պահանջատեր քաղաքացու ձևավորումը:	Սահմանվել են առարկայական չափորոշիչները: Հասարակագիտության դասագրքերում կոռուպցիային առնչվող բաժինների բովանդակությունը փոփոխվել է: Ավագ դպրոցների աշակերտների համար ստեղծվել են հակակոռուպցիոն թեմաներով ուսուցողական նյութեր:	ԿԳՄՄՆ ԲՈՒՀ-եր	Երևան քաղաքի առնվազն 40, մարզերի առնվազն 5 դպրոցների ավագ դպրոցների աշակերտներին ցուցադրվել են հակակոռուպցիոն թեմաներով ուսուցողական նյութեր (2022թ.):	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԱՍՆԱԿԻ:** Ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ:**

Համաձայն՝ ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված եզրափակիչ զեկույցի՝ գործողությունը գնահատվել է **կատարված է մասնակի**: Հասարակագիտության դասագրքերում կոռուպցիային առնչվող բաժինների բովանդակությունը փոփոխվել է, ավագ դպրոցների աշակերտների դասագրքերում ներառվել են հակակոռուպցիոն թեմաներով ուսուցողական նյութեր, սակայն այդ նյութերի ուսուցանումն իրականացվել է միայն Տավուշի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում: Համաձայն ԿԿՀ-ի՝ 2022 թվականի ընթացքում Երևանի և մարզերի դպրոցներում իրականացրել է «Հակակոռուպցիոն քաղաքականություն և բարեվարքություն» թեմայով իրազեկման բնույթի հանդիպումներ մանկավարժների և դպրոցահասակ երեխաների ծնողների շրջանում: Գործողության կատարման հետ կապված այլ մանրամասներ ներկայացված են Եզրափակիչ զեկույցում:

Ըստ մշտադիտարկման արդյունքների՝ 40 դպրոցի փոխարեն միայն Տավուշի մարզի 25 դպրոցների 9, 10, 11 դասարաններում են ներդրվել ուսուցողական նյութերը: Գիտելիքների նախնական (pre) և վերջնական (post) ստուգում չի կատարվել: Գնահատման ազդեցության գնահատում ևս չի կատարվել, քանի որ արդյունքները ամփոփվելու են 2023 թվականի մայիս ամսին: **Վերհանվել է նաև համագործակցության խնդիր** ՀՀ ԱՆ-ի և ԿԳՄՄՆ-ի միջև՝ քանի որ վերստուգիչ ցուցանիշները, որպես այդպիսին չեն քննարկվել, սակայն նախատեսվել են ռազմավարությամբ:

Քաղաքացիական հասարակությունը չի ընդգրկվել այս գործընթացում:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԱՍՆԱԿԻ:**

Ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ,** այս գործողության շրջանակներում կատարված աշխատանքները չեն նպաստել հանրային իրազեկման միջոցով կոռուպցիայի նկատմամբ ժխտողական վերաբերմունք ամբողջական սերմանմանը:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 40. Քաղաքացիական ծառայության համակարգում իրականացվող բարեփոխումների վերաբերյալ իրազեկվածության բարձրացում, վերապատրաստումների իրականացում՝ այդ թվում կոռուպցիայի կանխարգելման, բարեվարքության թեմայով

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի մակարդակում	Ակնկալվող արդյունքը՝ գործողության մակարդակում (2022թ)	Պատասխանատու մարմին (ներ)	Վերստուգիչ ցուցանիշ (2022թ)	Մշտադիտարկման արդյունք
Հանրային ծառայողի օրինավոր և բարեխիղճ կերպարի ձևավորումը՝ հաշվետվողականության, թափանցիկության և բարեվարքության ապահովման համապատասխան կառուցակարգերի ներդրմամբ:	Անցկացվել են իրազեկվածության բարձրացմանն ուղղված պարբերական վերապատրաստումներ, սեմինարներ, միջոցառումներ:	Վարչապետի աշխատակազմի ՔԾԳ ՄԻՊ ՀԿ-ներ	Յուրաքանչյուր տարի 50 քաղաքացիական ծառայողներ վերապատրաստվել են (2021-2022թթ):	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է:** Ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ:**

Համաձայն՝ ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված եզրափակիչ զեկույցի՝ գործողությունը գնահատվել է **կատարված է ամբողջությամբ:** ՔԾԳ-ը կազմակերպել է «Բարեվարքություն» թեմայով 10 վերապատրաստում, որին մասնակցել է 280 քաղաքացիական ծառայող, այդ թվում ԲՀԿ-ների և նրանց փոխարինող պաշտոնատար անձանց համար: Համաձայն ՔԾԳ-ի՝ հիմնական շեշտը դրվել է ՔԾ-ի օրենսդրությունից բխող գործընթացների վերաբերյալ ԲՀԿ-ների դերի, նրանց կողմից իրականացվող գործընթացների վրա:

Համաձայն ԿԿՀ-ի՝ տեղի է ունեցել պետական կառավարման համակարգի մարմինների բարեվարքության հարցերով ավելի քան 60 կազմակերպիչների մասնակցությամբ աշխատաժողով, որի ընթացքում, ի թիվս այլնի, անդրադարձ է կատարվել հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոններին (նպատակը, կառուցվածքը, կապը ԲՀԿ-ների գործունեության հետ), հայտարարագրման համակարգին: Որպես բանախոսներ հանդես են եկել ԿԿՀ-ի մասնագիտական վարչությունների աշխատակիցները: Աշխատաժողովի ընթացքում ներկայացվող վերապատրաստման/ իրազեկման նյութերը նույնպես մշակվել են ԿԿՀ-ի կողմից: Բանախոսների գնահատում չի իրականացվել, սակայն աշխատաժողովը գնահատվել է դրական:

Ըստ մշտադիտարկման արդյունքների՝ հիմնական մտահոգությունը կայանում էր նրանում, վերապատրաստման կազմակերպման ժամանակ դեռևս ընդունված չեն եղել հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնները և քաղաքացիական ծառայողների վարքագծի կանոնագիրքը, ինչը հնարավորություն չի տվել առավել թիրախային վերապատրաստում անցկացնել: Վերապատրաստման մասնակիցների գիտելիքների նախնական (pre) և վերջնական (post) ստուգում չի կատարվել: Վերապատրաստման արդյունքները ազդեցության մակարդակում ևս չեն գնահատվել: **Վերհանվել է նաև համագործակցության խնդիր** ԿԿՀ-ի և ՔԾԳ-ի միջև ԲՀԿ-ների ինստիտուտի ոլորտում, շեշտադրվելով այն հանգամանքը, որ ԿԿՀ-ի կողմից նախաձեռնողականությունը ցածր է:

Քաղաքացիական հասարակությունը չի ընդգրկվել այս գործընթացում:

Նման պայմաններում, թեև ըստ ներկայացված տվյալների՝ քանակական առումով գործողությունը կատարված է, սակայն ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով ռազմավարական խնդիրը (արդյունքը) ոչ ամբողջական է իրականացվել:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է:**

Ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ,** այս գործողության շրջանակներում

հանրային ծառայողի օրինավոր և բարեխիղճ կերպարի ձևավորումը ամբողջապես իրականացված չէ՝ հաշվետվողականության, թափանցիկության և բարեվարքության ապահովման համապատասխան կառուցակարգերի ներդրմամբ:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 41. Քաղաքացիական ծառայողների համար հեռավար ուսուցման մոդուլների մշակում

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի մակարդակում	Ակնկալվող արդյունքը՝ գործողության մակարդակում (2022թ)	Պատասխանատու մարմին (ներ)	Վերստուգիչ ցուցանիշ (2022թ)	Մշտադիտարկման արդյունք
Հանրային ծառայողի օրինավոր և բարեխիղճ կերպարի ձևավորումը՝ հաշվետվողականության, թափանցիկության և բարեվարքության ապահովման համապատասխան կառուցակարգերի ներդրմամբ:	Քաղաքացիական ծառայողների ուսուցումը կազմակերպվել է հեռավար ուսուցման մոդելի կիրառմամբ:	Վարչապետի աշխատակազմի ՔԾԳ ԲՏԱՆ	Ըստ մոդուլների՝ իրականացվում է ուսուցում (2021թ.):	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է:** Ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է:**

Համաձայն՝ ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված եզրափակիչ զեկույցի՝ գործողությունը գնահատվել է **կատարված է ամբողջությամբ:** Ըստ ՔԾԳ-ի՝ հեռավար ուսուցման մոդուլներին մասնակցել են «ՔԾՄ» օրենքով սահմանված 54 համապատասխան մարմնի քաղաքացիական ծառայողներ, որոնք զբաղեցրել են ՔԾ ղեկավար և մասնագիտական պաշտոններ: Հեռավար ուսուցման ծրագրերի թեմաներից է եղել բարեվարքությունը:

Ըստ ԿԿՀ-ի՝ ԵՄ Թվինինգ ծրագրի շրջանակներում ընթացքի մեջ են քաղաքացիական ծառայողների համար բարեվարքության (հակակոռուպցիոն) իրազեկվածության բարձրացման նպատակով թվային հարթակի ստեղծման և գործարկման աշխատանքները, ինչը նպատակ է հետապնդում մշակել և ստեղծել ժամանակակից, օգտագործողի համար հարմար և տվյալների պաշտպանությանը համապատասխան ուսուցման էլեկտրոնային հարթակ, որն առանձնահատուկ նշանակություն կունենա ուսուցման բովանդակությունը նպատակային կերպով փոխանցելու կարողության տեսանկյունից:

Ըստ մշտադիտարկման արդյունքների՝ բարեվարքության թեմայով մոդուլները ներկայում վերանայվում են: Մասնավորապես, առկա են երեք տարբեր մոդուլներ, և ներկայում իրականացվում են վերանայման աշխատանքներ, որի արդյունքում երեք մոդուլները կմիացվեն: Անդրադառնալով գիտելիքի գնահատմանը, ապա ըստ օրենսդրական կարգավորումների ենթադրվում է, որ ավարտելուց հետո վերապատրաստվողները պետք է հանձնեն թեսթային առաջադրանք և հավաքեն անհրաժեշտ կրեդիտներ, հակառակ պարագայում անհրաժեշտ կրեդիտներ չունենալը կարող է հիմք հանդիսանալ պաշտոնից ազատման:

Այս գործողության մասով **մտահոգիչ են սահմանված վերստուգիչ ցուցանիշները**, որոնք ամբողջական չեն և հնարավորություն չեն տալիս գնահատել գործողությունների իրականացման կատարողականը, բացահայտել քանակականացված արդյունքները:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է:**

Ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է**, այս գործողության շրջանակներում հանրային ծառայողի օրինավոր և բարեխիղճ կերպարի ձևավորումը իրականացված է՝ հաշվետվողականության, թափանցիկության և բարեվարքության ապահովման համապատասխան կառուցակարգերի ներդրմամբ:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 42. Թափուր պաշտոնների համալրման մրցույթների թեստավորման փուլի օնլայն հեռարձակում

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի մակարդակում	Ակնկալվող արդյունքը՝ գործողության մակարդակում (2022թ)	Պատասխանատու մարմին (ներ)	Վերստուգիչ ցուցանիշ (2022թ)	Մշտադիտարկման արդյունք
Հանրային ծառայողի օրինավոր և բարեխիղճ կերպարի ձևավորումը՝ հաշվետվողականության, թափանցիկության և բարեվարքության ապահովման համապատասխան կառուցակարգերի ներդրմամբ:	Գործարկվել է թափուր պաշտոնների համալրման մրցույթների թեստավորման փուլի օնլայն հեռարձակման համակարգը և քաղծառայության տեղեկատվական համակարգը:	Վարչապետի աշխատակազմի ՔԾԳ	2022թ.-ից բոլոր թափուր պաշտոնների համար անցկացվող մրցույթների թեստավորման փուլը հեռարձակվում է:	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է:** Ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է:**

Համաձայն՝ ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված եզրափակիչ զեկույցի՝ գործողությունը գնահատվել է **կատարված է ամբողջությամբ:**

Ըստ մշտադիտարկման արդյունքների՝ գործարկվել է թափուր պաշտոնների համալրման մրցույթների թեստավորման փուլի օնլայն հեռարձակման համակարգը և քաղծառայության տեղեկատվական համակարգը, ներկայումս պետական մարմիններում թափուր պաշտոնների համալրման մրցույթներն օնլայն հեռարձակման համակարգի հետ համատեղ անցկացվում են քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակի միջոցով:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է:**

Ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է**, այս գործողության շրջանակներում հանրային ծառայողի օրինավոր և բարեխիղճ կերպարի ձևավորումը իրականացված է՝ հաշվետվողականության, թափանցիկության և բարեվարքության ապահովման համապատասխան կառուցակարգերի ներդրմամբ:

Ընթացակարգային (քանակական) գնահատման ցուցանիշ 2022թ.		
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	6	100%
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ	4	66.67 %
ՈՐԻՑ ՄԵԾԱՄԱՍԱՄԲ ԿԱՏԱՐՎԱԾ	0	0%
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻ	2	33.33%
ՈՐԻՑ ՉԿԱՏԱՐՎԱԾ	0	0%

Ազդեցության մակարդակի (որակական) գնահատման ցուցանիշ 2022թ.		
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	6	100%
ՈՐԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է	2	33.33%
ՈՐԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ	4	66.67%
ՈՐԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՉԷ	0	0%

ՈԼՈՐՏ 5. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ, ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԴՐԱ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 43. Կոռուպցիայի, հանրային վստահության մակարդակի և հակակոռուպցիոն միջոցառումների ազդեցության վերաբերյալ պարբերական հարցումների իրականացում հասարակության շրջանում, հարցումների արդյունքների հրապարակում

Վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի մակարդակում	Ակնկալվող արդյունքը՝ գործողության մակարդակում (2022թ)	Պատասխանատու մարմին (ներ)	Վերստուգիչ ցուցանիշ (2022թ)	Մշտադիտարկման արդյունք
Մոնիթորինգի արդյունավետ մեխանիզմի արդյունքում ժամանակավրեպ միջոցառումների արդիականացման միջոցով կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության բարձրացումը:	Տարեկան կտրվածքով առնվազն 1 անգամ հասարակության շրջանում, այդ թվում՝ Երևան քաղաքում և մարզերում, իրականացվող հարցման արդյունքում վեր են հանվել հանրության կարծիքով առավել կոռումպացված ոլորտները, առկա կոռուպցիոն ռիսկերը, ներկայացվել է Կառավարության կողմից իրականացվող հակակոռուպցիոն միջոցառումների արդյունավետության վերաբերյալ հասարակության կարծիքը, քայլեր են ձեռնարկվել ուղղված կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը:	ԱՆ ԿԿՀ ՀԿ-ներ	Կոռուպցիայի, հանրային վստահության մակարդակի և հակակոռուպցիոն միջոցառումների ազդեցության վերաբերյալ իրականացվել են 2 հարցումներ, հարցումների արդյունքները հրապարակվել են Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի ու ԱՆ-ի կայք էջերում (2022թ.):	Գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԱՍՆԱԿԻ:** Ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ:**

Համաձայն՝ ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված եզրափակիչ զեկույցի՝ գործողությունը գնահատվել է **մեծամասամբ է կատարվել:** Կոռուպցիայի, հանրային վստահության մակարդակի և հակակոռուպցիոն միջոցառումների ազդեցության վերաբերյալ իրականացվել է մեկ հարցում, որը հրապարակվել է:

ԿԿՀ-ն՝ ԱՄՆ ՄԶԳ-ի և Համաշխարհային բանկի հետ համագործակցությամբ ևս իրականացրել է հետազոտություն[31] և հարցումներ:

Ըստ մշտադիտարկման արդյունքների՝ այս գործողության ներքո կատարված գործողությունները արվել են միջազգային կազմակերպությունների կողմից: ՀՀ ԱՆ-ը ներկայացրել է որոշակի առաջարկներ կարիքի տեսանկյունից, որոնք ամփոփվել են և մի քանի հարցի տեսքով ներառվել

[31] Տե՛ս կատարված հետազոտությունը հետևյալ հղմամբ. https://www.crrc.am/wp-content/uploads/2022/11/Corruption-in-Armenia_Research-report_Arm.pdf

են միջազգային կազմակերպությունների կողմից արված հարցումների շրջանակներում՝ կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքների վերաբերյալ: ՀՀ ԱՆ-ի և ԿԿՀ-ի կողմից առանձին չեն նախաձեռնել կոռուպցիայի, հանրային վստահության մակարդակի և հակակոռուպցիոն միջոցառումների ազդեցության վերաբերյալ 2 առանձին հարցումների իրականացում:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը **ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԱՄՆԱԿԻ:**

Ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը (արդյունքը) **ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ**, այս գործողության շրջանակներում մոնիթորինգի արդյունավետ մեխանիզմի արդյունքում ժամանակավրեպ միջոցառումների արդիականացման միջոցով կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության ամբողջական բարձրացում տեղի չի ունեցել:

Ընթացակարգային (քանակական) գնահատման ցուցանիշ 2022թ.		
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	1	100%
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ	0	0%
ՈՐԻՑ ՄԵԾԱՄԱՍԱՄԲ ԿԱՏԱՐՎԱԾ	0	0%
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՄԱՄՆԱԿԻ	1	100%
ՈՐԻՑ ՉԿԱՏԱՐՎԱԾ	0	0%

Ազդեցության մակարդակի (որակական) գնահատման ցուցանիշ 2022թ.		
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	1	100%
ՈՐԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է	0	0%
ՈՐԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ	1	100%
ՈՐԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՉԷ	0	0%

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՄԵԹՈԴԱԿԱՆ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

1. **Նոր՝ հինգերորդ ռազմավարությամբ առավել հստակ և չափելի վերստուգիչ ցուցանիշների նախատեսում**, մասնավորապես՝
    a. վերստուգիչ ցուցանիշներում քանակական արդյունքների տրամադրում, օրինակ՝ վերապատրաստումների գործողություններ նախատեսելու դեպքում գործողության իրականացումը գնահատելու համար անհրաժեշտ վերստուգիչ ցուցանիշներ ցուցիչների նախատեսում մասնակիցների թվի և վերապատրաստումների արդյունավետությանը/մասնակիցների բավարարվածության տոկոսային հարաբերակցության վերաբերյալ,
    b. վերստուգիչ ցուցանիշի նախատեսում տվյալ գործողությամբ նախատեսված յուրաքանչյուր ակնկալվող արդյունքի համար,
    c. համասեռ վերստուգիչ ցուցանիշների նախատեսում համանման գործողությունների պարագայում, օրինակ՝ օրենսդրական բարեփոխումների պարագայում ամբողջական բարեփոխումը որպես վերստուգիչ ցուցանիշ նախատեսում, որը կներառի թե՛ օրենսդրական բարեփոխումները, թե՛ օրենսդրության կիրարկման համար անհրաժեշտ ենթաօրենսդրության ընդունումը, ինչը հնարավորություն կտա միասնական ստանդարտներով գնահատել տարբեր կատարող մարմինների աշխատանքը,
    d. վերստուգիչ ցուցանիշների համալիր ստուգման նպատակով մի քանի աղբյուրներից տրամադրած տեղեկությունների համադրում,
    e. ազդեցության մակարդակի վերստուգիչ ցուցանիշների (impact level indicators) սահմանում, որոնց միջոցով հնարավոր կլինի գնահատել, թե արդյոք իրականացված գործողությունները հանգեցրել են ցանկալի արդյունքներին և ինչպիսի ազդեցություն են ունեցել երկարաժամկետ հատվածում՝ կապելով ռազմավարության կոնկրետ խնդիրների լուծման հետ:
2. **Նոր՝ հինգերորդ ռազմավարությամբ կոռուպցիայի կանխարգելման նպատակի ներքո երկու ենթանպատակի նախատեսում, այն է՝ «*Կոռուպցիայի կանխարգելում հանրային ոլորտում*» և «*Կոռուպցիայի կանխարգելում մասնավոր ոլորտում*»,** ինչը բխում է միջազգային պրակտիկայից, օրինակ՝ Հոնգ Կոնգի Կոռուպցիայի դեմ պայքարի անկախ հանձնաժողովի փորձից[32]:
3. **Նոր ռազմավարությամբ «գործարար ոլորտ» եզրույթի փոխարեն «մասնավոր ոլորտ» եզրույթի կիրառում,** քանի որ գործարար ոլորտը հանդիսանում է մասնավոր ոլորտի բաղադրիչ, բացի այդ, «private», եզրույթի համանման թարգմանություն է կիրառվում միջազգային փաստաթղթերի հայերեն տարբերակներում, օրինակ՝ ՀՀ ԱԺ-ի կողմից վավերացված ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիայում:
4. **Պետական կառավարման մարմինների և այլ շահագրգիռ կառույցների միջև համագործակցության նոր կարգի սահմանում,** քանի որ ռազմավարությամբ վերհանված

[32] Հոնգ Կոնգի Կոռուպցիայի դեմ պայքարի անկախ հանձնաժողովի պաշտոնական կայք, https://www.icac.org.hk/en/cpd/duty/index.html

խնդիրներից էր նաև համագործակցության խնդիրը, ինչպես օրինակ՝ ԿԿՀ-ի և ՔԾԳ-ի, ԿԿՀ-ի և ԱՆ, ԱՆ-ի և ԿԳՄՄՆ-ի, ԿԳՄՄՆ-ի և ուսումնական հաստատությունների միջև:

2. ԱՌԱՋԱՐԿՆԵՐ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ

1. Կոռուպցիայի կանխարգելում

- **Կոռուպցիայի կանխարգելման և հակակոռուպցիոն կրթության մասին իրավակարգավորումների միասնական ակտի մշակում,** որով համապարփակ կերպով կկարգավորվեն կոռուպցիայի կանխարգելման բոլոր ասպեկտները, օրինակ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված մի շարք կոռուպցիայի կանխարգելման կառուցակարգեր: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ միջազգային փորձի, այդ թվում՝ ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիայի համաձայն հակակոռուպցիոն կրթությունը իրականացվում է կոռուպցիայի կանխարգելմանը զուգահեռ, առաջարկում ենք դիտարկել նաև այն տարբերակը, որ օրենսդրական ակտի շրջանակներում ներառվի նաև հակակոռուպցիոն կրթության օրենսդրական կարգավորումները: Եթե ՀՀ կառավարությունը որոշում է հակակոռուպցիոն կրթության ոչ ֆորմալ բաղադրիչի իրականացման գործառույթները վերապահել ԿԿՀ-ին, ապա այդ գործառույթի փոխանցումը պետք է լինի աստիճանաբար՝ հնարավորինս սահուն, որի պարագայում անհրաժեշտ է օրենսդրական փոփոխություններ կատարել նաև կրթության ոլորտի օրենսդրական ակտերի շրջանակներում: Այն դեպքում, երբ ՀՀ կառավարությունը որոշում է հակակոռուպցիոն կրթության ոչ ֆորմալ բաղադրիչի իրականացման գործառույթները վերապահել ԿԳՄՄՆ-ին, այս դեպքում ևս պետք է օրենսդրական փոփոխություններ կատարել նաև կրթության ոլորտի օրենսդրական ակտերի շրջանակներում:
- **ԿԿՀ-ի գործունեության, ռեսուրսների, կարողությունների և ազդեցության գնահատում**, որից հետո միայն այն հիմնական փաստարկված ու կարիքահեն առաջարկների հատկորոշում, որոնք վեր կհանեն հիմնական ռիսկերը և կզարգացնեն ԿԿՀ-ի կարողությունները:
- Հանրային կոռուպցիայի կանխարգելման ոլորտում քաղաքացիական հասարակության մասնագիտացված և մասնավոր կառույցներին գործառույթների մրցակցային պատվիրակման կառուցակարգերի սահմանում և իրականացում:

1.1. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ (բարեվարքություն)

- **Բարեվարքության ուսումնասիրության համակարգի կատարելագործում,** որի շրջանակներում առաջարկվում է
    - ԿԿՀ-ի եզրակացությունները, կամ առնվազն դրանց եզրափակիչ մասը հանրայնացնել և հասանելի դարձնել հասարակությանը մինչև թեկնածուի ընտրության կատարումը ՀՀ ԲԴԽ-ի, ԱԺ-ի, Գլխավոր դատախազության կամ այլ իրավասու մարմնի կողմից:
    - Ներդնել ընթացիկ բարեվարքության ստուգման կառուցակարգեր, օրինակ՝ դատավորի, քննիչի, դատախազի մասով:

- **Էթիկայի հանձնաժողովների, բարեվարքության հարցերով կազմակերպիչների և հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների ինստիտուտների շարունակական կատարելագործում,** որի շրջանակներում առաջարկվում է՝
    - ավելացնել բարեվարքության հարցերով կազմակերպիչների ընտրության չափորոշիչների վերանայումը՝ դրանցում նախատեսելով որակավորման պահանջներ, այդ թվում նաև հակակոռուպցիոն փորձի վերաբերյալ պահանջ: Այս դեպքում անհրաժեշտ կլինի ապահովել նշված պահանջների սահմանման իրավական հիմքերը, որն էլ հիմք կհանդիսանա պաշտոնների անձնագրերում հետագա փոփոխությունների համար,
    - ավելացնել բարեվարքության հարցերով կազմակերպիչների լիազորությունների շրջանակը՝ նախատեսելով այդ լիազորությունների տարածումը նաև հանրային պաշտոն զբաղեցնող անձանց վրա, որը հնարավորություն կտա նաև հանրային պաշտոն զբաղեցնող անձանց օգտվել բարեվարքության հարցերով կազմակերպիչների մասնագիտական աջակցությունից,
    - ներդնել գործիքներ՝ ապահովելու «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի կիրարկումը, ըստ որի բարեվարքության հարցերով կազմակերպիչը վարում է հանրային ծառայողների կողմից անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների և շահերի բախման դեպքերի վիճակագրություն: Բացի այդ, հրապարակայնորեն հասանելի դարձնել այս վիճակագրական տվյալները՝ վարելով համապատասխան շտեմարան՝ նշելով կոնկրետ իրավախախտումների թիվն ու բնույթը, կայացրած որոշումները (ներառյալ՝ վարույթի քննության արդյունքները, այդ թվում բացասական և դրական ելքերը), պաշտոն զբաղեցրած անձանց անուն, ազգանունը և զբաղեցրած պաշտոնը, կիրառված պատասխանատվության տեսակները և այլն,
    - օրենսդրական փոփոխությունների միջոցով լիազորել և տրամադրել գործիքակազմ ԿԿՀ-ին՝ ապահովելու վարքագծի կանոնների միասնականությունը, (օրինակ՝ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով՝ Քննչական կոմիտեն պարտավոր չէ ընդունել ԿԿՀ-ի մշակած վարքագծի կանոնները՝ որպես տիպային: Նույն օրինակը վերաբերում է նաև ԱԺ-ին):

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ԲՀԿ-ների լիազորությունները սահմանված են ՔԾՄ և ՀԾՄ օրենքներով, որոնց հիման վրա համապատասխան դրույթներն ամրագրվել են ԲՀԿ ՔԾ պաշտոնների անձնագրերում, ուստի վերը նշված լիազորությունների ավելացման, ինչպես նաև լիազորությունների տարածման շրջանակի փոփոխման համար **անհրաժեշտ է դրանք սահմանել համապատասխան իրավական ակտերում:**

1.2. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ (հայտարարագրում, նվերներ, կարգավորման ազդեցության գնահատում, գնումներ, մասնավոր ոլորտ, իրական շահառուներ, տնտեսական մրցակցության պաշտպանություն)

1.2.1. Հայտարարագրում

- **Հայտարարագրման ոլորտի օրենսդրության շարունակական բարելավում,** որի շրջանակներում
    - նախատեսել արտասահմանում, կրիպտոարժույթով արվող ծախսերի հայտարարագրման և պաշտոնատար անձի պարտավորությունների երրորդ անձանց կողմից մարման վերահսկման գործիքակազմեր՝ անդրադարձ կատարելով հարկային պարտավորությունների հարցին,
    - վերանայել հայտարարագրում սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու համար նախատեսված պատասխանատվության միջոցները, քանի որ գործող իրավակարգավորումների համաձայն վարչական և քրեական պատասխանատվության միջոցների միջև սահմանը խիստ նեղ է։

1.2.2. Անհամատեղելիության պահանջներ

- **Անհամատեղելիության պահանջների ոլորտի օրենսդրության շարունակական կատարելագործում,** որի շրջանակներում նախատեսել մեխանիզմներ, որոնք բխում են բաժնեմասնակցությունը մասնագիտացված հավատարմագրային կառավարման ընկերություններին հանձնելու պահանջի էությունից, օրինակ՝ վերանայել անհատ ձեռնարկատերերի կողմից հավատարմագրային կառավարման իրականացման հնարավորությունը, դիտարկել «Հավատարմագրային կառավարման ընկերությունների մասին» ՀՀ օրենքի ընդունման նպատակահարմարության հարցը։
- **Անհամատեղելիության պահանջների ոլորտի օրենսդրական փոփոխությունների կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական իրավական ակտերի,** մասնավորապես՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից գույքի հավատարմագրային կառավարման հանձնելու պայմանագրերի գրանցման և հաշվառման ռեեստր և վարման կարգի **ընդունում**՝ նախատեսելով նշյալի վերաբերյալ վիճակագրության վարմանը և հրապարակայնացմանն ուղղված իրավանորմեր։

1.2.3. Նվերներ

- **Նվերների ոլորտի օրենսդրական փոփոխությունների կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական իրավական ակտերի, մասնավորապես՝** նվերների ռեեստրի վարման կարգի **ընդունում**։

1.2.4. Կարգավորման ազդեցության գնահատում

- **Իրավական ակտերի հակակոռուպցիոն փորձաքննության ակրեդիտացման համակարգի ներդրում,** որը միջազգային փորձում տեղ գտած պրակտիկա է, որի ժամանակ փորձաքննությունը պատվիրակվում է հակակոռուպցիոն փորձագետների կամ մասնագիտացված ՔՀԿ-ների, որոնք պետության կողմից սահմանված կարգով անցել են հատուկ ակրեդիտացիա։

1.2.5. Մասնավոր ոլորտ

- **Մասնավոր ոլորտում հակակոռուպցիոն նոր գործիքակազմի ներդրում և զարգացում, մասնավորապես՝ ԿԿՀ-ին գործարար ոլորտում կոռուպցիայի կանխարգելման գործառույթի տրամադրում և համապատասխան ստորաբաժանման ստեղծում, վերջինիս կողմից գործարար հատվածի հետ համագործակցության շրջանակներում**

խորհրդապահական հանդիպումների իրականացման գործիքակազմի ներդրում՝ միտված կոռուպցիոն ռիսկերի գնահատմանը և բարեփոխման առաջարկությունների ներկայացմանը թիրախ ոլորտներում, որը միջազգային փորձում տեղ գտած պրակտիկա է, երբ գործարարներն անկաշկանդ բարձրաձայնում են նեղ ոլորտային կոռուպցիոն սխեմաների և այլ խնդիրների մասին, օրինակ՝ հարկային, մաքսային, պետական գնումներ, լիցենզիաներ և թույլտվություններ, քանի որ ստացված տեղեկություններն օգտագործվում են ոչ թե քրեական պատասխանատվություն կիրառելու, այլ՝ խնդիրները վերհանելու նպատակով:

- **Մասնավոր կոռուպցիայի կանխարգելման ոլորտում քաղաքացիական հասարակության մասնագիտացված և մասնավոր կառույցներին գործառույթների մրցակցային պատվիրակման կառուցակարգերի սահմանում և իրականացում:**
- **Մասնավոր ոլորտում կոռուպցիայի կանխարգելման գործող համակարգի գործունեության արդյունավետության բարձրացում ըստ թիրախ ոլորտների**, մասնավորապես՝
    - պետական ռեգիստրի ինստիտուցիոնալ զարգացում՝ իրական շահառուների հարցերով զբաղվող առանձնացված ստորաբաժանման ստեղծման միջոցով,
    - ՄԻՊ գրասենյակի ինստիտուցիոնալ հզորացում՝ մասնավոր հատվածի և պետական մարմինների միջև հարաբերություններում գործարար շահերի պաշտպանության համատեքստում կամ Բիզնես օմբուդսմենի ինստիտուտի ներդրում,
    - էկոնոմիկայի նախարարության ինստիտուցիոնալ զարգացում կոռուպցիայի կանխարգելման, մասնավորապես՝ հակակոռուպցիոն համապատասխանության պահաջների խթանման ոլորտում,
    - Պետական գնումների իրականացման, ինչպես նաև այդ գործընթացների նկատմամբ հսկողություն իրականացնող պաշտոնատար անձանց կարողությունների հզորացում,
    - Տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառում պաշտոնատար անձանց կարողությունների հզորացում:

1.2.6. Գնումներ

- **Գնումների պլանավորման համակարգում հակակոռուպցիոն գործիքակազմի արդիականացում և կատարելագործում**, մասնավորապես՝ պատվիրատուների կողմից ձեռք բերվող հիմնական ապրանքների, ծառայությունների և աշխատանքների համար միասնական բնութագրերի մշակումը և ավտոմատ եղանակով, միանման բնութագրեր ունեցող առարկաների նախահաշվային գների որոշման և պլանավորման միասնական համակարգի ներդրումը,
- **Գնումների էլեկտրոնային համակարգի արդիականացումը՝ հակակոռուպցիոն վերահսկողության և մշտադիտարկման նորարարական խելացի գործիքների վերազինմամբ,**
- **Մեկ անձից կատարվող գնումների նկատմամբ վերահսկողության մեխանիզմների կատարելագործում:**

1.2.7. Հակակոռուպցիոն համապատասխանության ծրագրեր

- **Հակակոռուպցիոն համապատասխանության ծրագրերի առկայությունը որպես՝**

- **իրավաբանական անձի քրեական պատասխանատվությունը բացառող կամ մեղմացուցիչ հանգամանք նախատեսող օրենսդրական պահանջների նախատեսում,**
- **գործարար ոլորտի ներկայացուցիչներին պետական աջակցության տրամադրման առավելություն տվող չափանիշ նախատեսող օրենսդրական պահանջների նախատեսում:**

1.2.8. Իրական շահառուներ

- **Իրական շահառուների տվյալների արժանահավատության ստուգման միասնական կառուցակարգերի ներդրում, ստուգման մեթոդաբանության, տեխնիկական կանոնակարգերի ներդրում:**
- **Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի՝ իրական շահառուների հայտարարագրման էլեկտրոնային համակարգի արդիականացում և կատարելագործում**
  - բացառել համակարգի տեխնիկական խափանումները՝ պայմանավորված հայտարարատու իրավաբանական անձանց թվի զգալի աճի հետևանքով ծագած համակարգի ծանրաբեռնվածությամբ:
  - առաջնորդվել բաց տվյալների (open contracting data standards) և բաց աղբյուրների (open source) ստանդարտներով և օգտագործողին հարմար (user-friendly) և մեքենայական ընթերցվող (machine readable) ձևաչափով,
  - վերազինել անկանոնությունները վերհանող նորարարական խելացի գործիքներով, օրինակ՝ կարմիր դրոշակներով (red flags),
  - ապահովել ծրագրային փոխգործելիություն իրական շահառուներին առնչվող ինչպես ներպետական հարթակների միջև, մասնավորապես՝ էլեկտրոնային գնումների և ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի համակարգերի, այնպես էլ՝ միջազգային համագործակցություն հաստատման միջոցով իրական շահառուների օտարերկրյա ռեգիստրների միջև:
- **Իրական շահառուների նույնականացման միասնական ստանդարտների մշակում և ստանդարտների վրա հիմնված իրական շահառուների նույնականացման մատչելի ուղեցույցների և վերապատրաստման ծրագրերի մշակում ըստ թիրախ խմբերի՝**
  - հայտարարատու իրավաբանական անձանց համար՝ ըստ կազմակերպաիրավական տեսակի առանձնահատկությունների,
  - պետական ռեգիստրի և իրական շահառուների ոլորտին առնչվող այլ պետական մարմինների համար:

1.2.9. Տնտեսական մրցակցության պաշտպանություն

- **Տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտի էլեկտրոնային գործիքակազմի կատարելագործելում՝ տնտեսական շուկայում անկանոնությունները վերհանող համակարգչային ապահովման սքրինինգային ծրագրերի և այլ գործիքների, օրինակ՝ կարմիր դրոշակների (red flags) ներդրում:**

2. Կոռուպցիայի դեմ պայքար

2.1. Քրեական հետապնդման մարմինների վերապատրաստում

2.1.1. Միջազգային փորձագետների ներգրավմամբ կոռուպցիոն առանձին հանցագործությունների, այդ թվում՝ ապօրինի հարստացման, քննությամբ զբաղվող քննիչների, դատախազների դատավորների արտահերթ վերապատրաստումների կազմակերպում, առանձին հանցագործություններով քննության մեթոդիկայի ուղեցույցների մշակում, նրանց մասնագիտական շարունակական զարգացման ապահովում։

2.2. «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի կատարելագործում

2.2.1. «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի կատարելագործում՝ հիմք ընդունելով միջազգային չափորոշիչներն ու ՀՀ ՍԴ-ի դիմումի հիման վրա Վենետիկի հանձնաժողովից ստացված 2022 թվականի դեկտեմբերի 19-ի կարծիքով սահմանված ուղենիշային չափորոշիչները։ Այս առումով, պետք է առավել որոշակի դարձնել օրենսդրական կարգավորումները և մասնավորապես՝ հստակեցնել օրենքով սահմանված ապացուցման բեռը նշված վարույթներով։

2.3. Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտի կատարելագործում

2.3.1. Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտի վերաբերյալ կարգավորումների վերանայում և խիստ հայեցողական կարգավորումների նվազեցում՝ նրանց քրեական պատասխանատվության ենթարկելու առումով։ Միաժամանակ, անհրաժեշտ է իրականացնել իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտի ազդեցության գնահատումը գործարար միջավայրի վրա և վեր հանել առկա խնդիրները։

2.4. Կոռուպցիոն հանցագործությունների միջազգային համագործակցության ամրապնդում

2.4.1. Կոռուպցիոն գործերով միջազգային համագործակցության հնարավորություններ նախատեսող «Քրեական գործերով իրավական օգնության մասին» ՀՀ օրենքի լրամշակում և ընդունում, որը հնարավորություն կընձեռի քրեական հետապնդման մարմիններին առավել արդյունավետ համագործակցելու միջազգային կառույցների հետ՝ կոռուպցիոն բնույթի ենթադրյալ հանցագործությունների կատարման մեջ մեղադրվող անձանց հայտնաբերելու և քրեական պատասխանատվության ենթարկելու համար։

2.5. Ազդարարման համակարգի կատարելագործում

2.5.1. Նոր՝ հինգերորդ հակակոռուպցիոն ռազմավարության շրջանակներում ազդարարման համակարգին առնչվող բարեփոխումները պետք է ներառվեն կոռուպցիայի հակազդման ոլորտում՝ հաշվի առնելով այդ համակարգին բնորոշ՝ կոռուպցիան հակազդող բնույթը: Այլ կերպ, դրանք պետք է դիտարկվեն ոչ թե որպես կոռուպցիայի կանխարգելման, այլ հակազդման ոլորտի բաղկացուցիչ մաս:

2.5.2. Կոռուպցիայի հակազդման ոլորտում ազդարարման համակարգի ներդրմամբ կառուցակարգի սահմանում, ըստ որի ներքին և արտաքին ազդարարումները կիրականացվեն մեկ միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով, միաժամանակ ապահովելով ներկայացված հաղորդումների քննությունն իրավասու մարմինների կողմից:

2.5.3. Ազդարարման հարցերով պատասխանատուների ընտրության և նշանակման իրավակարգավորումների վերանայում, նրանց մասնագիտական շարունակական զարգացման ապահովում վերապատրաստումների և այլ կրթական միջոցառումների միջոցով:

2.5.4. Ազդարարման դեպքերի վերաբերյալ վիճակագրություն վարելու համակարգի կատարելագործում, վիճակագրության վարման պարտադիր և միասնական կանոնների ներդրում:

2.5.5. Ազդարարման էլեկտրոնային հարթակի և անվտանգության երաշխիքների կատարելագործում, անվտանգության ապահովման լիազորության վերապահում «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ին:

3. Հանրային իրազեկում և հակակոռուպցիոն կրթություն

3.1. Հակակոռուպցիոն կրթություն

3.1.1. **Հակակոռուպցիոն կրթության մասին իրավակարգավորումների միասնական ակտի մշակում,** այն դեպքում, եթե հակակոռուպցիոն կրթությունը չներառվի Կոռուպցիայի կանխարգելման մասին իրավակարգավորումների միասնական ակտում: Այս դեպքում, հակակոռուպցիոն կրթության մասին առանձին ակտով հարկավոր է համապարփակ կերպով կարգավորվել հակակոռուպցիոն կրթությունն ու հանրային իրազեկումը՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ միջազգային փորձի, այդ թվում՝ ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիայի համաձայն հակակոռուպցիոն կրթությունը համարվում է կոռուպցիայի դեմ պայքարի երեք հիմնասյուներից մեկը: Եթե ՀՀ կառավարությունը որոշում է հակակոռուպցիոն կրթության ոչ ֆորմալ բաղադրիչի իրականացման գործառույթները վերապահել ԿԿՀ-ին, ապա այդ գործառույթի փոխանցումը պետք է լինի աստիճանաբար՝ հնարավորինս սահուն, որի պարագայում անհրաժեշտ է օրենսդրական փոփոխություններ կատարել նաև կրթության ոլորտի օրենսդրական ակտերի շրջանակներում: Այն դեպքում, երբ ՀՀ կառավարությունը որոշում է հակակոռուպցիոն կրթության ոչ ֆորմալ բաղադրիչի իրականացման գործառույթները վերապահել ԿԳՄՄՆ-ին, այս դեպքում ևս պետք է օրենսդրական փոփոխություններ կատարել նաև կրթության ոլորտի օրենսդրական ակտերի շրջանակներում:

3.1.2. Նախադպրոցական, ուսումնադաստիարակչական, միջնակարգ, նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում, ինչպես նաև հետբուհական ուսումնական հաստատություններում հակակոռուպցիոն կրթության կառուցակարգերի ներդնում, առկա կառուցակարգերի կատարելագործում՝ ըստ յուրաքանչյուր սուբյեկտային կազմի (սաներ, աշակերտներ, ուսանողներ, դաստիարակչական և մանկավարժական կազմ, վարչական մաս) և տարիքային առանձնահատկությունների,

3.1.3. Հակակոռուպցիոն ոչ ֆորմալ կրթության կառուցակարգերի ներդնում, առկա կառուցակարգերի կատարելագործում (հակակոռուպցիոն կրթական ծրագրեր, ցանցեր, դպրոցներ, լաբորատորիաներ և ակումբներ, հանդեսներ, ներկայացումներ, բեմադրություններ, խաղեր, մուլտֆիլմեր, վերապատրաստումներ, կառավարության և հակակոռուպցիոն պատկան մարմինների պատվերով գիտական հետազոտությունների իրականացում՝ կիրառական նպատակներով, ազգային և միջազգային գիտաժողովներ),

3.1.4. Հակակոռուպցիոն ուսումնական և մեթոդական նյութերի մշակում և տարածում (ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության) ըստ յուրաքանչյուր սուբյեկտային կազմի (սաներ, աշակերտներ, ուսանողներ, դաստիարակչական և մանկավարժական կազմ, վարչական մաս) և տարիքային առանձնահատկությունների։

3.2. Հանրային իրազեկում

3.2.1. Հանրային իրազեկման կառուցակարգերի ներդնում, առկա կառուցակարգերի կատարելագործում (սոցիալական թիրախավորված գովազդներ, համայնքային բնակչության և տեղական ՀԿ-ների հետ հանրային քննարկումներ և զրույցներ, Կոռուպցիայի դեմ պայքարի օրը՝ դեկտեմբերի 9-ին համապետական ֆլեշմոբեր, Կոռուպցիայի դեմ պայքարի օրը՝ դեկտեմբերի 9-ին երիտասարդների և մեծահասակների մասնակցությամբ համաժողով և քննարկումներ, համակարգչային խաղեր՝ տեղեկատվական բնույթի և իրավիճակային՝ հիմնված իրական կյանքից վերցված հնարավոր սցենարների վրա, թատրոններում ներկայացումներ),

3.2.2. Հանրային իրազեկման սուբյեկտային կազմում ընդգրկել հասարակությանը՝ լայն իմաստով, մասնավոր ոլորտի կազմակերպություններին, պետական մարմիններին և կազմակերպություններին, ոչ առևտրային կազմակերպություններին (ՀԿ-ներ, Հիմնադրամներ),

3.2.3. Վերը թվարկված բոլոր գործողությունների մանրամասն նախատեսում հակակոռուպցիոն կրթության և հանրային իրազեկման հաղորդակցման գործողությունների ծրագրի շրջանակներում, որը հարկավոր է ընդունել հինգերորդ ռազմավարության մշակման ուղենիշների հիման վրա, այդ թվում՝ մասնակցային, ներառական և թափանցիկ գործընթացի միջոցով՝ ելակետային ցուցիչների հիման վրա։

4. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ, ՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԴՐԱ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

4.1. Մշակել կոռուպցիայի հանրային ընկալումը գնահատող մեկ ունիվերսալ ազգային գործիք՝ ՀՀ-ի համար, որը կարտահայտի Հայաստանի կարիքներն ու ակնկալիքները։

Վերոգրյալի հիման վրա, փորձագիտական խումբը մշակել է նաև նոր՝ հինգերորդ հակակոռուպցիոն ռազմավարության կառուցվածքը, որը կցված է սույն զեկույցին՝ որպես Հավելված 1:

3. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ

#	Ոլորտներ	Ընթացակարգային (քանակական) ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ՝	Ազդեցության մակարդակի (որակական) ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ
ՈԼՈՐՏ 1	ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ	28.57%	0%
ՈԼՈՐՏ 2	ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ	26.32%	26.32%
ՈԼՈՐՏ 3	ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ	70%	50%
ՈԼՈՐՏ 4	ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄ ԵՎ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	66.67%	33.33%
ՈԼՈՐՏ 5	ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ, ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴՐԱ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0%	0%

4. ՎԵՐՋՆԱԿԱՆ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ

Ընթացակարգային (քանակական) գնահատման ցուցանիշ 2022թ.	
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	43
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ	18
ՈՐԻՑ ՄԵԾԱՄԱՍԱՄԲ ԿԱՏԱՐՎԱԾ	9
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻ ՍԱԿԱՅՆ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԿԱՍԵՑՎԱԾ Է	1
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻ	10
ՈՐԻՑ ՉԿԱՏԱՐՎԱԾ	5
ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ	41.86%

Ազդեցության մակարդակի (որակական) գնահատման ցուցանիշ 2022թ.	
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	43
ՈՐԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է	12
ՈՐԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ	27
ՈՐԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՉԷ	4
ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ	27.91%

ՀԱՎԵԼՎԱԾ 1. 2023-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ I. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԻԿ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԵՎ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ 5-ՐԴ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

1 Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022թթ. միջոցառումների ծրագրի արդյունքները և մարտահրավերները
2. Հակակոռուպցիոն ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների գնահատականը
3. Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիայի ընկալումը և իրավիճակի գնահատականը
4. 2023-2026 թվականների հակակոռուպցիոն ռազմավարության մշակման գործընթացը

ԲԱԺԻՆ II. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 2023-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ.ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. *ՆՊԱՏԱԿ 1. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄ*

1.1. Ուղղություն 1.1. Հակակոռուպցիոն կրթության կառուցակարգերի ներդրում, կատարելագործում

1.1.1. Նախադպրոցական, միջնակարգ, նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում, ինչպես նաև հետբուհական ուսումնական հաստատություններում հակակոռուպցիոն կրթության կառուցակարգերի ներդնում, առկա կառուցակարգերի կատարելագործում
1.1.2. Հակակոռուպցիոն ոչ ֆորմալ կրթության կառուցակարգերի ներդնում, առկա կառուցակարգերի կատարելագործում (հակակոռուպցիոն կրթական ծրագրեր, ցանցեր, համայնքային կենտրոններ, դպրոցներ, լաբորատորիաներ և ակումբներ)
1.1.3. Հակակոռուպցիոն ուսումնական և մեթոդական նյութերի մշակում և տարածում (ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության)

1.2. Ուղղություն 1.2. Հանրային իրազեկման կառուցակարգերի կատարելագործում

1.2.1. Հակակոռուպցիոն հանրային հաղորդակցության և իրազեկման գործողությունների ծրագրի մշակում, հաստատում և իրականացում ըստ թիրախային ոլորտների և

խմբերի, այդ թվում՝ գործարար ոլորտի ներկայացուցիչների համար՝ իրենց իրավունքների պաշտպանության առկա մեխանիզմների վերաբերյալ։

1.2.2. Քաղաքացիական հասարակության կառույցների կարողությունների զարգացում, նրանց հետ համագործակցության միջոցով հանրային իրազեկման և վերապատրաստումների կառուցակարգերի սահմանում և դրանց իրագործում ըստ թիրախային ոլորտների և խմբերի, այդ թվում՝ գործարար ոլորտում հավաքական գործողությունների միջոցով

2. *ՆՊԱՏԱԿ 2. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ*

2.1. ԵՆԹԱՆՊԱՏԱԿ 2.1 ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՈԼՈՐՏՈՒՄ

2.1.1. Ուղղություն 2.1.1. Կոռուպցիայի կանխարգելման և հակակոռուպցիոն կրթության իրավական դաշտի կատարելագործում և վիճակագրության կառուցակարգերի սահմանում

2.1.1.1. Կոռուպցիայի կանխարգելման և հակակոռուպցիոն կրթության մասին իրավակարգավորումների միասնական ակտի մշակում

2.1.1.2. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից իրականացվող վարույթների ընթացակարգերի բարելավում, առանձնահատկությունների սահմանում

2.1.1.3. Կոռուպցիայի կանխարգելման ոլորտում վիճակագրության վարման կառուցակարգերի սահմանում

2.1.2. Ուղղություն 2.1.2. Հանրային ոլորտում կոռուպցիայի կանխարգելման ինստիտուցիոնալ կառուցակարգերի հզորացում

2.1.2.1. Հանրային ոլորտում կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գործունեության, կարողությունների ու ռեսուրսների գնահատում և կարողությունների շարունակական հզորացում՝ հանրային ոլորտում կոռուպցիայի կանխարգելման և հակակոռուպցիոն կրթության ուղղությամբ

2.1.2.2. Էթիկայի հանձնաժողովների, բարեվարքության հարցերով կազմակերպիչների և հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների ինստիտուտների շարունակական կատարելագործում

2.1.2.3. Հանրային կոռուպցիայի կանխարգելման ոլորտում քաղաքացիական հասարակության մասնագիտացված և մասնավոր կառույցներին գործառույթների մրցակցային պատվիրակման կառուցակարգերի սահմանում և իրականացում

2.1.3. Ուղղություն 2.1.3. Բարեվարքության համակարգի միասնականության ապահովում և կատարելագործում

2.1.3.1. Վարքագծի կանոնագրքերի և դրանց կիրարկման կառուցակարգերի ներդրում պետական եվ ՏԻՄ մարմիններում

2.1.3.2. Շահերի բախման, անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների գործիքակազմերի և կառուցակարգերի կատարելագործում

2.1.3.3. Նվերների ընդունման սահմանափակումների իրացման կառուցակարգերի զարգացում

2.1.3.4. Բարեվարքության պահանջների պահպանման համար պատասխանատվության միջոցների միասնականության երաշխավորում և ամրապնդում

2.1.4. Ուղղություն 2.1.4. Հանրային ոլորտում կոռուպցիայի կանխարգելման այլ կառուցակարգերի կատարելագործում

2.1.4.1. Հայտարարագրման համակարգի կատարելագործում

2.1.4.2. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման և կառավարման համակարգի ներդրում

2.1.4.3. Բարեվարքության ուսումնասիրության համակարգի կատարելագործում

2.1.4.4. Կուսակցությունների ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների ներդրում և կատարելագործում

2.2. ԵՆԹԱՆՊԱՏԱԿ 2. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ ՄԱՍՆԱՎՈՐ (ԳՈՐԾԱՐԱՐ) ՈԼՈՐՏՈՒՄ

2.2.1. Ուղղություն 2.2.1. Մասնավոր ոլորտում կոռուպցիայի կանխարգելման ինստիտուցիոնալ կառուցակարգերի հզորացում

2.2.1.1. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին մասնավոր ոլորտում կոռուպցիայի կանխարգելման գործառույթի վերապահում, համապատասխան ստորաբաժանման ստեղծում և գործարար հատվածի հետ համագործակցության իրականացման նոր (խորհրդապահական հանդիպումների) գործիքակազմի ներդրում

2.2.1.2. Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի ինստիտուցիոնալ հզորացում՝ մասնավոր հատվածի և պետական մարմինների միջև հարաբերություններում գործարար շահերի պաշտպանության համատեքստում

2.2.1.3. Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության ինստիտուցիոնալ զարգացում

2.2.1.4. Պետական գնումների իրականացման, ինչպես նաև այդ գործընթացների նկատմամբ հսկողություն իրականացնող պաշտոնատար անձանց կարողությունների հզորացում

2.2.1.5. Տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառում իրավախախտումների, ինչպես նաև հանցագործությունների քննության և բացահայտման համար պատասխանատու պաշտոնատար անձանց կարողությունների հզորացում

2.2.1.6. Մասնավոր կոռուպցիայի կանխարգելման ոլորտում քաղաքացիական հասարակության մասնագիտացված և մասնավոր կառույցներին գործառույթների մրցակցային պատվիրակման կառուցակարգերի սահմանում և իրականացում

2.2.2. Ուղղություն 2.2.2. Հակակոռուպցիոն համապատասխանությունը՝ որպես գործարար ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի միջոց

2.2.2.1. ՏՀԶԿ G20-ի պահանջներին համապատասխան Կորպորատիվ կառավարման նոր կանոնագրքի ընդունում և դրա իրացման ուղղությամբ խրախուսական միջոցառումների իրականացում

2.2.2.2. Հակակոռուպցիոն համապատասխանության կառուցակարգերի ներդրման խթանում՝ դրանց առկայությունը որպես՝ իրավաբանական անձի քրեական պատասխանատվությունը բացառող կամ մեղմացուցիչ հանգամանք նախատեսող օրենսդրական պահանջի և այլ խրախուսական նորմերի նախատեսմամբ, կառուցակարգերի ներդրում պետական և համայնքային առևտրային կազմակերպություններում և առաջին 100 խոշոր հարկատու հանդիսացող ընկերություններում

2.2.2.3. Պետական և համայնքային մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում կոռուպցիայի դեմ պայքարի այլ կառուցակարգերի կատարելագործում

2.2.3. Ուղղություն 2.2.3. Իրավաբանական անձանց իրական շահառուների բացահայտման ինստիտուտի կատարելագործում

2.2.3.1. Իրական շահառուների վերաբերյալ ներկայացված տեղեկությունների արժանահավատության ստուգման միասնական կառուցակարգերի, ստուգման մեթոդաբանության, տեխնիկական կանոնակարգերի ներդրում, տվյալների արժանահավատության հանրային վերահսկողություն

2.2.3.2. Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի՝ իրական շահառուների հայտարարագրման էլեկտրոնային համակարգի արդիականացում և կատարելագործում

2.2.3.3. Իրական շահառուների նույնականացման միասնական ստանդարտների մշակում և ստանդարտների վրա հիմնված իրական շահառուների նույնականացման մատչելի ուղեցույցների և վերապատրաստման ծրագրերի մշակում ըստ թիրախ խմբերի

2.2.4. Ուղղություն 2.2.4. Հանրային գնումների ոլորտում հակակոռուպցիոն կառուցակարգերի կատարելագործում

2.2.4.1. Հանրային գնումների ոլորտում շահերի բախման կառուցակարգերի կատարելագործում

2.2.4.2. Հանրային գնումների գործընթացում բարեվարքության կառուցակարգերի բարելավում

2.2.4.3. Գնումների գործընթացների էլեկտրոնային համակարգերի կատարելագործում հակակոռուպցիոն վերահսկողության և մշտադիտարկման նորարարական խելացի գործիքների վերազինմամբ

2.2.4.4. Գնումների պլանավորման համակարգում հակակոռուպցիոն գործիքակազմի արդիականացում և կատարելագործում

2.2.4.5. Մեկ անձից կատարվող գնումների գործընթացում կոռուպցիոն ռիսկերի մեղմացում

2.2.5. Ուղղություն 2.2.5. Տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառում հակակոռուպցիոն գործիքակազմի կատարելագործում

2.2.5.1. Տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտի էլեկտրոնային գործիքակազմի կատարելագործելում

3. ***ՆՊԱՏԱԿ 3. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՀԱԿԱԶԴՈՒՄ***

3.1. Ուղղություն 3.1. Հակակոռուպցիոն հակազդման իրավապահ մարմինների ինստիտուցիոնալ հզորացում

3.1.1. Հակակոռուպցիոն կոմիտեի ինստիտուցիոնալ հզորացում

3.1.2. Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների, ՀՀ գլխավոր դատախազության հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարչության դատախազների կոռուպցիայի դեմ պայքարի թեմաներով մասնագիտական պատրաստումների և վերապատրաստումների անցկացում

3.1.3. Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և քննության համապարփակ մեթոդիկայի և ուղեցույցների մշակում

3.1.4. Մշակված նյութերի հիման վրա մասնագիտական պատրաստումների և վերապատրաստումների անցկացում

3.1.5. Հակակոռուպցիոն, տնտեսագիտական/ֆինանսական և անհրաժեշտ այլ ոլորտներում գիտելիքներ ունեցող փորձագետների հակակոռուպցիոն հակազդման իրավապահ մարմինների աշխատանքներին ներգրավվելու մեխանիզմի ներդրում

3.2. Ուղղություն 3.2. Հակակոռուպցիոն դատարանների ինստիտուցիոնալ հզորացում

3.2.1. Հակակոռուպցիոն դատարաններին ընդդատյա գործերի շրջանակին վերաբերող հարցերի ուսումնասիրության իրականացում

3.2.2. Վճռաբեկ դատարանում քրեական պալատի և հակակոռուպցիոն պալատի կոռուպցիոն հանցագործություններ քննող ենթապալատի միջև օրենքի միատեսակ կիրառության հարցերով հակասությունների բացառմանն ուղղված գործիքակազմի մշակման և ներդրման հնարավորությունների ուսումնասիրություն

3.2.3. Հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանի, Վերաքննիչ դատարանում կոռուպցիոն բնույթի գործեր քննող դատավորների, իսկ Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի ստեղծումից հետո այդ դատարանի, Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի բոլոր դատավորների համար պարբերական վերապատրաստումների անցկացում՝ կոռուպցիոն բնույթի գործերի քննության առանձնահատկությունների, այդ թվում՝ միջազգային առկա ստանդարտների հաշվառմամբ

3.2.4. Հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանների և դատավորների կողմից քննվող ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման և կոռուպցիոն հանցագործությունների քննության գործերի առանձնահատկություններով պայմանավորված մեթոդական ուղեցույցերի մշակում

3.2.5. Հակակոռուպցիոն, տնտեսագիտական/ֆինանսական և անհրաժեշտ այլ ոլորտներում գիտելիքներ ունեցող փորձագետների հակակոռուպցիոն դատարանների աշխատանքներին ներգրավվելու մեխանիզմի ներդրում

3.2.6. Կոռուպցիոն հանցագործությունների վիճակագրության միասնական կարգի սահմանում և առկա կառուցակարգերի կատարելագործում

3.3. Ուղղություն 3.3 Կոռուպցիայի դեմ պայքարը դատական համակարգում

3.3.1. Դատարաններում գործերի բաշխման համակարգի արդիականացում

3.3.2. Միջազգային փորձի հաշվառմամբ դատավորների՝ այդ թվում հակակոռուպցիոն մասնագիտացման դատավորների, գործունեության գնահատման կառուցակարգերի կատարելագործում

3.4. Ուղղություն 3.4. Կոռուպցիոն հանցագործությունների արդյունքում ձեռք բերված, ինչպես նաև ապօրինի ծագում ունեցող գույքի վերադարձի և կառավարման կառուցակարգերի կատարելագործում

3.4.1. Կոռուպցիոն հանցագործություններով արգելադրված և (կամ) բռնագրավված, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթների արդյունքում բռնագանձված գույքի կառավարման կառուցակարգերի կատարելագործում

3.4.2. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ինստիտուտի կատարելագործում (միջազգային փորձի և Վենետիկի հանձնաժողովի իրավական դիրքորոշումների ուսումնասիրություն) և արդիականացում

3.4.3. Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային և անդրազգային հարթությունում կոռուպցիայի հակազդման մեխանիզմների ընդլայնում և արդիականացում, միջազգային փոխօգնության մեխանիզմների կատարելագործում

3.5. Ուղղություն 3.5. Ազդարարման համակարգի կատարելագործում և արդիականացում

3.5.1. Ազդարարման համակարգի մոդելի վերանայում, ինչպես նաև ազդարարման համակարգին վերաբերող օրենսդրության բարելավում

3.5.2. Ազդարարման հարցերով պատասխանատուների ընտրություն և նշանակում, մասնագիտական գործունեության համակարգում և վերապատրաստում

3.5.3. Ազդարարման դեպքերի վերաբերյալ վիճակագրություն վարելու համակարգի կատարելագործում, վիճակագրության վարման պարտադիր և միասնական կանոնների ներդրում

3.5.4. Ազդարարման էլեկտրոնային հարթակի և անվտանգության երաշխիքների կատարելագործում

3.6. Ուղղություն 3.6. Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտի կատարելագործման տեսլականի ուրվագծում

3.6.1. Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտն ուժի մեջ մտնելուց ի վեր կատարված ուսումնասիրություններով և նախաձեռնված վարույթներով վեր հանված խնդիրների ուսումնասիրություն և խնդիրների վերհանում

3.6.2. Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտի շրջանակում հակակոռուպցիոն խրախուսական կառուցակարգերի սահմանման առնչությամբ ուսումնասիրության իրականացում և ըստ անհրաժեշտության՝ օրենսդրական փոփոխությունների իրականացում

3.6.3. Իրավաբանական անձանց նկատմամբ սանկցիաներ կիրառելիս համաչափության սկզբունքի երաշխավորման առնչությամբ առկա վիճակի գնահատում և ըստ անհրաժեշտության՝ բարեփոխումների իրականացում

4. *ՆՊԱՏԱԿ 4. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ*

4.1. **Ուղղություն 4.1.** Հակակոռուպցիոն մոնիթորինգի և գնահատման կառուցակարգերի կատարելագործում

4.2. Ուղղություն 4.2. Հակակոռուպցիոն մոնիթորինգի և գնահատման ինստիտուցիոնալ համակարգի հզորացում

4.2.1. ՀՀ արդարադատության նախարարարության կարողությունների զարգացում

4.2.2. Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի կարողությունների զարգացում

4.2.3. Հակակոռուպցիոն ոլորտի ՔՀԿ-ների կարողությունների զարգացում

ԲԱԺԻՆ III. 2023-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ, ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

1. Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման գործողությունների ծրագրի համակարգման համակարգը
2. Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման գործողությունների ծրագրի մոնիթորինգի և գնահատման ընթացակարգը, գնահատման մեթոդաբանությունը

ԲԱԺԻՆ IV. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2023-2026ԹԹ. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԾԱԽՍԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

1. Ծախսերի ֆինանսական գնահատականը
2. Դոնոր կառույցների օժանդակություն և մասնակցություն